



ԱՉԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2020



The U.S. Embassy in Armenia

CENTER
FOR LEGAL
INITIATIVES
NON-GOVERNMENTAL ORGANIZATION



ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍՏԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Երևան, 2020

«Ազատագրված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունը կատարել է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Ջատագովելով ազատագրված անձանց արդյունավետ վերաինտեգրումը» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում:

Հետազոտության մեջ արտահայտված է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Զեկույցի հեղինակ՝ Նարե Հովհաննիսյան

Շապիկին դատապարտյալների ձեռքի աշխատանքների նկարներն են, որոնք արվել են 2019 թվականի հոկտեմբերի 13-ին «Արմավիր» ՔԿՀ-ում կազմակերպված «Լռության մարմնավորում» խորագրով ցուցահանդես-վաճառքի ժամանակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ	5
Ներածություն.....	6
Մեթոդաբանություն	11
Գլուխ 1	13
Ազատագրկված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման միջազգային և ներպետական իրավական կարգավորումները.....	13
Գլուխ 2	24
Ազատագրկված անձանց աշխատանքային զբաղվածությունը.....	24
<i>Աշխատանքային զբաղվածությունն ազատագրկման ընթացքում</i>	24
<i>Աշխատանքով ապահովելու հիմնախնդիրներն ազատ արձակվելուց հետո.....</i>	29
Գլուխ 3	33
Ազատագրկված անձանց կրթությունը.....	33
<i>Ազատագրկված անձանց կրթության իրավունքի օրենսդրական երաշխիքները.....</i>	33
<i>Հանրակրթության կազմակերպումն ազատագրկման ընթացքում.....</i>	34
<i>Բարձրագույն և հետբուհական կրթության կազմակերպումն ազատագրկման ընթացքում.....</i>	37
<i>Մասնագիտական ուսուցումն ազատագրկման ընթացքում.....</i>	40
<i>Մասնագիտական ուսուցումն ազատ արձակվելուց հետո</i>	42
Գլուխ 4	44
Ազատագրկված անձանց զբաղվածության, ազատ ժամանակն արդյունավետ ձևով տնօրինելու և հանգստի ապահովման միջոցները.....	44
<i>Մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումներ.....</i>	44
<i>Ինքնագործ միավորումներ.....</i>	47
<i>Գրադարաններ և ընթերցասրահներ.....</i>	48
<i>Մարզասրահներ.....</i>	51
<i>Զբոսանք.....</i>	52
Գլուխ 5	55
Ազատագրկված անձանց կապն արտաքին աշխարհի հետ	55
<i>Կարճատև տեսակցություններ</i>	55
<i>Երկարատև տեսակցություններ.....</i>	57

<i>Կարճաժամկետ մեկնումներ</i>	60
<i>Հեռախոսակապ</i>	64
<i>Տեսագանգ</i>	66
Գլուխ 6	69
Խոցելի խմբերի ազատազրկված անձանց վերասոցիալականացման առանձնահատկությունները	69
<i>Ազատազրկված կանայք</i>	69
<i>Ազատազրկված անչափահասներ</i>	72
<i>ԼԳԲՏ ազատազրկված անձինք</i>	75
<i>Ցմահ դատապարտյալներ</i>	78
<i>Հաշմանդամություն ունեցող անձինք</i>	81
Գլուխ 7	83
Վերասոցիալականացման ծրագրերի ազդեցությունն ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության և կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատման վրա	83
<i>Ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխություն</i>	83
<i>Ծանր հիվանդության հիմքով կալանքից կամ պատժից ազատում</i>	84
<i>Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում</i>	84
Գլուխ 8	88
Պրոբացիայի ծառայություն. անցում վերականգնողական արդարադատությանը և վերասոցիալականացման ամրապնդում	88
Եզրահանգումներ	92
Առաջարկություններ	97
Օգտագործված գրականության ցանկ	106

Հապավումների ցանկ

ԱԺ – Ազգային ժողով

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՆ - Արդարադատության նախարարություն

ԲՈՒՀ – Բարձրագույն ուսումնական հաստատություն

ԴՀ – Դատապարտյալների հիվանդանոց

ԵԽ - Եվրոպայի խորհուրդ

ԼԳԲՏ - Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր

ԽԿԿ - Խոշտանգումների կանխարգելման կոմիտե

ԿԳ - Կիլոգրամ

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին

ՔԿՀ - Քրեակատարողական հիմնարկ

Ներածություն

Քրեական արդարադատությունը ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում պատժիչ բնույթ է կրում, որի առանցքը հանցանքները հայտնաբերելը և հանցագործություն կատարած անձանց պատժի ենթարկելն է: Նման մոտեցումը, սակայն, ազատագրված անձին մեկուսացնում է հասարակությունից և նվազեցնում վերաինտեգրման հնարավորությունները: Մինչդեռ միջազգային փորձը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրներ անցնում են վերականգնողական արդարադատությանը, որն այլընտրանք է ավանդական պատժողական համակարգին և որի հիմնական գաղափարը իրավախախտների վերականգնումը և վերաինտեգրումն է:

Հայաստանի կառավարությունը ևս բազմիցս այն դիրքորոշումն է հայտնել, որ քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու և ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու համար կարևոր նշանակություն ունեն վերականգնողական արդարադատության սկզբունքների ներդրումը և վերասոցիալականացման գործուն համակարգի կայացումը:

Դրանով էր պայմանավորված, որ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների շրջանակում ընդունվեց «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը և սկսեց գործել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը¹:

Վերականգնողական արդարադատության սկզբունքներն ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների ծրագրում² և «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության»³ մեջ: Նշված ծրագրերով պետությունը նախատեսում է ներդնել այլընտրանքային պատիժների

¹«ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգադրություն, <http://bit.do/fpNpw>:

²«ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշում, <http://bit.do/fpNpE>:

³«ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշում, <http://bit.do/fpNpS>:

համակարգ և խափանման միջոցներ, ինչպես նաև բարձրացնել ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետությունը:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը ևս կարևորում է միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական և պրոբացիայի համակարգի կայացումը, պատժողական քաղաքականությունից անցումը վերականգնողական արդարադատության, քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորումը, պատժի նպատակների արդյունավետ իրացումը, քրեական ենթամշակույթի հաղթահարումը և կրկնահանցագործության նվազեցումը⁴:

Պետության հոչակած սկզբունքների ամրագրման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն վերջին տարիներին կատարված օրենսդրական բարեփոխումները: Այսպես,

- *2018 թվականի մայիսի 23-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որի նպատակն էր մոդելային և ընթացակարգային փոփոխություններ կատարելու միջոցով բարձրացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի արդյունավետությունը:*
- *2018 թվականի հուլիսի 12-ին ընդունվել է «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն 6 կարճատև և 2 երկարատև տեսակցության իրավունք⁵:*
- *2018 թվականի նոյեմբերի 1-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1599-Ն որոշումը,*

⁴«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, <http://bit.do/fpNqa>:

⁵«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpNqi>:

որի համաձայն մերձավոր ազգականների հետ կարճատև տեսակցության օրյեկտիվ հնարավորություն չունեցող անձանց, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին ամսվա ընթացքում 2 անգամ մինչև 20 րոպե տևողությամբ տեսազանգից օգտվելու հնարավորություն է ընձեռվել⁶:

- 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը, ինչը մարդասիրական քայլ էր և իրականացվեց 2018 թվականի քաղաքական իրադարձությունների ներքո⁷՝ արդարադատության, ներառյալ քրեակատարողական համակարգից հանրային դժգոհությունը լիցքաթափելու և համակարգի նկատմամբ որոշակի վստահություն ձևավորելու նպատակով⁸:
- 2019 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունվել է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է օտարերկրացի կալանավորված անձանց կամ դատապարտյալներին, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիներին առանց ավելորդ ընթացակարգերի ներգրավել տարբեր աշխատանքներում՝ նպատակ ունենալով բարձրացնել նրանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետությունը⁹:
- 2020 թվականի հունվարի 22-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագիծը, որի նպատակը քրեական ենթամշակույթի հաղթահարումն է և դրա նկատմամբ զրո հանդուրժողականության ձևավորումը¹⁰:

2019 թվականին կատարված մի շարք այլ օրենսդրական փոփոխությունների նպատակը ևս քրեակատարողական ոլորտում իրավիճակի բարելավումն էր¹¹: Այսպես,

⁶«ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1599-Ն որոշում, <http://bit.do/fpNqB>:

⁷«Արտակ Ջեյնալյան. Մեծ համաներում է լինելու», «Ազատություն ռադիոկայան», <http://bit.do/fpNqM>:

⁸«Համաներման մասին օրենքի անհրաժեշտության և սկզբունքների մասին», «Հելսինկյան ասոցիացիա» հկ, <http://bit.do/fnwfU>:

⁹«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpNra>:

¹⁰«ԱԺ-ն ամբողջությամբ ընդունեց «օրենքով գողերի» վերաբերյալ օրենքի նախագիծը», «Արմենպրես», <http://bit.do/fp3x4>:

¹¹«Արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն», <http://bit.do/fpNrP>:

- *Դատապարտյալին քրեակատարողական հիմնարկներում տեղաբաշխելու գործընթացում հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, թե տվյալ հիմնարկում պատիժ կրելու դեպքում արդյոք երաշխավորվում է նրա՝ մերձավոր ազգականների հետ կապը:*
- *Արտաքին աշխարհի հետ հաղորդակցման իրավունքի երաշխավորման նպատակով կալանավորված անձանց տրամադրվում է նաև երկարատև տեսակցություն:*
- *Վերացվել է կարճաժամկետ մեկնում չտրամադրելը միայն անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանի հետ կապելու օրենսդրական կանոնը:*
- *Վերացվել է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանցից անջատ պահելու օրենսդրական կանոնը:*
- *Յմահ ազատազրկման դատապարտված անձանց բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրելու հնարավորություն է տրվել:*
- *Պատժախուց տեղափոխելու դեպքում ազատազրկված անձանց մի շարք իրավունքներ (օրինակ՝ տեսակցությունները, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը, հեռախոսակապից օգտվելը և այլն) ոչ թե ենթարկվում են մեխանիկական սահմանափակման, այլ կարող են սահմանափակվել միայն բավարար հիմքերի առկայության դեպքում:*

Ինչպես տեսնում ենք, քրեական արդարադատության ոլորտում իրավիճակի բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկվում են: Սակայն վերականգնողական արդարադատության սկզբունքները կյանքի կոչելու և ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր է, որպեսզի իրականացված քայլերն առաջընթաց արձանագրեն ոչ միայն օրենսդրական կարգավորումների մակարդակում, այլև համապատասխան ծրագրերի և ընթացակարգերի միջոցով ապահովվի դրանց գործնական կիրառումը, ինչն էլ դարձել է «Ազատազրկված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտության առանցքը:

Հետազոտության մեկնակետն այն է, որ անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումներից և հոչակագրային ձևակերպումներից անցնել գործուն քայլերի՝ մշակելով և կյանքի կոչելով այնպիսի ծրագրեր, որոնք իրապես կնպաստեն ազատազրկված անձանց զբաղվածության ապահովմանը և ըստ այդմ՝ արդյունավետ վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի հանցագործությունների կանխարգելմանը և կրկնահանցագործությունների նվազեցմանը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազատազրկված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և ներկայացնել իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության խնդիրներն են՝

- *Աշխատանքային, կրթական և զբաղվածությունը ապահովող ծրագրերի, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի ուսումնասիրության արդյունքում վեր հանել ազատազրկված անձանց վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը խոչընդոտող պատճառները:*
- *Ուսումնասիրել վերասոցիալականացման ծրագրերի ազդեցությունն ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության և կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատման վրա:*
- *Ուսումնասիրել խոցելի խմբերի ազատազրկված անձանց վերասոցիալականացման առանձնահատկությունները:*
- *Վերլուծել պրոբացիայի ծառայության գործունեության ձեռքբերումները և հիմնախնդիրները:*
- *Միջազգային իրավական չափանիշների և փորձի հետ համեմատության հիման վրա մշակել առաջարկություններ:*

Ազատազրկված անձանց զբաղվածության ապահովմանը, մասնագիտական և աշխատանքային կարողությունների զարգացմանը, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը, հետագայում նաև վերասոցիալականացմանը նպաստում են աշխատանքային և կրթական զբաղվածությունը ապահովող ծրագրերը, տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը, ինքնագործ միավորումների գործունեությունը, գրադարանների, ընթերցասրահների, մարզասրահների առկայությունը և զբոսանքի հնարավորությունը, արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը, ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխությունը, ինչպես նաև կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատման հնարավորությունները: Վերականգնողական արդարադատության անցման և վերասոցիալականացման ամրապնդման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի պրոբացիայի ծառայությունը: Ի դեպ, խոցելի խմբերի ազատազրկված անձինք բոլոր ազատազրկված անձանց համար ընդհանուր խնդիրներից բացի բախվում են նաև իրենց որոշակի կարգավիճակով պայմանավորված խնդիրների, որոնք պետք է հատուկ ուշադրության արժանանան վերասոցիալականացման ընթացքում: Ըստ այդմ՝ հետազոտության մեջ ազատազրկված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման վերաբերյալ միջազգային իրավական չափանիշների և փորձի, ինչպես նաև ներպետական կարգավորումների վերլուծությունից հետո առանձին բաժիններով անդրադարձ է կատարվում հետևյալ առանցքային թեմաներին՝

- Ազատագրկված անձանց աշխատանքային զբաղվածությունը,
- Ազատագրկված անձանց կրթությունը,
- Ազատագրկված անձանց զբաղվածության, ազատ ժամանակն արդյունավետ ձևով տնօրինելու և հանգստի ապահովման միջոցները,
- Ազատագրկված անձանց կապն արտաքին աշխարհի հետ,
- Վերասոցիալականացման ծրագրերի ազդեցությունն ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության և կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատման վրա,
- Խոցելի խմբերի ազատագրկված անձանց վերասոցիալականացման առանձնահատկությունները,
- Պրոբացիայի ծառայություն. անցում վերականգնողական արդարադատությանը և վերասոցիալականացման ամրապնդում:

Առաջարկությունների մշակման հիմքում դրվել են միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված չափանիշները¹²:

Մեթոդաբանություն

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են 2018 թվականի հունվարից մինչև 2019 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում ազատագրկված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման ուղղությամբ իրականացված ծրագրերը և միջոցառումները:

Նշված ծրագրերին և միջոցառումներին առնչվող հիմնախնդիրները վերհանելու, իրավիճակը համակողմանիորեն վերլուծելու և գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք է բերվել տեղեկատվություն ստանալու գրավոր հարցումների միջոցով:

Ընդհանուր առմամբ ուղարկվել է 85 գրավոր հարցում, որից 32-ը՝ ՀՀ արդարադատության նախարարությանը, 28-ը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներին, 5-ը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, 3-ը՝ զբաղվածության պետական գործակալությանը: 2-ական հարցումներ են ուղարկվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններին և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը:

Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» և «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ներին, «Աջակցություն դատապարտյալին»

¹²Միջազգային իրավական փաստաթղթերը հասանելի են «Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի» կայքէջում՝ <https://www.apr.ch/detention-focus/>:

հիմնադրամին, դատախազությանը, ոստիկանությանը, վիճակագրական կոմիտեին, ազգային ժողովին, Շիրակի մարզպետարանին, Ուրարտու, Հյուսիսային և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարաններին ուղարկվել են 1-ական գրավոր հարցումներ:

Հարցումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հետևյալ հղումով՝ <http://bit.do/fqCC4>: Ծանոթագրությունների մեջ նշված են միայն հարցումների թվակիր համարները:

Հարցումների արդյունքում ձեռք բերված տվյալները գուգակցվել են օրենսդրության և այլ փաստաթղթերի վերլուծության հետ:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը՝

- *Հետազոտության թեմաներին առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտեր, նախագծեր, ծրագրեր և ռազմավարություններ,*
- *Հետազոտության թեմաներին առնչվող հետազոտություններ, զեկույցներ, վերլուծություններ, հոդվածներ,*
- *Էլեկտրոնային մամուլի հրապարակումներ,*
- *Միջազգային իրավական փաստաթղթեր և հետազոտություններ:*

Գլուխ 1

Ազատագրկված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման միջազգային և ներպետական իրավական կարգավորումները

Ազատագրկումը, առավել ևս՝ երկարաժամկետ, բացասաբար է անդրադառնում մարդու կյանքի վրա: Անձը կորցնում է սոցիալական հմտությունները և կապերը ընտանիքի ու հասարակության հետ, դուրս է մնում աշխատաշուկայից և տնտեսական գործունեությունից: Դա հանգեցնում է փորձի, մասնագիտական հմտությունների և կարողությունների կորստի, նվազեցնում է աշխատանք ունենալու կամ ազատվելուց հետո այն ձեռք բերելու հնարավորությունը: Այդ ամենն իր բացասական հետևանքներն է ունենում ազատագրկված անձի և նրա ընտանիքի եկամտի և նյութական բարեկեցության վրա:

Փաստորեն, այնպիսի գործոնները, ինչպիսիք են աղքատությունը, հասարակության կողմից խտրական վերաբերմունքը և պիտակավորումը, ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապի խզումը, քրեական ենթամշակույթի մեջ ներքաշվելը, առողջապահական և խնամքի ծառայությունների ոչ բավարար հասանելիությունը կամ բացակայությունը, վատթարացնում են ազատագրկված անձանց վիճակը և նվազեցնում վերասոցիալականացման հնարավորությունները:

Ուստի պետությունը, ազատագրկված անձանց համար հենց սկզբից հատուկ կրթական ծրագրեր, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, զբաղվածությունը ապահովող միջոցառումներ, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ուղղված համակարգային և շարունակական մեխանիզմներ մշակելով և կիրառելով, նպաստում է ազատագրկման բացասական հետևանքները հնարավորինս նվազեցնելուն, նրանց՝ պահանջարկ ունեցող մասնագիտություն և կայուն եկամուտ ունենալուն, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը և, ի վերջո, կրկնահանգագործության ռիսկերի նվազեցմանը:

Ազատագրկված անձանց սոցիալական վերականգնման և վերաինտեգրման համար համապատասխան երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունն ամրագրված է միջազգային մի շարք իրավական փաստաթղթերում՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Բանտային կանոններ, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ)

համապատասխան նորմեր և այլն: Նվազագույն բանտային կանոնները, օրինակ, սահմանում են, որ ազատազրկման դատապարտելու նպատակը հասարակության պաշտպանությունը և հանցագործությունների կանխումն է, իսկ այդ նպատակներին կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե ազատազրկման ժամկետն ավարտելով և հասարակության մեջ կանոնավոր կյանքի վերադառնալով՝ իրավախախտը ոչ միայն պատրաստ, այլև ունակ կլինի ենթարկվել օրենսդրությանը և ապահովել իր գոյությունը: Ուստի հատկապես ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ընթացքում պետք է նրանց մեջ օրենքների ենթարկվելու և ազատվելուց հետո սեփական գոյությունն ապահովելու ձգտում ձևավորել՝ ձեռնարկելով անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ներառյալ ուսուցումը, մասնագիտական պատրաստումն ու կողմնորոշումը, աշխատանքի տեղավորման բնագավառում խորհրդատվությունը¹³:

Ազատազրկման ողջ ընթացքում հնարավոր խնդիրները կանխելու և բացասական հետևանքները հնարավորինս նվազեցնելու համար պետք է ապահովել ազատազրկված անձանց զբաղվածությունը՝ նրանց ընձեռելով աշխատանքով, կրթությամբ, սպորտով զբաղվելու և այլ հնարավորություններ: Ազատազրկված անձանց համար իրականացվող ծրագրերը երկակի նշանակություն ունեն: Դրանք ազատազրկված անձին հնարավորություն են տալիս գնահատել սեփական անձը, իսկ հիմնարկի վարչակազմին՝ գնահատելու ազատազրկված անձի վարքագծի փոփոխությունները, դրական և բացասական կողմերը: Յուրաքանչյուր դեպքում, սակայն, անհրաժեշտ է, որպեսզի ազատազրկված անձը գիտակցի այդ ծրագրերի կարևորությունը և ցանկանա մասնակցել: Վերասոցիալականացման ծրագրերը պետք է ապահովեն որոշ երաշխիքներ: Մասնավորապես՝

- Ֆիզիկական առողջության պահպանում,
- Մտավոր առողջության պահպանում և հոգեբանական աջակցության տրամադրում,
- Կախվածություններից բուժում,
- Վարքագծի և մոտեցումների փոփոխություն,
- Արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու հնարավորություն,
- Կրթության հնարավորություն,
- Զբաղմունքի և աշխատանքի հասանելիության հնարավորություն,
- Կարգավիճակի փոփոխության օրենսդրական երաշխիքներ (օրինակ՝ պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն):

¹³«Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ», <http://bit.do/fpTDX>, Կանոններ 58-61:

Կրկնահանցագործության կանխարգելումը և հանցագործություն կատարած անձանց վերաինտեգրումը լավագույնս հնարավոր է իրականացնել դատապարտյալների հետ վարվեցողության ծրագրերի իրականացման միջոցով: Ընդ որում, դատապարտյալների հետ վարվեցողությունը պետք է ուղղված լինի իրենց անձի նկատմամբ հարգանքի և պատասխանատվության բարձրացմանը՝ աշխատանքի, կրթության, արդյունավետ ժամանցի ապահովման, վերապատրաստումների, սոցիալ-հոգեբանական աշխատանքների և բարոյական արժեհամակարգի ձևավորման միջոցով:

Հանցագործություն կատարած անձանց բնորոշ է խաթարված ճանաչողությունը: Ճանաչողական ծրագրերը, ըստ այդմ, հանցագործություն կատարած անձանց սովորեցնում են հասկանալ սեփական ես-ը՝ այն կապելով քրեական վարքագծի հետ: Այսկերպ դատապարտյալները կարող են ուղղել սեփական մտածողությունը և կանխել ռիսկային մոտեցումները: Նման ծրագրերը նաև ներառում են վերապատրաստումներ, զայրույթի կառավարում և այնպիսի մոտեցումներ, որոնք նպաստում են սոցիալական կապերի զարգացմանը և միջանձնային հարաբերությունների բարելավմանը, ինչը, վերջին հաշվով, կարող է հանգեցնել կրկնահանցագործություն կատարելու ռիսկերի նվազեցմանը¹⁴:

Ազատվելուց հետո իրականացվող վերասոցիալականացման միջոցառումները պետք է նպաստեն բանտային կյանքից հասարակություն անցմանը: Ազատազրկման վայրից հասարակություն անցնելու ժամանակահատվածը յուրաքանչյուր ազատազրկված անձի համար լի է մարտահրավերներով: Ուստի պետք է մշակվեն և կիրառվեն ազատ արձակվելուց առաջ և հետո տրամադրվող աջակցության հատուկ ծրագրեր, և հիմնարկի վարչակազմը այդ նպատակով պետք է համագործակցի համապատասխան կառույցների հետ:

Ազատազրկված անձինք իրենց ամենօրյա կյանքի նկատմամբ վերահսկողություն չունեն և ստիպված համակերպվում են բանտային միջավայրին: Հասկապես այն անձինք, ովքեր երկար ժամանակով են մնում անազատության մեջ, ունենում են անկախության, ինքնագնահատականի և նախաձեռնողականության պակասի կամ կորստի զգացողություններ: Ի տարբերություն բանտային միջավայրի, որտեղ ամեն ինչ որոշվում և կազմակերպվում է նրանց փոխարեն, ազատ արձակվելուց հետո ազատազրկված անձինք պետք է սկսեն հասարակության մեջ ինքնուրույն կազմակերպել իրենց կյանքը: Այս առումով մի շարք անձինք իրենց առօրյան կազմակերպելիս բախվում են լուրջ խնդիրների, ինչը արդյունավետ սոցիալական աջակցություն է պահանջում: Ամենօրյա կյանքի և փոխհարաբերությունների կանոնակարգման

¹⁴D. A. Andrews, J. Bonta and R. D. Hoge, “Classification for effective rehabilitation: rediscovering psychology”, *Criminal Justice and Behavior*, vol. 17, No. 1 (1990).

ծրագրերն ազատագրված անձանց օգնում են ձեռք բերել հաղորդակցության, խնդիրների լուծման և կոնֆլիկտների հաղթահարման հմտություններ, նրանց մեջ ձևավորում են ներքին հանդուրժողականություն և համբերություն, իմպուլսիվության և բարկության կառավարում և, ի վերջո, աջակցում են հեշտ ադապտացիային (հարմարում) հասարակության մեջ:

Ազատ արձակվելուց հետո հանդիպող բարդություններից մեկը ապրելու վայրի բացակայությունն է, ինչին հաջորդում են աշխատանք և ֆինանսական եկամուտներ ունենալու հետ կապված խնդիրները: Ուստի անհրաժեշտ է պատժի կրման ժամկետի ավարտից առաջ քայլեր ձեռնարկել դատապարտյալի՝ հասարակություն հեշտ վերադարձը ապահովելու համար: Այս առումով պետք է ապահովել, որ դատապարտյալները ստանան բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ունենան ապրելու վայր և աշխատանք, առաջին անհրաժեշտության հագուստ, բավարար միջոցներ՝ իրենց բնակավայր հասնելու և ազատվելուն հաջորդող ժամանակահատվածում իրենց ծախսերը հոգալու համար: Սոցիալական վերաինտեգրմանն աջակցող միջոցառումները, ըստ այդմ, պետք է սկսվեն դեռևս ազատագրվման վայրից, ինչը ներառում է նաև համայնքային ծառայությունների և բանտում իրականացվող ծրագրերի միջև կայուն համագործակցություն՝ ապահովելու համար մատուցվող ծառայությունների շարունակականությունը: Ծրագրերի շարունակականությունը հնարավոր է ապահովել բանտի վարչակազմի և համայնքային ծառայությունների ակտիվ համագործակցության միջոցով:

Ազատ արձակվող նախկին դատապարտյալների համար հիմնական խոչընդոտներից մեկը ապրելու վայրի բացակայությունն է, ինչը երկակի նշանակություն ունի: Այն կարող է դառնալ ինչպես կրկին հանցագործություն կատարելու պատճառ, այնպես էլ աշխատանք գտնելու նախապայման: Ընդ որում, ազատ արձակվելուց հետո աշխատանքով ապահովվելը կարող է դառնալ բնակարան ունենալու նախապայման: Ուստի ազատ արձակվելուց առաջ իրականացվող անհատական պլանավորման ծրագրերը պետք է ներառեն ապրելու վայրի հարցում աջակցության տրամադրումը, ինչը լավագույնս իրականացվում է համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կամ հետևյալ եղանակներով՝

- *հանրային միջոցների հաշվին վարձակալության հնարավորություն,*
- *ընկերների հետ համաբնակեցում,*
- *հանրային միջոցների հաշվին բնակարանով ապահովում,*
- *հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի միջոցով բնակարանի և ապրելու վայրի հարցում աջակցություն:*

Զբաղվածություն և աշխատանք ունենալը նվազեցնում է կրկնահանցագործություն կատարելու ռիսկը: Ցավոք, դատապարտյալների

գերակշիռ մասը ազատ արձակվելուց հետո աշխատանք գտնելու հարցում բախվում է դժվարությունների: Ուստի ի թիվս կրթական և այլ ծրագրերի, ազատագրկման ընթացքում դատապարտյալներին պետք է նախապատրաստել աշխատաշուկա մտնելուն, ինչը ներառում է աշխատանք փնտրելու կարողությունների զարգացում, հարցազրույցի մասնակցելու կարողությունների խթանում, աշխատանքի հետ կապված սթրեսի հաղթահարում և այլն:

Այս առումով կարևոր է ուշադրություն դարձնել ազատագրկված անձանց վերաացիալականացման ծրագրերի առանձին երկրների հաջողված փորձի օրինակներին:

Օրինակ, Իռլանդիայում Բանտային ծառայության և Պրոբացիայի խորհրդի կողմից հիմնադրվել է Prison Arts Foundation-ը (Բանտային արվեստի հիմնադրամ), որի նպատակն է նպաստել ներկա և նախկին ազատագրկված անձանց և երիտասարդ իրավախախտների հասանելիությանը արվեստին: Հիմնադրամը մշակութային տարբեր ծրագրեր, հանդիպումներ և քննարկումներ իրականացնելու միջոցով բարձրացնում է արվեստի դերը հանցագործություն կատարած անձանց շրջանում: Նշված նախաձեռնությունները օգնում են, որպեսզի հանցագործություն կատարած անձինք բացահայտեն իրենց ստեղծագործական ունակությունները, ինչն էլ նպաստում է վերջիններիս մեջ ինքնավստահության ձևավորմանը¹⁵:

Մեծ տարածում ունեն կենդանիների խնամքի ծրագրերը: Անձինք, ովքեր անազատության մեջ հաղորդակցվում են կենդանիների հետ և պատասխանատվություն են կրում նրանց խնամքի համար, ազատության մեջ փորձում են ավելի դրական վարք դրսևորել: Կենդանիների նկատմամբ խնամքը օգնում է ազատագրկված անձանց մեջ պատասխանատվության, հարգանքի և գնահատանքի զգացողություն ձևավորել կյանքի և հասարակության նկատմամբ: Նմանատիպ ծրագրերի միջոցով ազատագրկված անձինք նոր կարողություններ և հմտություններ են ձեռք բերում, ինչը հետագայում նպաստում է սեփական անձի նկատմամբ օգտակարության զգացողության ձևավորմանը:

Որոշ ծրագրեր հիմնվում են կենդանիների օգնությամբ ուղեկցվող թերապիաների վրա: Վիետնամում, օրինակ, երիտասարդ իրավախախտների դպրոցն ունի հատուկ փոքր կենդանաբանական այգի, որտեղ պահվող կենդանիների խնամքի համար կոլեկտիվ պատասխանատվություն կրում են դպրոցի հաճախորդները¹⁶:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում իրականացված ուղղիչ կրթական դասընթացների գնահատումը ցույց է տվել, որ կրթական ծրագրերը նպաստում են

¹⁵ Prison Arts Foundation, <http://www.prisonartsfoundation.com/>.

¹⁶ G. A. Furst, Animal Programs in Prison: A Comprehensive Assessment (Boulder, Colorado, First Forum Press, 2011).

կրկնահանգագործությունների նվազեցմանը և ազատվելուց հետո աշխատանք գտնելու հավանականությանը: Պարզվել է նաև, որ այդ ծրագրերը քիչ ծախսատար են¹⁷:

Ուկրաինայում որոշ կին դատապարտյալներ մասնակցում են առցանց հեռահար կրթական ծրագրերի և վերապատրաստումների, ինչը մասնակիցներին հնարավորություն է տալիս օգտվելու դասընթացների բոլոր առավելություններից, բացի դասընթացավարների և մնացած մասնակիցների հետ կենդանի հաղորդակցությունից¹⁸:

Միացյալ Թագավորությունում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դատապարտյալները նոր հանցագործություն քիչ են կատարում, և նրանց սոցիալական վերաինտեգրումը ավելի հեշտ է տեղի ունենում, եթե նրանց ազատազրկման ընթացքում շատ են տեսակցության գալիս կամ նրանք մասնակցում են աշխատանքային խմբակների, հանդիպում են պրոբացիայի աշխատակիցների հետ և անցնում են տուժողների վերաբերյալ դասընթացներ¹⁹:

Նորվեգիայում կառավարությունը ընդունել է վերասոցիալականացման երաշխիքների կանոնակարգում: Վերջինս սահմանում է, որ ազատ արձակվելուց հետո նախկին դատապարտյալը պետության կողմից մի շարք ծառայություններ է ստանում, ներառյալ ապրելու վայրի, աշխատանքի կամ կրթության հնարավորության, ֆինանսական պարտքերի վերաբերյալ խորհրդատվություն²⁰:

Միացյալ Թագավորությունում ներդրվել է Անձնական աճի համակարգը, որի նպատակն է դատապարտյալներին օգնել աշխատանք գտնելու հարցում: Համակարգը գնահատում է դատապարտյալների աշխատելու հավանականությունը և օգնում կազմել համապատասխան պլան, որի շրջանակներում կապեր են հաստատվում մասնավոր և հանրային այն ոլորտների հետ, որոնք կարող են աջակցել աշխատանք գտնելու հարցում:

ՀՀ ներպետական օրենսդրությունը նույնպես հիմքեր է նախատեսում ազատազրկված անձանց ուղղման, սոցիալական վերականգնման և վերաինտեգրման համար:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ պատժի նպատակը սոցիալական արդարությունը վերականգնելը, պատժի ենթարկված անձին ուղղելը և հանցագործությունները կանխելն է²¹: Առավել հստակեցնելով վերոնշյալ դրույթը`

¹⁷RAND Corporation (2013): Evaluating the Effectiveness of Correctional Education – A Meta-Analysis of Programs that Provide Education to Incarcerated Adults, <http://bit.do/fqCTS>.

¹⁸ "Introductory Handbook on the Prevention of Recidivism and the Social Reintegration of Offenders", United Nations Office on Drugs and Crime, Vienna, 2018, <http://bit.do/fpPyJ>, page 34.

¹⁹"Factors linked to reoffending: a one-year follow-up of prisoners who took part in the Resettlement Surveys 2001, 2003 and 2004", Research Summary 5, Chris May, Nalini Sharma and Duncan Stewart , United Kingdom, Ministry of Justice, 2008, <http://bit.do/fqCT7>.

²⁰ Norwegian Ministry of Justice and Public Security, Correctional Services Department, February 2012.

²¹ ՀՀ քրեական օրենսգիրք, <http://bit.do/fpNjN>, հոդված 48:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է, որ դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով²²:

Քրեակատարողական օրենսգիրքը ուղղիչ հիմնարկներում կանոնակարգի և այն ապահովելու միջոցների վերաբերյալ համապատասխան դրույթները ամրագրելու համատեքստում որոշակիորեն ընդլայնում է դատապարտյալների վերասոցիալականացման ուղղությունները և նպատակները²³: Այսպես, ուղղիչ հիմնարկներում սահմանված կանոնակարգի նպատակն է՝

- *ապահովել դատապարտյալին պահելու մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններ,*
- *հնարավորինս նվազեցնել ազատազրկման և ազատության մեջ գտնվելու միջև եղած հոգեբանական տարբերությունները,*
- *ապահովել կապը ընտանիքի և արտաքին աշխարհի հետ,*
- *աջակցել դատապարտյալին՝ նրանում ձևավորելու և զարգացնելու այնպիսի հմտություններ և ունակություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպելու հետագա կյանքը:*

Ուղղման և հետագա վերասոցիալականացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ազատազրկված անձանց հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, նրանց աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նմանատիպ այլ զբաղվածությունը և արտաքին աշխարհի հետ կապը, որոնց ապահովման անհրաժեշտ երաշխիքները սահմանում են ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը:

Ազատազրկված անձանց վերը թվարկված և մի շարք այլ իրավունքների իրացման ընթացակարգերը սահմանում է «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1543-Ն որոշումը²⁴, որն ընդունվել է 2006 թվականի օգոստոսի 3-ին: Ազատազրկված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելու, այդ նպատակով քրեակատարողական հիմնարկներում գործող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների գործունեության կարգը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարի թիվ

²² ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, <http://bit.do/fpNjv>, հոդված 16:

²³ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, <http://bit.do/fpNjv>, հոդված 70:

²⁴ «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, <http://bit.do/fpNjC>:

279-Ն հրամանը²⁵: Այս հրամանի ընդունմամբ ուժը կորցրած ճանաչվեց 2008 թվականի թիվ 44-Ն հրամանը, որով դրվել էր ազատագրված անձանց հետ իրականացվող սոցիալական և հոգեբանական վերականգնման ծրագրերի հիմքը:

Նշված ծրագրերի նպատակը հանցագործություն կատարած անձին աջակցություն և վերահսկողություն տրամադրելն է՝ քրեածին վարքագիծը բացառելու, նոր հանցագործություն կատարելը կանխելու և արդյունավետ վերասոցիալականացումը ապահովելու համար: Սովորաբար այդ ծրագրերը իրականացվում են 3 փուլով՝

- *վերասոցիալականացման ծրագրեր ազատագրված ընթացքում,*
- *ազատ արձակվելուն նախապատրաստող և ազատվելուց հետո իրականացվող վերասոցիալականացման ու խնամքի ծրագրեր,*
- *համայնքային ծրագրեր:*

Դրական արդյունք արձանագրելու համար վերաինտեգրման աշխատանքները պետք է սկսել ազատագրված վաղ փուլից՝ բացահայտելով քրեածին վարքագծին նպաստող գործոնները և համալիր կերպով գնահատելով ազատագրված անձանց կարիքները: Ի լրումն այս աշխատանքների, դատապարտյալների համար պետք է նաև մշակվեն պատժի կրման անհատական պլաններ՝ հոգեբանների, սոցիալական աշխատողների և այլ պատասխանատու անձանց մասնակցությամբ:

Ներպետական կարգավորումները նախատեսում են նաև կալանավորված անձանց և դատապարտյալների հետ փուլային աշխատանքներ իրականացնելու որոշ ընթացակարգեր:

Այսպես, ազատագրված անձի պատիժ կրող այն դատապարտյալներին, որոնց պատժի կրման ավարտին մնացել է 6 ամիս, հիմնարկի վարչակազմը գրավոր և անհատապես ծանուցում է ամենամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու իրենց իրավունքի մասին և ներկայացնում «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մասնագիտական ուսուցման ծրագրերը: Ցանկություն հայտնելու դեպքում հիմնարկի վարչակազմը դատապարտյալների տվյալները փոխանցում է օրենքով սահմանված լիազորված մարմին՝ նշված ծրագրերում նրանց ընդգրկելու նպատակով²⁶:

²⁵«Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին և ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման, <http://bit.do/fpNfL>:

²⁶ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, <http://bit.do/fpNfZ>, հոդված 89, մաս 3:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը պատժից ազատվող դատապարտյալի աշխատանքը և կենցաղը կարգավորելու հարցերում նախատեսում է այլ աջակցություն ևս: Մասնավորապես,

- Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի սոցիալական վերականգնման հարցերով համագործակցում է հասարակական և այլ կազմակերպությունների ու մարմինների հետ: Ազատմանը նախապատրաստվելու նպատակով դատապարտյալի հետ վաղօրոք անցկացվում է համապատասխան աշխատանք:
- Ազատագրկման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ տեղական ինքնակառավարման և զբաղվածության պետական ծառայությանը տեղեկացնում է դատապարտյալի՝ պատժից առաջիկա ազատման, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակարանի առկայության մասին:
- Կենսաթոշակային տարիքի հասած կամ 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող դատապարտյալին, իր խնդրանքով և պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի ներկայացմամբ, սոցիալական ապահովության մարմիններն ուղարկում են հաշմանդամություն ունեցող անձանց ծերերի համար նախատեսված հիմնարկներ:
- Հիմնարկի վարչակազմը պատժից ազատվող անձին ապահովում է մինչև իր բնակության վայր հասնելու նպատակով անվճար ուղևորությամբ կամ դրա համար անհրաժեշտ գումարով՝ առնվազն ՀՀ տարածքում, դրա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքով, ինչպես նաև միջոցների բացակայության դեպքում՝ սեզոնային անհրաժեշտ հագուստով: Նրան կարող է տրամադրվել նաև միանվագ դրամական օգնություն:
- Պատժից ազատվող և առողջական վիճակի պատճառով խնամքի կարիք ունեցող, հղի, մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձին, ինչպես նաև անչափահասին պատժից ազատելիս պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն ազատվելու մասին նախօրոք հայտնում է նրա ազգականներին կամ այլ անձանց, իսկ այդպիսիք չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցուցաբերում է ուղղիչ հիմնարկի վարչակազմը²⁷:

Հատկանշական է, որ ազատագրված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները ևս իրականացվում են փուլերով:

Այսպես, կալանավորված անձանց հետ նշված աշխատանքները իրականացվում են երկու փուլով՝ նախնական և ընթացիկ: Նախնական փուլում կալանավորված անձին հիմնարկ ընդունելուց անմիջապես հետո իրականացվում են հոգեբանական աշխատանքներ՝ ուղղված սթրեսածին հոգեվիճակների

²⁷ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, <http://bit.do/fpNJZ>, հոդված 121-122:

հաղթահարմանը: Ուսումնասիրվում և գնահատվում են կալանավորված անձի կարիքները և դրա հիման վրա բացահայտված առավել հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ են իրականացվում:

Ընթացիկ փուլում կազմակերպվում են կալանավորված անձանց միջև կոնֆլիկտային հարաբերությունների կանխարգելմանը և կարգավորմանն ուղղված անհատական կամ խմբակային աշխատանքներ: Առավել բարձր հոգեկան լարվածություն կամ ագրեսիվ վարք ունեցող կալանավորված անձանց հետ իրականացվում են հատուկ աշխատանքներ: Այս փուլում նաև օժանդակում են կալանավորված անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապի ստեղծմանը, պահպանմանը և զարգացմանը, աջակցում են կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Ուսումնական գործընթացը իրականացնելու և դրա շարունակականությունն ապահովելու նպատակով կապ է հաստատվում համապատասխան ուսումնական հաստատության հետ, միջոցներ են ձեռնարկվում հնարավորության դեպքում կրթությունը հիմնարկում կազմակերպելու ուղղությամբ:

Դատապարտյալների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքները նախատեսված են կալանք, որոշակի ժամկետով և ցմահ ազատազրկում պատիժների կատարման ժամանակ և իրականացվում են երեք փուլով՝ նախնական, ընթացիկ և ավարտական: Բոլոր երեք փուլերի համար նախատեսված են ընդգրկուն միջոցառումներ ու գործողություններ՝ ուղղված ազատազրկման դատապարտված անձանց սոցիալական վերականգնմանը և վերաինտեգրմանը:

Օրինակ, ընթացիկ փուլում ուսումնասիրվում, ախտորոշվում և գնահատվում են դատապարտյալի սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունները, որից հետո կազմվում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր: Դատապարտյալների շրջանում հնարավոր կոնֆլիկտների կանխարգելման և լուծման ուղղությամբ անհատական և խմբային խորհրդատվություն է տրամադրվում, նպատակաուղղված աշխատանքներ են իրականացվում բացասական հակում ունեցող դատապարտյալների խմբերի հետ: Միջոցներ են ձեռնարկվում դատապարտյալներին կրթությամբ, աշխատանքով և այլ զբաղվածությամբ ապահովելու, ինչպես նաև ստեղծագործ աշխատանքի արդյունքները ցուցադրելու և իրացնելու ուղղությամբ:

Ավարտական փուլում կազմվում է դատապարտյալին ազատման նախապատրաստելու ծրագիրը: Միջոցառումներ են իրականացվում նաև պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալին հասարակությանը վերաինտեգրելու, նրան շրջապատող միջավայրում գտնվող անձանց հետ փոխհարաբերությունների բարելավման, նրան նախկին բնակության վայրում հաշվառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, մշտական բնակության վայր

չունեցող անձանց բնակարանով (կացարանով) ապահովելուն աջակցելու ուղղությամբ²⁸:

Ստորև առավել մանրամասն են ներկայացվում նշված ծրագրերի և միջոցառումների ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ ընթացակարգային բացերը և գործնական կիրառման խոչընդոտները, ինչը, ի վերջո, թույլ է տալիս եզրահանգելու, որ ազատագրված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման հարցը, չնայած ընդգրկուն օրենսդրական կարգավորումներին, արդյունավետ ձևով չի կազմակերպվում և ուղեկցվում է մի շարք խնդիրներով:

²⁸«Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին և ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման, Բաժին 2, Գլուխ 3 և 4, <http://bit.do/fpNjL>:

Գլուխ 2

Ազատագրկված անձանց աշխատանքային զբաղվածությունը

Աշխատանքային զբաղվածությունն ազատագրկման ընթացքում

Կալանավորված անձինք և դատապարտյալները հնարավորության դեպքում ապահովվում են աշխատանքով կամ իրավունք ունեն իրենց ինքնուրույն ապահովելու աշխատանքով, որի կարգը և պայմանները սահմանում է ներքին կանոնակարգը: Հիմնարկից բացի նրանք աշխատանքային հարաբերությունների մեջ կարող են մտնել նաև այլ գործատուների հետ: Այս դեպքում անհրաժեշտ է քրեակատարողական ծառայության և տվյալ գործատուի միջև համաձայնության առկայությունը:

Կալանավորված անձինք և դատապարտյալները ունեն աշխատանքային վարձատրության իրավունք: Աշխատանքի ամսական վարձատրությունը չի կարող պակաս լինել սահմանված նվազագույն աշխատավարձից:


ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը դատապարտյալների համար նախատեսում է նաև չվարձատրվող աշխատանքներում ներգրավվելու հնարավորություն: Այսպես, դատապարտյալը իր համաձայնությամբ առանց վարձատրության կարող է ներգրավվել հիմնարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներում՝ ոչ հանգստյան ժամերին և օրական երկու ժամից ոչ ավելի ժամանակով: Առանձին խմբերի համար, ինչպիսիք են 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձինք, հղի կանայք և կենսաթոշակային տարիքի հասած անձինք, չվարձատրվող աշխատանքները արգելվում են: Կալանավորված անձանց ևս արգելվում է ներգրավել չվարձատրվող աշխատանքներում, բացառությամբ սանիտարահիգիենիկ աշխատանքների:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության տրամադրած պաշտոնական տվյալների համաձայն՝ 2018 թվականին տարաբնույթ աշխատանքներում ընդգրկվել է 563 ազատագրկված անձ, որից 360-ը՝ վարձատրվող, 203-ը՝ հիմնարկների կամ դրանց հարող տարածքների բարեկարգման չվարձատրվող աշխատանքներում²⁹: Վարձատրվող աշխատանքներում ընդգրկվելու դեպքում կնքվում է աշխատանքային պայմանագիր³⁰: Նշված աշխատանքներում չեն ընդգրկվել «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի ազատագրկված անձինք: Զբաղվածության ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է «Աբովյան» ՔԿՀ-ում: 83 ազատագրկված կին ներգրավվել է վարձատրվող, 48-ը՝ չվարձատրվող աշխատանքներում:


²⁹ 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 19-30 հարցման պատասխան:

³⁰ Աշխատանքային պայմանագրի օրինակը՝ տրամադրված ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից, <http://bit.do/fqvTf>:


Վարձատրվող աշխատանքներում ներգրավվածության ամենացածր ցուցանիշը արձանագրվել է «Հրազդան» ՔԿՀ-ում՝ 6 անձ: Չվարձատրվող աշխատանքներում ամենաքիչը ներգրավվել են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ 4 անձ (Տե՛ս Աղյուսակ 1):



Վարձատրվող աշխատանքներում ներգրավված 360 դատապարտյալից 211-ը կատարել է հիմնարկների տեխնիկա-տնտեսական սպասարկման աշխատանքներ: 89 դատապարտյալ պայմանագրային հիմունքներով աշխատել է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում: Բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող 60 դատապարտյալ աշխատել է այլ գործատուի մոտ (Տե՛ս Աղյուսակ 2):



2019 թվականի 1-ի կիսամյակի ընթացքում 188 դատապարտյալ կատարել է վարձատրվող, 113-ը՝ չվարձատրվող աշխատանքներ (Տե՛ս Աղյուսակ 3)³¹:



Ճիշտ է, հնարավոր է մինչև 2019 թվականի ավարտը նշված թիվը ավելացած լինի, սակայն ազատազրկված անձանց զբաղվածությունը դեռևս մտահոգության տեղիք է տալիս:

Խնդիրն այն է, որ ազատազրկված անձանց զբաղվածության ցուցանիշը բավականին ցածր է, և բավարար չէ ազատվելուց հետո նրանց սոցիալական վերականգմանը նպաստելու տեսանկյունից: Օրինակ, 2018 թվականին վարձատրվող աշխատանքներում ընդգրկվել է նույն ժամանակահատվածում դատապարտյալների ընդհանուր թվի 11.7%-ը, չվարձատրվող աշխատանքներում՝ 6.6%-ը:

Տրամաբանական է, որ քրեակատարողական հիմնարկներում աշխատատեղերի քիչ լինելու պատճառով ոչ բոլոր ազատազրկված անձինք են կարողանում ներգրավվել աշխատանքներում: Տրամադրված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ աշխատանքով մեծամասամբ ապահովվում են դատապարտյալները, թեև վարձատրվող կամ չվարձատրվող աշխատանքներում ներգրավվելու օրենսդրական երաշխիքներ սահմանված են ինչպես դատապարտյալների, այնպես էլ կալանավորված անձանց համար: Ազատազրկման ընթացքում զբաղվածության հնարավորություն չունենալը ազդում է նաև կալանավորված անձանց հետագա սոցիալական վերաինտեգրման վրա: Ինչպես գիտենք, մինչդատական վարույթում մեծամասամբ կալանավորումն

³¹ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

է կիրառվում որպէս խափանման միջոց³²: Եվ անձինք, քրեական գործի ընթացքով պայմանավորված, տնական ժամանակահատվածով մնում են կալանավորված՝ հավասարապէս կրելով ազատագրկման բացասական հետևանքները:

Մյուս կողմից էլ քրեակատարողական հիմնարկներում աշխատանքի հնարավորություններ ստեղծելու հարցում հավասար մոտեցում չի ցուցաբերվում: Օրինակ, ինչպէս 2018 թվականին, այնպէս էլ 2019 թվականի 1-ին կիսամյակում աշխատանքային զբաղվածությունը ապահովող ծրագրերը հիմնականում իրականացվել են «Աբովյան» ՔԿՀ-ում, իսկ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի ազատագրկված անձանց աշխատանքային զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:

Ի դեպ, քրեակատարողական հիմնարկներում հաշվառվում են միայն աշխատանքներում ներգրավված ազատագրկված անձանց թվային տվյալները: Չեն հաշվառվում նրանց տարիքի, քրեական հոդվածի, մինչև ազատագրկվելը աշխատանքային փորձի առկայության կամ բացակայության վերաբերյալ և մի շարք այլ տվյալներ: Մինչդեռ նման հաշվառում իրականացնելը հնարավորություն կտա բացահայտել որոշ օրինաչափություններ, այդ թվում՝ ազատագրկման հետևանքով աշխատանքից դուրս մնալու դեպքերը կամ հաճախականությունը, և լուծման ուղղությամբ ավելի հստակ առաջարկություններ ներկայացնել:

Դատապարտյալների աշխատանքային զբաղվածությունը ապահովելու, նրանց տնտեսական-կենցաղային պայմանները զարգացնելու և կրթական մակարդակը բարձրացնելու, այդպիսով նաև վերասոցիալականացումն առավել դյուրին դարձնելու հարցում կարևոր դերակատարություն ունի «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը³³, որի գործունեության վերաբերյալ, սակայն, մի շարք խնդիրներ են արձանագրվել:

Այսպէս, հիմնադրամը պարտավոր է օրենքով սահմանված ընթացակարգով հաշվետվություն հրապարակել հաշվետու տարում իրականացրած ծրագրերի, ֆինանսական աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի վերաբերյալ³⁴: Մինչդեռ, ՀՀ արդարադատության նախարարության տեղեկացմամբ, հիմնադրամի 2018 թվականի տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված ժամանակահատվածում չի հրապարակվել³⁵, ինչը խնդրահարույց է վերջինիս գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության տեսանկյունից, եթե

³² «ՀՀ դատարանների 2017-2018թթ. գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծություն», <http://bit.do/fndMR>, էջեր 8-9:

³³ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կանոնադրություն, <http://bit.do/fndNp>:

³⁴ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpNNZ>, հոդված 39:

³⁵ 2019 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 19-113 հարցման պատասխան:

հաշվի առնենք այն հանգամանքը, որ հիմնադրամի գործունեության արդյունքներին ծանոթանալու այլ ձևաչափ կամ հարթակ առկա չէ:

Համեմատական վիճակագրություն չի իրականացվում այն մասին, թե հիմնադրամն ընդահանուր առմամբ քանի անձի է ապահովել աշխատանքով, և նրանցից քանիսն են դատապարտյալ: Ավելին, ըստ հիմնադրամի տրամադրած տվյալների՝ 2018 թվականին կնքվել է դատապարտյալներին աշխատանքով ապահովելու 52 պայմանագիր, իսկ 2019 թվականի օգոստոսի 13-ի դրությամբ հիմնադրամի կողմից կազմակերպված տարբեր աշխատանքներում ներգրավվել է 64 դատապարտյալ: Ներկայացված թվային տվյալները էականորեն տարբերվում են հիմնադրամի կողմից աշխատանքով ապահովված դատապարտյալների վերաբերյալ արդարադատության նախարարության կողմից ներկայացված տվյալներից, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ աշխատանքով ապահովված դատապարտյալների վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների հետ միասնական հաշվառում չի իրականացվում:

Ոլորտը կարգավորող օրենսդրության և հիմնադրամի տրամադրած տեղեկատվության և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք այլ խնդիրներ ևս:

Այսպես, հիմնադրամը կարող է կազմակերպել դատապարտյալների ձեռքի աշխատանքների վաճառք, սակայն բացակայում են այս գործառույթը իրականացնելու համապատասխան մեխանիզմները: Այդ նպատակով սահմանված չեն հարկային արտոնություններ:


Հիմնադրամի գործունեության բոլոր ոլորտներում ներգրավված են դատապարտյալները: Այսինքն՝ այս դեպքում ևս քայլեր չեն ձեռնարկվում կալանավորված անձանց աշխատանքային զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ: Բացակայում է հիմնադրամի կողմից քրեակատարողական հիմնարկներում աշխատատեղեր ստեղծելու հարցում հավասար մոտեցումը: Առկա չէ այդ աշխատանքներում խոցելի խմբերի ազատագրված անձանց (առողջական խնդիրներ, հաշմանդամություն ունեցող և այլն) ներգրավելու մեխանիզմ:

Ավելին, գոյություն չունեն այնպիսի իրավական կարգավորումներ, որոնք հիմնադրամին հնարավորություն կընձեռեն աշխատանքներ իրականացնելու այն անձանց հետ, որոնք ազատվել են պատժի կրման ժամկետը լրանալու կամ այլ հիմքով՝ պայմանական վաղաժամկետ, պատժի հետագա կրմանը խոչընդոտող ծանր հիվանդություն, համաներում, ներում և այլն: Առկա չեն օրենքով սահմանված ուղղորդման մեխանիզմներ հիմնադրամի աշխատանքներում ներգրավելու այն անձանց, որոնց նկատմամբ կիրառվել են այլընտրանքային պատժամիջոցներ կամ խափանման միջոցներ կամ որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Աշխատանքով ապահովելու հիմնախնդիրներն ազատ արձակվելուց հետո

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի սոցիալական վերականգնման հարցերով համագործակցում է հասարակական և այլ կազմակերպությունների ու մարմինների հետ: Մասնավորապես, պատժից ազատվող դատապարտյալի աշխատանքը և կենցաղը կարգավորելու նպատակով ազատագրկման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ տվյալ հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ տեղական ինքնակառավարման և զբաղվածության պետական ծառայությանը տեղեկացնում է դատապարտյալի՝ պատժից առաջիկա ազատման, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակարանի առկայության մասին:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկները նշված գործառույթի իրականացման շրջանակներում 2018 թվականին ներկայացրել են պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալներին աշխատանքով ապահովելու 391, 2019 թվականին 1-ին կիսամյակի ընթացքում՝ 120 միջնորդություն: Աշխատանքով ապահովելու նպատակով միջնորդություն չի ներկայացվել «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի դատապարտյալների համար (Տե՛ս Աղյուսակ 4):




Սակայն խնդիրն այն է, որ պատժի կրումից հետո նախկին ազատագրկված անձանց աջակցություն ցուցաբերելու կամ ուղղորդելու որևէ մեխանիզմ առկա չէ, ուստի հնարավոր չէ պարզել նշված դատապարտյալների՝ զբաղվածության տարածքային կենտրոններ չներկայանալու կամ կենտրոնների կողմից աշխատանքով չապահովվելու պատճառները:

Ազատագրկման վայրերից վերադարձած անձինք, հաշվառվելով զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում,

կարող են ստանալ գործազուրկի կարգավիճակ և ճանաչվել աշխատաշուկայում անմրցունակ³⁶: Որպես աշխատաշուկայում անմրցունակ՝ նրանք իրավունք ունեն ընդգրկվել զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող զբաղվածության պետական ծրագրերում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2016-2018 թվականներին զբաղվածության տարածքային կենտրոններին դիմել և խորհրդատվություն է ստացել ազատազրկման վայրերից վերադարձած 145 անձ, հաշվառվել է 48, ծրագրերում ընդգրկվել է 1 և աշխատանքի է տեղավորվել 3 անձ: Այսինքն, 3 տարվա ընթացքում զբաղվածության կարգավորման պետական ծրագրի շրջանակներում ընդամենը 3 անձ է աշխատանքով ապահովվել, որից 2-ը՝ 2016, 1-ը՝ 2018 թվականին (Տե՛ս Աղյուսակ 5)³⁷:



Եթե համեմատենք 2016, 2017 և 2018 թվականներին պատժի կրումից ազատված դատապարտյալների (համապատասխանաբար 919, 1177 և 1609)³⁸, զբաղվածության կենտրոններում հաշվառված (համապատասխանաբար 21, 11 և 16) և աշխատանքի տեղավորված (2016-ին՝ 2, 2018-ին՝ 1) անձանց թիվը, կարող ենք եզրակացնել, որ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերը արդյունավետ չեն գործել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց համար:

Ինչպես գիտենք, 2018 թվականին Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-

³⁶«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, <http://bit.do/fpNPn>, Հավելված 14:

³⁷ 2019 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 19-72 հարցման պատասխան:

³⁸ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-81 հարցման պատասխան:

ամյակի կապակցությամբ համաներում է հայտարարվել³⁹, ինչից հետո ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններին՝ համաներմամբ ազատված անձանց վերասոցիալականացման գործընթացի շարունակականությունը ապահովելու և, ըստ այդմ, կրկնահանգագործության ռիսկերը նվազեցնելու հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով: Իսկ այն անձանց, որոնք ունեն սոցիալական, այդ թվում՝ զբաղվածությանն առնչվող խնդիրներ, կոչ էր արել դիմել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ, այդ թվում՝ սոցիալական ապահովության տարածքային կենտրոններ և զբաղվածության տարածքային կենտրոններ⁴⁰:

Հետագոտությունն իրականացնելու ընթացքում պարզ է դարձել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը համաներումով ազատված անձանց աշխատանքով ապահովված լինելու հարցի վերաբերյալ որևէ տեղեկատվության չի տիրապետում⁴¹:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանել են, որ զբաղվածության պետական գործակալությունը համաներման հիմքով պատժից ազատված անձանց տարանջատում և այդ հիմքով հաշվառում չի իրականացնում, սակայն տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ 2019 թվականի 1-ին կիսամյակում նշված կենտրոններ դիմել և խորհրդատվություն է ստացել ազատագրկման վայրերից վերադարձած 30 անձ, որոնցից 10-ը հաշվառվել է, 1-ը՝ տեղավորվել աշխատանքի⁴²:

Համաներումով ազատված անձինք չեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն⁴³ և մարզպետարաններ, բացառությամբ սոցիալական աջակցության Արմավիրի տարածքային գործակալության (Կոտայքի մարզ), որտեղ սոցիալական աջակցություն է ցուցաբերվել համաներումով ազատված 3 անձի⁴⁴:

Տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու դեպքեր արձանագրվել են Կոտայքի, Արագածոտնի և Սյունիքի մարզերում⁴⁵: Համաներումով ազատված անձինք նշված մարզերի ՏԻՄ-երին դիմել են

³⁹«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpNPr>:

⁴⁰«Արդարադատության նախարարության կոչը՝ զբաղվածության խնդիր ունեցող համաներմամբ ազատված անձանց», <http://moj.am/article/2196>:

⁴¹ 2019 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 19-53 հարցման պատասխան:

⁴² 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 19-54 հարցման պատասխան:

⁴³ 2019 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 19-55 հարցման պատասխան:

⁴⁴ Ի լրումն 2019 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 19-55 հարցման:

⁴⁵ 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 19-86 հարցման պատասխան:

բնութագիր, բնակության վայրի վերաբերյալ տեղեկանք կամ անձնագիր ստանալու խնդրանքով: Գործիսի համայնքապետարանին աշխատանքի խնդրանքով դիմել է 5 անձ, որոնցից միայն 2-ն է աշխատանքի տեղավորվելու ցանկություն հայտնել⁴⁶:

Ներկայացված վիճակագրական տվյալները մտահոգիչ են, քանի որ 2019 թվականի 1-ին կիսամյակում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 298 դատապարտյալ, որից 76-ը՝ համաներումով⁴⁷, մինչդեռ տարբեր պետական մարմինների աջակցության միջոցով կարգավորվել է ընդամենը 3 անձի աշխատանքով ապահովելու հարցը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ազատ արձակվելուց հետո աշխատանքային զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերը գործնականում արդյունավետ չեն:

Մի կողմից առկա է աշխատանքի և զբաղվածության հնարավորությունների պակաս, բացակայում են ուղղորդման և սոցիալական համալիր աջակցություն ցուցաբերելու մեխանիզմները, բավարար չէ պատասխանատու գերատեսչությունների և գործատուների միջև համագործակցությունը: Մյուս կողմից էլ ազատազրկված անձանց վերաինտեգրմանը խոչընդոտում են հասարակության և գործատուների կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքը և պիտակավորումը:

Ընդ որում, կալանավորված անձինք նույնպես կրում են ազատազրկման բացասական հետևանքները, սակայն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում որպես շահառու խումբ դիտարկվում են ազատազրկման ձևով պատիժ կրող անձինք:

Ավելին, պարզ է դարձել, որ զբաղվածության կենտրոնները չեն իրականացնում ազատազրկման վայրերից վերադարձած անձանց վերլուծություն՝ ըստ սեռի, տարիքի, ընտանեկան կարգավիճակի և այլ հիմքերի: Մինչդեռ նման վիճակագրություն և վերլուծություն իրականացնելը կարող է նպաստել հանցավորության վիճակի առավել խորքային ուսումնասիրությանը, կարիքների և ռիսկերի գնահատմանը և ըստ այդմ՝ կրկնահանցագործությունների կանխարգելմանը:

⁴⁶ Մյուսիքի մարզպետարանի կողմից ներկայացված տեղեկանք:

⁴⁷ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-81 հարցման պատասխան:

Գլուխ 3

Ազատագրված անձանց կրթությունը

Ազատագրված անձանց կրթության իրավունքի օրենսդրական երաշխիքները

Կրթությունը և մասնագիտական ուսուցման դասընթացները նպաստում են ազատագրված անձանց մասնագիտական կարողությունների բարելավմանը, անձնական աճին և բարձրացնում աշխատանք գտնելու հավանականությունը՝ այդկերպ նպաստելով նրանց սոցիալական վերականգնմանը և հասարակության մեջ վերաինտեգրվելուն:

Ներպետական կարգավորումների համաձայն՝ ազատագրված անձինք ունեն կրթություն ստանալու իրավունք: Հիմնարկի վարչակազմը հնարավորություններ է ստեղծում կալանավորված անձանց տարրական, հեռակա ընդհանուր միջնակարգ և բարձրագույն, ինչպես նաև դատապարտյալների հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպելու համար:

Դատապարտյալներն ունեն նաև նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն ստանալու իրավունք: Վերջինս պետք է այնպես կազմակերպվի, որ աշխատանքի կատարման ընթացքում պահպանվեն կամ բարելավվեն դատապարտյալի՝ պատժից ազատվելուց հետո ապրուստի միջոց վաստակելու ունակությունները:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը կալանավորված անձանց մասնագիտական ուսուցում ստանալու իրավունք չի վերապահում: Նման հնարավորություն նախատեսում է ներքին կանոնակարգը՝ կալանավորված անձանց անձնական հաշվին կամ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Ազատագրված անձանց կրթության իրավունքի ապահովման վերաբերյալ օրենսդրական կարգավորումների համեմատությունը վեր է հանում մի շարք այլ հակասություններ ևս:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը թույլատրում է հեռավար կրթություն ստանալ, սակայն հեռահաղորդակցություն ապահովող սարքերը ներառված են արգելված իրերի ցանկում⁴⁸:

⁴⁸«Ազատագրվածների կրթության (այդ թվում՝ մասնագիտական) ապահովման խնդիրները ՀՀ քրեակատարողական համակարգում», Քաղաքականության համառոտագիր, <http://bit.do/foCzE>, Հիմնախնդիր 8:

Ներքին կանոնակարգը չի տարանջատում մասնագիտական կրթություն և մասնագիտական ուսուցում հասկացությունները, մինչդեռ դրանք սահմանված են «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով⁴⁹:

Հանրակրթության կազմակերպումն ազատագրկման ընթացքում

Ազատագրկված անձանց՝ հանրակրթություն ստանալու իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ը⁵⁰, որտեղ 2017-2018 ուսումնական տարում սովորել է 40, 2018-2019 ուսումնական տարում՝ 32 դատապարտյալ: Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերն են դասը (առկա ուսուցում) և խմբակային-անհատական խորհրդատվություններն ու զրույցները: Ուսուցումը կազմակերպվում է «Արթիկ» ՔԿՀ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի օժանդակությամբ: Դպրոցում հանրակրթություն են ստանում «Արթիկ» ՔԿՀ-ում պատիժ կրող 18 տարեկանից բարձր դատապարտյալները: Նրանց մեջ ներառված չեն օտարերկրացի ազատագրկված անձինք և ցմահ դատապարտյալները⁵¹:

Ազատագրկված անձանց հանրակրթություն ստանալու իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն «Աբովյան» ՔԿՀ-ի կրթական կենտրոնը, որը, ինչպես պարզվել է, 2017 թվականից չի գործում՝ ազատագրկված անչափահասներին փաստացի զրկելով հանրակրթություն ստանալու հնարավորությունից: Խնդրի մասին բարձրաձայնելուց հետո ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև քննարկումներ են սկսվել կալանավորված անձանց և դատապարտյալների, այդ թվում՝ անչափահաս և կին դատապարտյալների կրթության իրավունքի ապահովման և արդյունավետ իրացման խնդրի լուծման շուրջ⁵²:

2018 թվականի հունվարի 11-ին հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ըստ որի՝ կառավարության 2018 թվականի

⁴⁹«Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpNPN>, հոդված 3:

⁵⁰ «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը, <http://bit.do/fqv7R>:

⁵¹ 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 19-117 հարցման պատասխան:

⁵²«Դիտորդների խումբը ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկել է քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ի կրթական կենտրոնի վերաբացման ուղղությամբ», <http://bit.do/fpNPZ>:

գերակա խնդիրների շարքում ներառվել է նաև անչափահաս դատապարտյալների հանրակրթության իրավունքի ապահովումը⁵³:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ս/2 և 251-Ս/2 հրամաններով⁵⁴ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը⁵⁵ ստացել է քրեակատարողական հիմնարկներում հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1398-Ս/2⁵⁶ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ 490-Ս/2⁵⁷ հրամաններով հաստատվել են կենտրոնի կողմից 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարվա համար ներկայացված ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները:

Կենտրոնը 2019 թվականի հուլիսի 24-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքել է թիվ 109/19 պայմանագիրը, որով 2019 թվականի սեպտեմբերի 1-ից «Աբովյան», «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում իրականացնում է 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի հանրակրթական ուսուցումը: Դասընթացներին 2019 թվականի հոկտեմբերի 17-ի դրությամբ մասնակցել են 15-19 տարեկան ազատությունից զրկված 7 անձ «Արմավիր», «Նուբարաշեն» և «Աբովյան» ՔԿՀ-ներից⁵⁸: Դասագրքերը տրամադրվել են «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու» հիմնադրամի կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մարտի 29-ի «2019-2020 ուսումնական տարում հանրակրթական

⁵³ «ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի թիվ 275-Ն որոշում, <http://bit.do/fpNP8>, Հավելված 2, կետ 156, ենթակետեր 1-3:

⁵⁴ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին հիմնական հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ս/2 և 251-Ս/2 հրամաններ, <http://bit.do/fpNQo>, <http://bit.do/fpNQv>:

⁵⁵ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրություն, <http://bit.do/fpNQF>:

⁵⁶ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները» (2018-2019 ուսումնական տարվա համար) հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1398-Ս/2 հրաման, <http://bit.do/fqwbp>:

⁵⁷ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները» (2019-2020 ուսումնական տարվա համար) հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ 490-Ս/2 հրաման, <http://bit.do/fqwcv>:

⁵⁸ 2019 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 19-111 հարցման պատասխան:

ծրագրեր իրականացնող հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը» հաստատելու մասին թիվ 283-Ս/2 հրամանով սահմանված ցանկին համապատասխան⁵⁹:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, քայլեր ձեռնարկվում են ազատագրված անձանց հանրակրթությունը կազմակերպելու ուղղությամբ, սակայն գործնականում այն ուղեկցվում է մի շարք խնդիրներով:

Մտահոգիչ է այն, որ Արթիկի երեկոյան դպրոցը միջնակարգ հանրակրթական ծրագրով կրթական գործունեություն է իրականացնում, սակայն չունի համապատասխան լիցենզավորում⁶⁰:

Ի դեպ, հետազոտության իրականացման շրջանակներում հնարավոր չի եղել նշված խնդրի վերաբերյալ պարզաբանումներ ստանալ: Այդ նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հասցեագրված գրությունը մակագրվել է ՀՀ Շիրակի մարզպետարանին⁶¹: Վերջինս պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ պահանջվող տեղեկատվությունը կարող ենք ստանալ Արթիկի երեկոյան դպրոցից այն հիմնավորմամբ, որ դպրոցը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է⁶²: Դպրոցը ևս հարցադրումների վերաբերյալ տեղեկություններ չի տրամադրել⁶³:

Հայաստանում 12-ամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ⁶⁴: Ըստ այդմ, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»-ը իրականացնում է մինչև 19 տարեկան ազատագրված անձանց հանրակրթական ուսուցումը: Արթիկի երեկոյան դպրոցում հանրակրթական ուսուցման մեջ ընդգրկված են 18 տարեկանից բարձր դատապարտյալները: Այս դեպքում, սակայն, խնդիրն այն է, որ դպրոցը գործում է միայն «Արթիկ» ՔԿՀ-ում և հասանելի չէ մնացած հիմնարկների դատապարտյալների համար: Փաստորեն, հանրակրթական ուսուցման մեջ ներառված չեն բոլոր այն կալանավորված անձինք և դատապարտյալները, ովքեր ունեն հանրակրթություն ստանալու կարիք՝ անկախ տարիքից:

⁵⁹ «2019-2020 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մարտի 29-ի թիվ 283-Ս/2 հրաման, <http://bit.do/fpNQO>:

⁶⁰ «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց», Երևան, 2019 թ., <http://bit.do/fpN9T>, էջեր 248-249:

⁶¹ 2019 թվականի հոկտեմբերի 31-ի 19-119 հարցման պատասխան:

⁶² Շիրակի մարզպետարանի պատասխան գրությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գրությամբ:

⁶³ 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 19-117 հարցման պատասխան:

⁶⁴ «Կրթության մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpN95>, հոդված 18, կետ 7:

Քրեակատարողական ծառայության կողմից ստացված վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ հիմնարկները քրեակատարողական ծառայության հետ հանրակրթություն ստացած անձանց վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ), տարիքի, պատժաչափի, քաղաքացիության կամ այլ հիմքերի միասնական հաշվառում չեն իրականացնում: Ավելին, չի իրականացվում կալանավորված անձանց և դատապարտյալների կրթության աստիճանի վերաբերյալ հաշվառում⁶⁵, ինչը նշանակում է, որ դեռևս պատշաճ ուշադրություն չի դարձվում ազատազրկված անձանց կրթական կարիքներն ուսումնասիրելուն և համապատասխան հանրակրթական ուսուցման ծրագրեր մշակելուն:

Ներքին կանոնակարգի համաձայն՝ կալանավորված անձանց և դատապարտյալների (բացառությամբ անչափահասների) հանրակրթությունը կարող է կազմակերպվել նաև դրսեկության ձևով, մինչդեռ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվությունը փաստում է, որ վերջին երկու տարիների ընթացքում նման դեպքեր չեն արձանագրվել⁶⁶:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ չնայած սահմանված ընթացակարգին՝ ազատազրկված անձինք հիմնարկից դուրս կազմակերպվող հանրակրթության մեջ ներգրավվելու հնարավորությունից չեն օգտվել:

Բարձրագույն և հետբուհական կրթության կազմակերպումն ազատազրկման ընթացքում

Ազատազրկված անձանց բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու իրավունքը հնարավոր է իրականացնել հեռավար (դիստանցիոն) կրթության միջոցով: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի թիվ 124-Ն որոշմամբ⁶⁷: Նշված կարգի 3-րդ կետի համաձայն՝ հեռավար ուսուցման հիմքը կազմում են փաթեթային, ինտեռնետ և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները:

Նույն թվականի օգոստոսի 27-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 1348-Ս/Ք հրամանով հաստատվել է նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույցը⁶⁸:

⁶⁵ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-87 հարցման պատասխան:

⁶⁶ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-90 հարցման պատասխան:

⁶⁷ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի թիվ 124-Ն որոշում, <http://bit.do/fpPam>:

⁶⁸ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույց», <http://bit.do/fpPav>:

Ինչ վերաբերում է ազատվելուց հետո կրթության իրավունքի իրականացման հնարավորություններին, ապա այն կազմակերպվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն հրամանով հաստատված էքստեռն (դրսեկության) կարգի համաձայն⁶⁹:

Ազատագրված անձանց բարձրագույն և հետբուհական կրթությունը կազմակերպվում է իրենց դիմումի հիման վրա: Քրեակատարողական ծառայությունը համագործակցության համաձայնություն է ձեռք բերում այն ուսումնական հաստատությունների հետ, որտեղ սովորելու համար դիմել են ազատագրված անձինք և որոնք պետք է կազմակերպեն ազատագրված անձանց բարձրագույն և հետբուհական կրթությունը:

Ըստ քրեակատարողական ծառայության տրամադրած պաշտոնական տվյալների՝ 2018 թվականին 5 դատապարտյալ ստացել է բարձրագույն, 2-ը՝ հետբուհական կրթություն⁷⁰.

«Արմավիր» ՔԿՀ	Ուրարտու համալսարան, հոգեբանություն Ուրարտու համալսարան, ասպիրանտ (հետբուհական), հոգեբանություն
«Նուբարաշեն» ՔԿՀ	Ուրարտու համալսարան, հոգեբանություն Ուրարտու համալսարան, հոգեբանություն Հյուսիսային համալսարան, ինֆորմատիկա և հաշվապահական տեխնիկա, ծրագրավորող
«Արթիկ» ՔԿՀ	Ուրարտու համալսարան, ասպիրանտ (հետբուհական), հոգեբանություն
«Վարդաշեն» ՔԿՀ	Ճարտարագիտական համալսարան, մեքենաշինության ֆակուլտետ

Տրամադրված տեղեկությունից հնարավոր չէ պարզել՝ նշված անձինք արդեն ավարտել են, թե դեռևս սովորում են բուհում: Ավելին, ըստ վիճակագրական տվյալների՝ նշված ժամանակահատվածում բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստացող բոլոր անձինք դատապարտյալներ են, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ կալանավորված անձանց բարձրագույն կրթությունը կազմակերպելուն դեռևս բավարար ուշադրություն չի դարձվում:

Ընդ որում, բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստացած դատապարտյալների վերաբերյալ քրեակատարողական ծառայությունից, հիմնարկներից և բարձրագույն ուսումնական հաստատություններից ստացված տվյալների համադրման արդյունքում պարզ է դարձել, որ հետբուհական կրթություն ստացած 1 անձի տվյալներ հաշվառվել են 2 անգամ, քանի որ տվյալ անձը 2018 թվականին մեկ հիմնարկից տեղափոխվել է մեկ այլ հիմնարկ:

⁶⁹«Էքստեռն (դրսեկության) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը» հաստատելու և 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 39-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն հրաման, <http://bit.do/fpPaD>:

⁷⁰ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-87 հարցման պատասխան:

Պատճառն այն է, որ հիմնարկները քրեակատարողական ծառայության հետ բարձրագույն և հետբուհական կրթություն ստացած անձանց վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ), տարիքի, քաղաքացիության, քրեական հոդվածի, պատժաչափի կամ այլ հիմքերի միասնական հաշվառում չեն իրականացնում: Հաշվառում չի իրականացվում նաև ազատազրկված անձանց կրթական աստիճանի վերաբերյալ: Մինչդեռ նման հաշվառում իրականացնելը թույլ կտա ուսումնասիրել ազատազրկված անձանց մասնագիտական կարիքները, ինչպես նաև բացահայտել մի շարք այլ օրինաչափություններ, օրինակ՝ ազատազրկման պատճառով կրթությունից դուրս մնալու դեպքերը:

Ներքին կանոնակարգի համաձայն՝ բարձրագույն և հետբուհական կրթությունը կազմակերպվում է ազատազրկված անձանց հաշվին: Հիմնարկի վարչակազմը կարող է նաև համագործակցել այլ կազմակերպությունների հետ՝ այն ոչ նրանց հաշվին կազմակերպելու համար: Մինչդեռ հետազոտության իրականացման ընթացքում պարզ է դարձել, որ բարձրագույն կրթություն ստացած անձինք ուսման վարձը փոխհատուցում են իրենց հաշվին՝ ընտանիքների կամ հարազատների աջակցությամբ: Ավելին՝ պարզվել է, որ քրեակատարողական ծառայությունը չի տիրապետում ուսման վարձի փոխհատուցման կամ զեղչային համակարգերի վերաբերյալ որևէ տեղեկատվության:

Կարող ենք եզրակացնել, որ դեռևս համապատասխան աջակցություն չի ցուցաբերվում բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստացող ազատազրկված անձանց, ինչպես նաև չի գործում նրանց շրջանում բարձրագույն կրթություն ստանալը խրախուսելու որևէ մեխանիզմ (ուսման վարձի փոխհատուցում կամ ճկուն զեղչային համակարգի ներդրում):

Ներքին կանոնակարգը նախատեսում է, որ կալանավորված անձանց կամ դատապարտյալների բարձրագույն և հետբուհական կրթությունը կարող է իրականացվել նաև դրսեկության ձևով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով, իսկ բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների կրթությունը կարող է կազմակերպվել ստացիոնար ձևով՝ չխոչընդոտելով պատիժը կրելու կարգին և պայմաններին: Մինչդեռ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվությունը փաստում է, որ վերջին երկու տարիների ընթացքում դրսեկության կամ ստացիոնար ձևով կրթություն ստացող ազատազրկված անձինք չեն եղել⁷¹:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ազատազրկված անձանց բարձրագույն կամ հետբուհական կրթությունն արդյունավետ ձևով չի իրացվում ինչպես վերը թվարկված խնդիրների, այնպես էլ այն պատճառով, որ բավականին

⁷¹2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-90 հարցման պատասխան:

թույլ է քրեակատարողական հիմնարկների և կրթական հաստատությունների միջև համագործակցությունը:

Մասնագիտական ուսուցումն ազատազրկման ընթացքում

Ազատազրկված անձանց մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը, անձնական աճին, հետազայում նաև՝ վերասոցիալականացմանը և հասարակության մեջ վերաինտեգրվելուն նպաստում են նաև մասնագիտական ուսուցման դասընթացները:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»-ի կողմից իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրն ուղղված է դատապարտյալների համար գեղագիտական և կրթական դասընթացների իրականացմանը, որոնք ոչ միայն ապահովում են դատապարտյալների զբաղվածությունը, այլև օգնում են ձեռք բերել այնպիսի մասնագիտական հմտություններ, որոնք կարող են նպաստել հասարակության մեջ ինտեգրմանը և աշխատանք ձեռք բերելուն: Ծրագրի շրջանակներում իրականացվում են հետևյալ դասընթացները՝

- *Բիզնես գրագիտություն,*
- *Հայոց լեզու և գրականություն,*
- *Անգլերեն լեզու,*
- *Դեկորատիվ կիրառական արվեստ (վիտրաժ, գծանկար, բատիկա, մանրանկարչություն, զարդակիրառական արվեստ, խեցեգործություն),*
- *Համակարգչային հմտություններ:*

ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունվարի 22-ի թիվ 12-Ս հրամանով հաստատվել է «Իրավախախտում կատարած անձանց 2018 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության դասախոսությունների և գործնական պարապմունքների» ծրագիրը, որի շրջանակներում կենտրոնը նշված ժամանակահատվածում դասընթացներ է իրականացրել «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ներում: «Աբովյան» ՔԿՀ-ից դասընթացներին մասնակցել են 7 ազատազրկված անչափահաս անձ և 47 կին դատապարտյալ, «Արմավիր» ՔԿՀ-ից՝ 32 դատապարտյալ:

Կենտրոնը 2019 թվականին «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ներում դասընթացներ է իրականացրել ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի փետրվարի 5-ի թիվ 32-Ս հրամանով հաստատված «Իրավախախտում կատարած անձանց 2019 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության դասախոսությունների և գործնական պարապմունքների» ծրագրով:

«Աբովյան» ՔԿՀ-ից դասընթացներին մասնակցել են 63 ազատազրկված կին, «Արմավիր» ՔԿՀ-ից՝ 98 ազատազրկված անձ⁷²:

Ըստ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության՝ մասնագիտական ուսուցման դասընթացներ կազմակերպվում են նաև հասարակական կազմակերպությունների կողմից:

Այսպես, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ-ն «Աբովյան» ՔԿՀ-ում իրականացրել է «Վերականգնողական արդյունավետության և թափանցիկության մշակույթի հիմնում» ծրագիրը, որի շրջանակներում անցկացվել են անզլերենի, համակարգչային հմտությունների, ֆիտնեսի, յոգայի, վարսահարդարման և խոհարարական հմտությունների դասընթացներ: Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի աջակցությամբ «Աբովյան» ՔԿՀ-ում բացվել է ձեռքի աշխատանքների (հելունագործություն, գորգագործություն) ակումբ: Նշված դասընթացներին մասնակցել են ազատազրկված կանանց և անչափահասների մեծ մասը⁷³:

Ինչպես տեսնում ենք, ազատազրկված անձանց մասնագիտական ուսուցումը կազմակերպելու ուղղությամբ նույնպես քայլեր ձեռնարկվում են, սակայն նշված դասընթացները 12 քրեակատարողական հիմնարկներից միայն 2-ում՝ «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ներում են կազմակերպվում:

Ճիշտ է, «Աբովյան» ՔԿՀ-ում ընձեռված հնարավորությունից օգտվում են ազատազրկված կանայք և անչափահասները, իսկ «Արմավիր» ՔԿՀ-ում՝ նաև ցմահ և օտարերկրացի դատապարտյալները, սակայն անհրաժեշտ է հավասար մոտեցում ցուցաբերել այդ դասընթացները բոլոր հիմնարկներում իրականացնելու և բոլոր ազատազրկված անձանց հասանելի դարձնելու հարցում:

Ոլորտը կարգավորող օրենսդրության և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք այլ խնդիրներ ևս:

Այսպես, պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկների կողմից իրականացվում է յուրաքանչյուր դասընթացի մասնակիցների թվային տվյալների հաշվառում: Խորքային գնահատում չի կատարվում՝ ուսումնասիրելու համար, թե այդ դասընթացները ինչպես են նպաստում դատապարտյալների վարքի ուղղմանը, ազատազրկման բացասական հետևանքները վերացնելուն կամ ազատազրկված անձանց հետագա վերաինտեգրմանը:

Մտահոգության տեղիք է տալիս այն, որ մասնագիտական ուսուցման դասընթացները պարբերական և շարունակական բնույթ չեն կրում: Հասարակական կազմակերպությունները դասընթացները կազմակերպում են

⁷² 2019 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 19-111 հարցման պատասխան:

⁷³ 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 19-30 և 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցումների պատասխաններ:

դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, որոնց ավարտից հետո համապատասխան ֆինանսավորում չեն ունենում դրանց պարբերականությունը և շարունակականությունն ապահովելու համար: Մյուս կողմից էլ ազատագրկված անձինք չեն կարող մեկ հիմնարկում սկսած մասնագիտական ուսուցումը շարունակել այլ հիմնարկում, քանի որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»-ի կողմից դասընթացները միայն 2 հիմնարկում են կազմակերպվում: Այսինքն՝ ինչպես ազատագրկվելուց, այնպես էլ մեկ հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխվելուց հետո անձը զրկվում է մասնագիտական ուսուցում ստանալու հնարավորությունից:

Մասնագիտական ուսուցումն ազատ արձակվելուց հետո

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, որ ազատագրկման ձևով պատիժ կրող այն անձինք, որոնց պատժի կրման ավարտին մնացել է մինչև 6 ամիս, և որոնք, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել են զբաղվածության տարածքային կենտրոններում, իրավունք ունեն ընդգրկվելու մասնագիտական ուսուցման ծրագրերում⁷⁴: Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը նշված դատապարտյալներին տեղեկացնում է մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորության մասին և ներկայացնում «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մասնագիտական ուսուցման ծրագրերը: Ընդգրկվելու ցանկություն հայտնելու դեպքում դատապարտյալների տվյալները փոխանցվում են զբաղվածության պետական գործակալությանը:

Ըստ զբաղվածության պետական գործակալության տրամադրած տվյալների՝ 2018 թվականին դատապարտյալները հիմնականում ցանկություն են հայտնել մասնակցել ավտոփականագործ, ծեփագործ, փայտամշակում, կոշկակարություն, խոհարարություն, դիմահարդարում, ավտոէլեկտրիկ, ոսկերիչ մասնագիտություններով ուսուցման դասընթացների: Եղել են նաև անձինք, ովքեր ցանկացել են մասնագիտանալ որպես ինժեներ-տեխնոլոգներ և մանկավարժներ⁷⁵:

Մասնագիտական ուսուցումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով ընտրված կազմակերպության կողմից և այն մասնագիտությունների գծով, որոնք կարող են ենթադրել կարճաժամկետ դասընթացներ: Սահմանված ընթացակարգի համաձայն՝ զբաղվածության պետական գործակալությունը կազմակերպել է մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման գործընթացի իրականացումը հաշվապահ, փայտյա գեղարվեստական իրեր պատրաստող, ծեփագործ, ավտոփականագործ,

⁷⁴ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPaQ>, հոդված 21:

⁷⁵ «Ազատագրկված անձանց զբաղվածությունը՝ վերաառնալիականացման և հանցագործությունների կանխարգելման միջոց», «labour.am» կայք, <http://bit.do/fqwo8>:

համակարգչային օպերատոր, կոշկակար, խոհարար, դիմահարդար, տեխնիկ-մեխանիկ, խառատ և կահույքագործ մասնագիտությունների գծով:

Գնման ներկայացված հայտում ընդգրկվել է 29 անձ, որից 13-ը՝ «Կոշ», 7-ը՝ «Հրագրան», 4-ը՝ «Աբովյան», 3-ը՝ «Արմավիր» և 2-ը՝ «Գորիս» ՔԿՀ-ներից: Մակայն նշված շահառուների մասնագիտական ուսուցումը տվյալ ժամանակահատվածում չի իրականացվել, քանի որ գնման գործընթացին ուսուցման ծառայություններ մատուցող որևէ կազմակերպություն չի մասնակցել:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ զբաղվածության պետական գործակալությունը 2019 թվականին համապատասխան առաջարկություն է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ առաջարկելով սահմանել ուսուցման կազմակերպման այլ ընթացակարգ⁷⁶, ինչը, նախարարության փոխանցմամբ, դեռևս քննարկման փուլում է⁷⁷:

Այսպիսով, վերը ներկայացված վիճակագրական տվյալները և վեր հանված խնդիրները թույլ են տալիս եզրակացնելու, որ կալանավորված անձանց մասնագիտական ուսուցման իրավունքի ապահովման հարցն օրենքով կարգավորված չէ ինչպես ազատազրկման ընթացքում, այնպես էլ ազատվելուց հետո: Մյուս կողմից էլ դատապարտյալների՝ նույն իրավունքի ապահովման համար ստեղծված հնարավորությունները դեռևս բավարար չեն նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը նպաստելու տեսանկյունից:

⁷⁶ 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 19-52 հարցման պատասխան:

⁷⁷ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-75 հարցման պատասխան:


Գլուխ 4

Ազատագրկված անձանց զբաղվածության, ազատ ժամանակն արդյունավետ ձևով տնօրինելու և հանգստի ապահովման միջոցները

Մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումներ


Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կարող է հասարակական կամ այլ կազմակերպությունների աջակցությամբ կամ անմիջական մասնակցությամբ մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումներ կազմակերպել, որոնք կարևոր նշանակություն ունեն ազատագրկված անձանց ազատ ժամանակը արդյունավետ ձևով տնօրինելու և դատապարտյալների ուղղմանը նպաստելու տեսանկյունից:

Ըստ քրեակատարողական ծառայության տրամադրած պաշտոնական վիճակագրության՝ 2018 թվականին քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել է 154 միջոցառում, որից 116-ը՝ մարզական, 19-ը՝ լուսավորչական և 19-ը՝ մշակութային: Հաշվետու տարում նմանատիպ միջոցառումներ չեն կազմակերպվել «Երևան-Կենտրոն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներում: Մարզական միջոցառումներ կազմակերպվել են մնացած բոլոր 10 քրեակատարողական հիմնարկներում: Ընդ որում, «Գորիս», «Հրազդան», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում մարզականից բացի այլ միջոցառումներ չեն կազմակերպվել: Լուսավորչական միջոցառումներ կազմակերպվել են միայն «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր» և «Նուբարաշեն», իսկ մշակութային միջոցառումներ՝ «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Կոշ», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում (Տե՛ս Աղյուսակ 6)⁷⁸:



⁷⁸ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-87 հարցման պատասխան:

Նշված մարզական, լուսավորչական և մշակութային միջոցառումներին մասնակցել է համապատասխանաբար 1400, 390 և 899 անձ (Տե՛ս Աղյուսակ 7):



2019 թվականի 1-ին կիսամյակում ևս կազմակերպվել են նմանատիպ միջոցառումներ⁷⁹: Այսպես,

- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը քրեակատարողական ծառայության և Աբովյանի քաղաքապետարանի հետ համատեղ նախաձեռնել է դատապարտյալ կանանց մասնակցությամբ զանգվածային մարզական միջոցառում 7 մարզաձևից՝ վազք, շաշկի, հեռացատկ, բազկամարտ, սեղանի թենիս, տեղախաղ (դարթս) և վոլեյբոլ:
- Համերգային ծրագրով «Աբովյան» ՔԿՀ են այցելել Կոմիտասի անվան ազգային քառյակը, «Տարոն» գեղագիտական կենտրոնի սաները, Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնի «Նուբար», «Մասնա ծոեր», «Տոնիկա» անսամբլների ներկայացուցիչները:
- «Աբովյան» ՔԿՀ-ում Երևանի կամերային պետական թատրոնի կողմից բեմադրվել է «Ժամանակի վարագույր» մենաներկայացումը, Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի կողմից ցուցադրվել է Հովհ. Թումանյանի կյանքի և գործունեության մասին պատմող «Ես միշտ ձեզ հետ եմ, ձեր մեջ եմ» փաստավավերագրական ֆիլմը, Երևանի խամաճիկների թատրոնի կողմից ներկայացվել է «Կարապի լիճը» բեմադրությունը:

⁷⁹ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

- «Կոշ» ՔԿՀ-ում «Ֆորտե» «Մասնա ծոեր» և «Նուբար» երաժշտական համույթները անցկացրել են համերգային միջոցառումներ:
- «Վարդաշեն» ՔԿՀ-ում Հայաստանի պատմության թանգարանը կազմակերպել է «Քրիստոնյա Հայաստան» ֆիլմի, Երվանդ Քոչարի տուն-թանգարանը՝ «Երվանդ Քոչարի կյանքն ու գործունեությունը» ֆիլմի, Արամ Խաչատրյան տուն-թանգարանը՝ «Գայանե» բալետի ցուցադրումը:

Ավելին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային և թանգարանային գործունեությունն իրականացնող ՊՈԱԿ-ների 2019 թվականի սուբսիդիայի պայմանագրերում քրեակատարողական հիմնարկներում մշակութային միջոցառումների կազմակերպումը ամրագրվել է որպես պարտադիր պահանջ, որի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ⁸⁰:

Քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել են նաև կրոնական միջոցառումներ: Այսպես, 2018 թվականին ազատազրկված անձանց հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր սպասավորները առնվազն շաբաթը 1 անգամ այցելություններ են կատարել բոլոր հիմնարկներ և կազմակերպել մկրտություններ, պատարագներ և տոնակատարություններ: Հետևորդ դատապարտյալների հետ կրոնական միջոցառումներ անցկացնելու նպատակով ռուս ուղղափառ եկեղեցու սպասավորները այցելել են «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներ: Նույն նպատակով Հայաստանյաց Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչը 8 անգամ այցելել է «Արմավիր» ՔԿՀ, իսկ Հայաստանում Եհովայի վկաների քրիստոնեական կազմակերպության սպասավորները 20 անգամ այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ⁸¹:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019 թվականի 1-ին կիսամյակում նշված միջոցառումները հիմնականում կազմակերպվել են «Աբովյան», «Կոշ», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում: Ընդ որում, գերակշիռ մասը կազմակերպվել է ազատազրկված կանանց համար: Մինչդեռ ազատազրկված անձանց սոցիալական վերականգնմանը նպաստելու տեսանկյունից կարևոր է, որպեսզի միջոցառումների կազմակերպման հարցում դրսևորվի հավասար մոտեցում՝ ապահովելով բոլոր ազատազրկված անձանց մասնակցությունն այդ միջոցառումներին: Մյուս կողմից էլ պետք է համապատասխան քայլեր ձեռնարկել ազատազրկված անձանց մասնակցությունը խթանելու համար, ինչը այդ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը կդարձնի նպատակային:

⁸⁰ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-89 հարցման պատասխան, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարանների կողմից իրականացված միջոցառումների տեղեկանք:

⁸¹ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-87 հարցման պատասխան:

Ինքնագործ միավորումներ


Դատապարտյալներին թույլատրվում է ստեղծել մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումներ, որոնց կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են ներքին կանոնակարգով:

Ինքնագործ միավորումների հիմնական խնդիրներն են՝

- *զարգացնել դատապարտյալի մտավոր, մասնագիտական, ֆիզիկական կարողությունները,*
- *դրական ազդեցություն ունենալ դատապարտյալի ուղղման գործում,*
- *մասնակցել դատապարտյալի աշխատանքը, կենցաղը և հանգիստը կազմակերպելուն,*
- *սոցիալական օգնություն ցուցաբերել դատապարտյալին և նրա ընտանիքին:*

Դատապարտյալի մասնակցությունն ինքնագործ միավորումների աշխատանքներին խրախուսվում է և հաշվի առնվում նրա ուղղման աստիճանը որոշելիս:

Ըստ քրեակատարողական ծառայության տրամադրած պաշտոնական տվյալների՝ 2018 թվականին 7 հիմնարկներում ստեղծվել է 15 ինքնագործ միավորում, որոնցում ընդգրկվել է 148 դատապարտյալ: Նշված ժամանակահատվածում ինքնագործ միավորումներ չեն ստեղծվել «Արմավիր», «Գորիս», «Երևան-Կենտրոն», «Հրազդան» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում (Տե՛ս Աղյուսակ 8)⁸²:



⁸² 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-87 հարցման պատասխան:

2019 թվականի 1-ին կիսամյակում քրեակատարողական հիմնարկներում գործել է մարզական, մշակութային, կրոնական և լուսավորչական 12 ինքնագործ միավորում, որոնցում ընդգրկվել է 112 դատապարտյալ⁸³:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում ևս հիմնական խնդիրն այն է, որ առկա չէ բոլոր հիմնարկներում դատապարտյալների կողմից ինքնագործ միավորումներ ստեղծելը խրախուսող հավասար մոտեցում: Ընդ որում, ինքնագործ միավորումների և դրանց մասնակիցների վերաբերյալ իրականացվում է միայն թվային հաշվառում: Խորքային ուսումնասիրություն չի իրականացվում՝ պարզելու համար, թե այդ միավորումները ինչպես են նպաստում դատապարտյալների ուղղմանը:

Գրադարաններ և ընթերցասրահներ

Ազատագրված անձանց համար գրականության, գրադարանի և ընթերցասրահների հասանելիությունն ապահովելը կարևոր նշանակություն ունի ոչ միայն նրանց կրթության և զբաղվածության, այլև արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի իրացման տեսանկյունից:

Ըստ քրեակատարողական հիմնարկներից ստացված պաշտոնական պարզաբանումների⁸⁴՝ բոլոր քրեակատարողական հիմնարկները, բացառությամբ «Աբովյան», «Արթիկ» և «Հրազդան» ՔԿՀ-ների, ունեն 1-ական գրադարաններ, որոնք համալրված են գրականությամբ: «Աբովյան» ՔԿՀ-ն ունի 1 հիմնական և 2 տեղամասային, իսկ «Արթիկ» ՔԿՀ-ն՝ 1 աշխարհիկ և 1 հոգևոր գրադարան: Ընդ որում, «Հրազդան» ՔԿՀ-ում գրադարանի համար առանձին տարածք հատկացված չէ, և գրապահոցը տեղակայված է հոգեբանի աշխատասենյակում:

Հիմնարկներից ստացված պաշտոնական տվյալների վերլուծության արդյունքում ի հայտ են եկել մի շարք այլ խնդիրներ ևս:

Այսպես, գրադարանները նոր գրականությամբ համալրելու հարցում հավասար մոտեցում չի ցուցաբերվում: Համալրումները հիմնականում կատարվում են նվիրատվությունների միջոցով կամ հասարակական կազմակերպությունների և անհատների կողմից: Ընդ որում, համալրումներ կատարելիս նկատի չեն առնվում ազատագրված անձանց մասնագիտական և կրթական կարիքները, քանի որ նման ուսումնասիրություններ չեն իրականացվում:

Գրքերից, ամսագրերից և թերթերից օգտվելու կարգը և պայմանները սահմանում է ներքին կանոնակարգը, որի համաձայն՝ գրքերի և ամսագրերի փոխանակությունն իրականացնում է գրադարանավարը՝ ազատագրված անձանց պատվերների հիման վրա: Հետազոտությունն իրականացնելու

⁸³ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-90 հարցման պատասխան:

⁸⁴ 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 19-18-19-29 հարցումների պատասխաններ:

ընթացքում, սակայն, պարզվել է, որ բացակայում է հիմնարկներում գրադարանավարի հաստիք նախատեսելու հարցում միասնական մոտեցումը:

Այսպես, ըստ քրեակատարողական հիմնարկների տրամադրած տվյալների՝ գրադարանավարի հաստիք նախատեսված է «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում: Այդտեղ գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկում պատիժ կրող դատապարտյալներից մեկը: Աշխատանքի համար սահմանված է նաև վարձատրություն՝ նվազագույն աշխատավարձի չափով: Գրադարանավարի հաստիք նախատեսված չէ «Գորիս», «Երևան-Կենտրոն», «Կոշ», «Հրազդան», «Նուբարաշեն», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում, որտեղ, բացի «Կոշ» ՔԿՀ-ից, գրադարանավարի գործառույթը կատարում են հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցները: «Կոշ» ՔԿՀ-ում այդ աշխատանքը կատարում է դատապարտյալներից մեկը՝ առանց վարձատրության⁸⁵:

Տրամաբանական է, որ քրեակատարողական հիմնարկներում գրադարանավարի հաստիք նախատեսելու և այն համալրելու հարցում միասնական մոտեցման բացակայությունը գործնականում կարող է մի շարք խնդիրներ առաջացնել: Օրինակ՝ գրադարանավարի գործառույթ կատարելը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է ստեղծում սոցիալական, հոգեբանական կամ իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցների համար: Իսկ գրադարանավարի աշխատանքը դատապարտյալների կողմից կատարվելու դեպքում տվյալ հաստիքը կարող է թափուր մնալ, քանի որ գրադարանավարի աշխատանքը կատարող դատապարտյալի՝ պատժի հետագա կրումից ազատվելու դեպքում այդ աշխատանքում այլ դատապարտյալ ներգրավելը որոշ ժամանակ է պահանջում:

Ներքին կանոնակարգը սահմանում է, որ կիսաբաց կամ բաց ուղղիչ հիմնարկում գրադարանին կից կազմակերպվում է ընթերցասրահ, որից դատապարտյալները օգտվում են օրվա կարգացուցակով իրենց հատկացված ազատ ժամերին: Հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը փաստում է, որ այս առումով ևս առկա չէ միասնական մոտեցում⁸⁶:

Այսպես, գրադարաններին կից ընթերցասրահներ գործում են «Արթիկ», «Կոշ», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում: Ընդ որում, «Կոշ» ՔԿՀ-ում առկա է 2 ընթերցասրահ՝ 1-ը աշխարհիկ, մյուսը՝ հոգևոր գրականություն ընթերցողների համար: «Աբովյան» ՔԿՀ-ի կանանց և անչափահասների տեղամասերի գրադարաններում, «Արմավիր», «Գորիս», «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն», «Հրազդան», «Նուբարաշեն» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում

⁸⁵ 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 19-18-19-29 հարցումների պատասխաններ:

⁸⁶ 2019 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 19-56-19-67 հարցումների պատասխաններ:

ընթերցասրահներ առկա չեն, և ազատագրված անձինք ընթերցանությամբ զբաղվում են խցերում, իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ զրուցարաններում կամ հիվանդասենյակներում⁸⁷:

Համապատասխան պայմանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում ընթերցանության վրա: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ազատագրված անձանց շատ քիչ տոկոսն է զբաղվում ընթերցանությամբ: Թերևս բացառություն է կազմում «Վարդաշեն» ՔԿՀ-ն, որտեղ գրադարանից օգտվում է ազատագրված անձանց 90 տոկոսը: Ի դեպ, առկա չէ գրքերի սպասարկման և գրականությունից օգտվող անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու միասնական ընթացակարգ: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում նույնիսկ հաշվառում չի իրականացվում⁸⁸:

Ներքին կանոնակարգը նախատեսում է բաժանորդագրության միջոցով գրականությունից և պարբերական մամուլից օգտվելու ընթացակարգ: Բաժանորդագրությունը ձևակերպվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անունով՝ հիմնարկի փոստային հասցեով, իսկ բաժանորդագրության համար անհրաժեշտ դրամը փոխանցվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական հաշվից: Մինչդեռ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվությունը փաստում է, որ վերջին երկու տարիների ընթացքում կալանավորված անձինք և դատապարտյալները չեն դիմել իրենց հաշվին կամ բաժանորդագրության ձևով ձեռք բերված գրականությունից և պարբերական մամուլից օգտվելու համար⁸⁹:

Հարկ է նշել, որ 2018 թվականին ՀՀ ԱԺ պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կողմից⁹⁰ առաջարկվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարել և գրքերի ընթերցանության դեպքում դատապարտյալին, որպես խրախուսանքի միջոց, սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրել⁹¹: ՀՀ կառավարությունը, սակայն, բացասական դիրքորոշում է հայտնել նախագծով առաջարկվող իրավակարգավորումների կապակցությամբ⁹²:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դժվար է գնահատել, թե գործնականում ընթերցանությունը ինչպես է նպաստում ազատագրված անձանց արդյունավետ զբաղվածության ապահովմանը, նրանց զարգացմանը և մասնագիտական

⁸⁷ 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 19-18-19-29 հարցումների պատասխաններ:

⁸⁸ 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 19-18-19-29 հարցումների պատասխաններ:

⁸⁹ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 19-90 հարցման պատասխան:

⁹⁰ 2019 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 19-83 հարցման պատասխան:

⁹¹ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <http://bit.do/fpPbd>:

⁹² «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունը, <http://bit.do/fpPbo>:

կարողությունների պահպանմանը, քանի որ բացակայում են ընթերցանությունը խրախուսելու համապատասխան միջոցները և պայմանները:

Մարզասրահներ

Ազատագրկված անձանց առողջությունը պահպանելու և ազատ ժամանակը արդյունավետ ձևով տնօրինելու համար պայմաններ ստեղծելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի մարզասրահների առկայությունը:

Մարզասրահների և մարզասարքերի առկայության, համալրվածության, մարզասրահներից օգտվող ազատագրկված անձանց թվաքանակի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկներից ստացված հարցումների պատասխանները ցույց են տալիս, որ ոչ բոլոր հիմնարկներում են առկա մարզասրահներ: Այդտեղ որպես մարզասրահ հարմարեցված են զբոսահրապարակները կամ այլ տարածքներ: Ավելին, տարբեր հիմնարկներում տարբեր է մարզասարքերով հագեցվածության աստիճանը⁹³:

Հարցումների միջոցով ստացված տվյալների համադրման արդյունքում ի հայտ են եկել բազմաթիվ այլ խնդիրներ ևս:

Այսպես, հիմնարկները մարզագույքով համալրելու հարցում հավասար մոտեցում չի ցուցաբերվում: Համալրումները հիմնականում կատարվում են հասարակական կազմակերպությունների, բարեգործական ծրագրերի կամ անհատների կողմից: Ի դեպ, գործարկումից հետո մարզասարքերով չեն համալրվել «Արմավիր», «Կոշ» «Նուբարաշեն» և «Սևան» ՔԿՀ-ները, իսկ «Գորիս» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ները համալրված են ինքնաշեն պատրաստված մարզագույքով:

Միասնական մոտեցում չի ցուցաբերվում անսարք մարզասարքերը վերանորոգելու հարցում: Օրինակ, «Արթիկ» ՔԿՀ-ում մարզասարքերը մեխանիկական են, և հնարավոր անսարքությունները վերացվում են տեղում՝ ազատագրկված անձանց կողմից: «Աբովյան» ՔԿՀ-ում առկա է 1, «Արմավիր» ՔԿՀ-ում՝ 2 անսարք վազբուդի, սակայն նշված հիմնարկները համապատասխան միջոցներ չունեն այդ մարզասարքերը վերանորոգելու համար:

Բացի այդ, բացակայում է մարզասրահներից օգտվող ազատագրկված անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու հարցում միասնական մոտեցումը:

Ինչպես տեսնում ենք, մարզասրահների հագեցվածության աստիճանը տարբեր է, քանի որ դրանք մարզագույքով համալրելու հարցում հավասար մոտեցում չի ցուցաբերվում: Ավելին, բավարար ուշադրություն չի դարձվում մարզագույքերի անսարքությունները վերացնելուն և մարզասրահներից օգտվող

⁹³ 2019 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 19-56-19-67 հարցումների պատասխաններ:

անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելուն: Մինչդեռ նման հաշվառում իրականացնելը հնարավորություն կտա բացահայտել որոշակի օրինաչափություններ և առաջարկել խնդիրների լուծման արդյունավետ միջոցներ:

Զբոսանք

Ազատագրկված անձինք ունեն հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության իրավունք, որի ապահովումը հիմնարար նշանակություն ունի ինչպես առողջության պահպանման, այնպես էլ հետագայում սոցիալական վերահիստեգրումը խթանելու տեսանկյունից:

Ներպետական կարգավորումների համաձայն՝ կալանավորված անձանց զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված տարածքում: Զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական 1 ժամից: Կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ 2 ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ: Դատապարտյալները օգտվում են առնվազն 1 ժամ, իսկ անչափահաս դատապարտյալները՝ առնվազն 2 ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից: Պատժախցում պահվող կալանավորված անձինք և դատապարտյալները ևս իրավունք ունեն օգտվելու ամենօրյա՝ 1 ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից:

Ներքին կանոնակարգը առանձնացնում է ազատագրկված անձանց զբոսանքի իրավունքի ապահովման որոշ ընթացակարգեր: Օրինակ, երեխա ունեցող անձանց համար պետք է հատկացված լինի զբոսանքի համար նախատեսված՝ կանաչապատված կամ խաղահրապարակ ունեցող բակ, իսկ անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների, զանազան խաղերով ու սպորտով զբաղվելու համար:

Զբոսահրապարակների պայմանների և նյութատեխնիկական հագեցվածության վերաբերյալ բազմաթիվ խնդիրներ են արձանագրվել տարբեր կառույցների կողմից:

Այսպես, քրեակատարողական հիմնարկների զբոսահրապարակները մեծամասամբ նեղ, փոքր մակերեսով տարածքներ են՝ սահմանափակ տեսադաշտով, որտեղից տեսանելի է միայն երկինքը («Երևան-Կենտրոն»)⁹⁴: Այդ տարածքներում տեղադրված չեն համապատասխան ծածկեր՝ եղանակային տարբեր պայմաններից պատասպարվելու կամ պաշտպանվելու համար («Աբովյան», «Երևան-Կենտրոն», «Նուբարաշեն», «Վանաձոր»): Զբոսանքի համար


⁹⁴«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2019 թ., <http://bit.do/fpPb4>, էջ 17:

հատկացված որոշ տարածքներում նույնիսկ նկատվում է մաքրման կամ վերանորոգման աշխատանքներ կատարելու կարիք («Հրագրան», «Նուբարաշեն»): Խնդրահարույց է նաև այն, որ «Արմավիր» և «Կոշ» ՔԿՀ-ներից բացի մնացած բոլոր հիմնարկների երկարատև կամ կարճատև տեսակցության տեղամասերը չունեն զբոսաբակեր, ինչը նշանակում է, որ ազատագրված անձանց տեսակցության եկած անձինք, այդ թվում՝ անչափահասները, չեն կարող օգտվել զբոսանքի հնարավորությունից⁹⁵:

Կարող ենք եզրակացնել, որ ազատագրված անձանցից շատերը հրաժարվում են զբոսանքից, քանի որ վերը թվարկված խնդիրների պատճառով նրանք չեն կարողանում այդ տարածքներում անցկացնել իրենց ակտիվ հանգիստը կամ զբաղվել մարմնամարզությամբ:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանմամբ՝ քրեակատարողական հիմնարկներում զբոսանքի դուրս եկած կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ հաշվառում չի իրականացվում: Հաշվառվում են միայն զբոսանքից հրաժարվելու դեպքերը՝ չառանձնացնելով կալանավորված անձանց և դատապարտյալներին: Ընդ որում, հաշվառում իրականացնելիս չի նշվում, թե յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ քանի անգամ և ինչ պատճառով է հրաժարվել զբոսանքից:


Այսպես, ըստ արդարադատության նախարարության տրամադրած պաշտոնական տվյալների՝ 2018 թվականին արձանագրվել է ազատագրված անձանց կողմից զբոսանքից հրաժարվելու 47.575 դեպք (Տե՛ս Աղյուսակ 9)⁹⁶:



⁹⁵ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց, Երևան, 2019թ., <http://bit.do/fpPch>, էջեր 234-239:

⁹⁶ 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ 19-47 հարցման պատասխան:

2019 թվականի 1-ին կիսամյակում զբոսանքից հրաժարվելու 33.738 դեպք (Տե՛ս Աղյուսակ 10)⁹⁷:



Այսպիսով, վիճակագրական տվյալների վերլուծությունը փաստում է, որ զբոսանքից հրաժարվելու դեպքերը բավականին շատ են, մինչդեռ դրանք նվազեցնելու ուղղությամբ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվում, քանի որ մի կողմից զբոսանքի համար հատկացված տարածքներն ապահովված չեն բավարար նյութատեխնիկական պայմաններով, մյուս կողմից էլ չեն բացահայտվում զբոսանքից հրաժարվելու պատճառները:

⁹⁷ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

Գլուխ 5

Ազատագրկված անձանց կապն արտաքին աշխարհի հետ

Ազատագրկված անձանց վերասոցիալականացման վրա դրական ազդեցություն է թողնում արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը, որի բացակայությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ նրանց հոգեկան առողջության, վարքագծի և հոգեվիճակի վրա: Արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու համար կարևոր է, որպեսզի կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվեն կարճատև և երկարատև տեսակցություններ, կարճաժամկետ մեկնումներ, հեռախոսազանգ և տեսազանգ:

Հիմնարկի վարչակազմը պարտավոր է համապատասխան պայմաններ նախատեսել ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ազատագրկված անձանց կապն ապահովելու համար՝ այդ նպատակով ստեղծելով կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ և լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:


Կարճատև տեսակցություններ

Ներպետական կարգավորումների համաձայն՝ կալանավորված անձանց ամսվա ընթացքում տրամադրվում է մինչև 3 ժամ տևողությամբ առնվազն 2 կարճատև տեսակցություն: Դատապարտյալներին կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն 1 անգամ՝ մինչև 4 ժամ տևողությամբ: Ազատագրկված անձինք կարճատև տեսակցություն կարող են ունենալ մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ: Ընդ որում, ազատագրկված անձանց խնդրանքով երկարատև տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ:


ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանման համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում կարճատև տեսակցությունների առանձնացված հաշվառում՝ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) չի իրականացվում: Հաշվառվում է միայն տրամադրված տեսակցությունների ընդհանուր թիվը: Չեն հաշվառվում յուրաքանչյուր ազատագրկված անձին տրամադրված կարճատև տեսակցության քանակը, տևողությունը, տեսակցության եկած անձանց հետ կապի և թվաքանակի վերաբերյալ տվյալները: Այսինքն՝ պաշտոնական տեղեկատվություն այն մասին, թե յուրաքանչյուր կալանավորված անձի կամ դատապարտյալի քանի կարճատև տեսակցություն է տրամադրվել, ինչ տևողությամբ և ում հետ, առկա չէ: Հաշվառում

չի իրականացվում նաև երկարատև տեսակցությունը կարճատև տեսակցությամբ փոխարինելու դեպքերի վերաբերյալ:

Այսպես, ըստ պաշտոնական տվյալների, 2018 թվականին ազատազրկված անձանց տրամադրվել է 17.150 կարճատև տեսակցություն (Տե՛ս Աղյուսակ 11)⁹⁸:



2019 թվականի 1-ին կիսամյակում ազատազրկված անձանց տրամադրվել է 6235 կարճատև տեսակցություն (Տե՛ս Աղյուսակ 12)⁹⁹:



Վիճակագրական տվյալների համադրման արդյունքում ակնհայտ է դառնում, որ ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019 թվականի 1-ին

⁹⁸ 2018 թվականի հունիսի 24-ի թիվ 19-30 հարցման պատասխան:

⁹⁹ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

կիսամյակում կարճատև տեսակցությունների գերակշիռ մասը տրամադրվել է «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում, իսկ նվազագույն ցուցանիշը արձանագրվել է «Գորիս», «Երևան-Կենտրոն» և «Կոշ» ՔԿՀ-ներում:

Նշենք, որ կարճատև տեսակցություն տրամադրելու կարգը սահմանում է ներքին կանոնակարգը, ըստ որի՝ կարճատև տեսակցությունը տրամադրվում և անցկացվում է աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-17:00-ը ընկած ժամանակահատվածում: Այս սահմանափակումը գործնականում կարող է բազմաթիվ դժվարություններ առաջացնել: Օրինակ, ինչպես գիտենք, քրեակատարողական հիմնարկները տեղակայված են բնակելի տարածքներից բավականաչափ հեռավորության վրա և ապահովված չեն տրանսպորտային հաղորդակցության միջոցներով, ինչը կարող է խոչընդոտել, որպեսզի տեսակցության եկած հարազատները կամ մտերիմները չհասցնեն տեսակցել ազատագրված անձանց հետ՝ աշխատանքային օրվա ավարտին հիմնարկ հասնելու պատճառով:


Երկարատև տեսակցություններ

Դատապարտյալներին միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է 2 ամսվա ընթացքում առնվազն 1 անգամ՝ մինչև 3 օր տևողությամբ: Տեսակցությունները տրամադրվում են աշխատանքային օրերին:


ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանման համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում երկարատև տեսակցությունների դեպքում ևս հաշվառվում են միայն տրամադրված տեսակցությունների թվային տվյալները: Չի իրականացվում յուրաքանչյուր դատապարտյալին տրամադրված երկարատև տեսակցության քանակի, տևողության, տեսակցության եկած անձանց հետ կապի և թվաքանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում: Այսինքն՝ պաշտոնական տեղեկատվություն այն մասին, թե յուրաքանչյուր դատապարտյալի քանի երկարատև տեսակցություն է տրամադրվել, ինչ տևողությամբ և ում հետ, առկա չէ:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրված վիճակագրական տվյալների՝ 2018 թվականին դատապարտյալներին ընդհանուր առմամբ տրամադրվել է 1662 երկարատև տեսակցություն (Տե՛ս Աղյուսակ 13)¹⁰⁰:

¹⁰⁰ 2019 թվականի հուլիսի 16-ի թիվ 19-37 հարցման պատասխան:



2019 թվականի 1-ին կիսամյակում դատապարտյալներին տրամադրվել է 560 երկարատև տեսակցություն (Տե՛ս Աղյուսակ 14)¹⁰¹:



Վիճակագրական տվյալների համադրման արդյունքում տեսնում ենք, որ և 2018 թվականին, և 2019 թվականի 1-ին կիսամյակում ամենաշատ տեսակցությունները տրամադրվել են «Արմավիր», իսկ ամենաքիչը՝ «Երևան-Կենտրոն» և «Աբովյան» ՔԿՀ-ում: Ընդ որում, 2019 թվականի 1-ին կիսամյակում «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի դատապարտյալներին երկարատև տեսակցություն չի տրամադրվել:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի ազատազրկված անձանց երկարատև տեսակցություններ չեն տրամադրվում կամ քիչ են տրամադրվում

¹⁰¹ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

համապատասխան սենյակի բացակայության պատճառով¹⁰², ինչը ընթացակարգային լուրջ բացթողում է և խոչընդոտում է ազատագրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի արդյունավետ իրացմանը: Ճիշտ է, անհրաժեշտության դեպքում երկարատև տեսակցությունները կազմակերպվում են «Նուբարաշեն» կամ «Արմավիր» ՔԿՀ-ներում, սակայն մի կողմից հիմնարկից հիմնարկ տեղափոխությունը լրացուցիչ ռեսուրսներ և ծախսեր է պահանջում, մյուս կողմից էլ «Նուբարաշեն» կամ «Արմավիր» ՔԿՀ-ների երկարատև տեսակցությունների սենյակները դժվարությամբ են բավարարում այդ հիմնարկների ազատագրկված անձանց նույն իրավունքի ապահովմանը:

Ներպետական կարգավորումների համաձայն՝ երկարատև տեսակցության իրավունք ունեին միայն դատապարտյալները: 2019 թվականի օրենսդրական բարեփոխումների շրջանակում վերացավ այդ արգելքը, և երկարատև տեսակցության իրավունք տրվեց նաև կալանավորված անձանց¹⁰³:


Այսպես, կալանավորված անձանց միայն մերձավոր ազգականների հետ տրամադրվում է 2 ամսվա ընթացքում առնվազն 1 անգամ մինչև 3 օր տևողությամբ երկարատև տեսակցություն: Կալանավորված անձանց խնդրանքով երկարատև տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ, սակայն, ինչպես արդեն նշել ենք, նման հաշվառում չի իրականացվում: Հաշվառվում են միայն տրամադրված տեսակցությունների թվային տվյալները:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած պաշտոնական տվյալների՝ 2019 թվականի հունիսի 29-ից մինչև հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում կալանավորված անձանց տրամադրվել է 127 երկարատև տեսակցություն (Տե՛ս Աղյուսակ 15)¹⁰⁴:

¹⁰²«ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն չունի երկարատև տեսակցության սենյակներ», <http://bit.do/fpPgn>:

¹⁰³«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPg3>, հոդված 2:

¹⁰⁴ 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 19-85 հարցման պատասխան:



Նշված բարեփոխումը, ըստ էության, միտված է կալանավորված անձանց՝ արտաքին աշխարհի և ընտանիքի հետ կապը պահպանելուն: Սակայն գործնականում արձանագրվում են դեպքեր, երբ սենյակների սահմանափակ թվի պատճառով ազատագրված անձանց երկարատև տեսակցությունը տրամադրվում է 2 օր տևողությամբ¹⁰⁵: Ընդ որում, ներպետական կարգավորումներն ամրագրում են տեսակցությունների նվազագույն քանակը: Սակայն ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև տեսակցություններ տրամադրելիս հիմնարկի վարչակազմը սահմանափակվում է նվազագույն քանակով մասամբ նաև այն պատճառով, որ սենյակների քանակը գործնականում չի բավարարում նվազագույնից ավել տեսակցություններ տրամադրելու համար:


Կարճաժամկետ մեկնումներ

Ներպետական կարգավորումների համաձայն՝ կալանավորված անձանց կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, կալանավորված անձանց կամ նրանց ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետ) դեպքում: Դատապարտյալներին կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են ինչպես անձնական բացառիկ հանգամանքների դեպքում, այնպես էլ սոցիալական վերականգնման նպատակով: Կարճաժամկետ մեկնումները կարող են տրամադրվել մինչև 7 օր տևողությամբ՝ չհաշված մեկնման և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը:

¹⁰⁵«Կալանավորված անձանց երկարատև տեսակցության իրավունքը պատշաճ չի ապահովվում. Պաշտպանն ամփոփում է ՔԿՀ-ներ չհայտարարված այցերի արդյունքները», <http://bit.do/fpPh4>:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանմամբ՝ քրեակատարողական հիմնարկներում կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու վերաբերյալ առանձնացված հաշվառում՝ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) չի իրականացվում: Հաշվառվում են միայն տրամադրված մեկնումների թվային տվյալները: Հաշվառում չի իրականացվում տրամադրված կարճաժամկետ մեկնումների օրերի, այդ նպատակով ներկայացված դիմումների, դրանց հաստատման, մերժման կամ բողոքարկման քանակի և դեպքերի վերաբերյալ:


Ըստ արդարադատության նախարարությունից ստացված պաշտոնական տվյալների՝ 2018 թվականին ազատազրկված անձանց տրամադրվել է 261 կարճաժամկետ մեկնում: Ի դեպ, կարճաժամկետ մեկնումների կեսից ավելին տրամադրվել է «Վարդաշեն» ՔԿՀ-ի ազատազրկված անձանց այն դեպքում, երբ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում կարճաժամկետ մեկնում չի տրամադրվել (Տե՛ս Աղյուսակ 16)¹⁰⁶:




2018 թվականին 261 մեկնումներից 180-ը տրվել է սոցիալական վերականգնման նպատակով, 81-ը՝ անձնական բացառիկ հանգամանքների կապակցությամբ: Ընդ որում, սոցիալական վերականգնման նպատակով տրված մեկնումների կեսից ավելին տրամադրվել է «Վարդաշեն» ՔԿՀ-ի ազատազրկված անձանց: Նույն ժամանակահատվածում «Վանաձոր» և «Հրազդան» ՔԿՀ-ների ազատազրկված անձանց սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումներ ընդհանրապես չեն տրամադրվել: «Վարդաշեն» ՔԿՀ-ից բացի մնացած բոլոր հիմնարկներում կարճաժամկետ մեկնումները

¹⁰⁶ 2019 թվականի հուլիսի 16-ի թիվ 19-37 հարցման պատասխան:

տրամադրվել են մեծամասամբ անձնական բացառիկ հանգամանքների կապակցությամբ (Տե՛ս Աղյուսակ 17):



2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ազատազրկված անձանց տրամադրվել է 26 կարճաժամկետ մեկնում: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, նշված ժամանակահատվածում մեկնումներ չեն տրվել «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն», «Հրազդան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում: Ամենաշատ մեկնումները տրամադրվել են «Աբովյան» ՔԿՀ-ում: Ճիշտ է, հնարավոր է մինչև 2019 թվականի ավարտը ազատազրկված անձանց տրամադրված կարճաժամկետ մեկնումների թիվը ավելացած լինի, սակայն առկա ցուցանիշը բավարար չէ ընտանիքի անդամների և արտաքին աշխարհի հետ կապը պահպանելու տեսանկյունից: (Տե՛ս Աղյուսակ 18)¹⁰⁷:



¹⁰⁷ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

Վերջին օրենսդրական փոփոխությունների շրջանակում վերացվել է կարճաժամկետ մեկնում չտրամադրելը միայն անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանի հետ կապելու արգելքը¹⁰⁸: Այսինքն՝ անկախ նրանից՝ ազատազրկված անձի մոտ առկա է, օրինակ, վտանգավոր ռեցիդիվ, թե ոչ, նրան կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած պաշտոնական տվյալների՝ նշված փոփոխությունից հետո առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված 12 անձի տրամադրվել է 16 կարճատև մեկնում: Մեկ դատապարտյալի, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայությամբ, անձնական բացառիկ հանգամանքի կապակցությամբ, տրամադրվել է կարճաժամկետ մեկնում¹⁰⁹:

Հ/Հ	ՔԿՀ	Անձ		Կարճաժամկետ մեկնում	
		Առանձապես ծանր հանցագործություն	Առանձապես վտանգավոր ռեցիդիվ	Անձնական բացառիկ հանգամանք	Սոցիալական վերականգնում
1.	«Արովյան»	1	1	2	1
2.	«Արմավիր»	2 ցմահ	-	2	-
3.	«Վարդաշեն»	2	-	-	4
4.	«ԴՀ»	2	-	-	3
5.	«Կոչ»	2	-	2	-
6.	«Արթիկ»	2	-	-	2
7.	«Սևան»	1	-	1	-
Ընդամենը		12	1	7	10
		13		17	

Կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու վերաբերյալ ներպետական իրավակարգավորումների վերլուծության արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և բացթողումներ:

Այսպես, կարճաժամկետ մեկնման հետ կապված ծախսերը հոգում են կալանավորված անձինք կամ դատապարտյալները: Անվճարունակ լինելու դեպքում մեկնումների հետ կապված ծախսերը պետության հաշվին կատարելու հնարավորություն նախատեսված է միայն դատապարտյալների համար: Խնդիրն այն է, որ դատապարտյալների զբաղվածության ցուցանիշը բավականին ցածր է, իսկ կալանավորված անձինք ապահովված չեն վարձատրվող աշխատանքով: Հետևաբար այդ նպատակով նախատեսված ծախսերը հոգալը կարող է լրացուցիչ խոչընդոտներ առաջացնել ինչպես ազատազրկված անձանց, այնպես էլ նրանց ընտանիքների համար:

¹⁰⁸ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPjV>, հոդված 6, կետ 1:

¹⁰⁹ 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 19-85 հարցման պատասխան:

Սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են միայն դատապարտյալներին: Բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել մինչև 1 ամիս տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել 3 օրը: Կիսաբաց, կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է տարվա ընթացքում 2 անգամից ոչ ավելի:

Ինչպես տեսնում ենք, կալանավորված անձանց սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու հնարավորություն նախատեսված չէ, ինչը հատկապես երկարատև կալանավորման դեպքում նախադրյալներ չի ստեղծում ազատագրկման բացասական հետևանքները կանխելու և աստիճանական սոցիալական վերականգնում ապահովելու համար:

Այսպիսով, ներպետական կարգավորումների և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում ի հայտ եկած խնդիրները թույլ են տալիս եզրակացնելու, որ գործնականում կարճաժամկետ մեկնումները չեն նպաստում ազատագրկված անձանց սոցիալական վերականգնմանը: Ավելին, բացակայում է բոլոր ազատագրկված անձանց համար այդ իրավունքը իրագործելի դարձնելու հարցում հավասար մոտեցումը:


Հեռախոսակապ

Ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ազատագրկված անձանց կապը պահպանելու կարևոր միջոցներից է հեռախոսակապը, որից օգտվելու համար քրեակատարողական հիմնարկներում ստեղծվում են համապատասխան պայմաններ: Այսպես, հեռախոսակապը կազմակերպվում է տեղադրված քարտային հեռախոսակապի հանգույցների միջոցով, որոնց համար նախատեսված քարտերը ազատագրկված անձինք կարող են ձեռք բերել հիմնարկի կրպակից (խանութից) կամ ստանալ հանձնուքով (ծանրոցով): Ազատագրկված անձինք հեռախոսակապից օգտվում են հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով: Օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 15 րոպեն, սակայն հիմնավոր պատճառաբանության դեպքում հիմնարկի վարչակազմը կարող է խոսակցության տևողությունը երկարացնել ևս 10 րոպեով:

Հարցմանը ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ քրեակատարողական հիմնարկներում հեռախոսակապից օգտված անձանց առանձնացված հաշվառում՝ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) չի իրականացվում: Ուստի

հնարավոր չէ պարզել, թե յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ քանի անգամ է օգտվել հեռախոսակապից և ինչ հաճախականությամբ: Հաշվառվում են միայն տրամադրված հեռախոսազանգերի թվային տվյալները:


Ըստ արդարադատության նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների՝ 2018 թվականին ազատազրկված անձինք 4440 անգամ օգտվել են հեռախոսակապից: Ընդ որում, ամենաշատը օգտվել են «Նուբարաշեն» և «Արմավիր», իսկ ամենաքիչը՝ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ներում (Տե՛ս Աղյուսակ 19)¹¹⁰:



2019 թվականի 1-ին կիսամյակում ազատազրկված անձինք 8412 անգամ են օգտվել հեռախոսակապից: Հեռախոսակապից ամենաշատը օգտվել են «Աբովյան» և «Արմավիր», ամենաքիչը՝ «Կոշ» և «Սևան» ՔԿՀ-ներում (Տե՛ս Աղյուսակ 20)¹¹¹:

¹¹⁰ 2019 թվականի հունիսի 16-ի թիվ 19-37 հարցման պատասխան:

¹¹¹ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:



Հեռախոսակապից օգտվելու համար նախատեսված քարտերը ազատագրված անձինք իրենց միջոցներով գնում են հիմնարկի կրպակից (խանութից) կամ ստանում են հանձնուքի (ծանրոցի) միջոցով: Մեկ քարտը արժե 1000 դրամ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատագրված անձանց զբաղվածության տոկոսը բավականին ցածր է, և վարձատրվող աշխատանքներում ընդգրկված չեն կալանավորված անձինք և անչափահասները, կարող ենք ենթադրել, որ հիմնարկի ստեղծած զբաղվածության միջոցները բավարար չեն քարտի համար անհրաժեշտ ծախսը ինքնուրույն հոգալու համար: Մյուս կողմից էլ քարտը հանձնուքի (ծանրոցի) միջոցով ստանալը հավելյալ ծախս է ենթադրում ազատագրված անձանց ընտանիքների և հարազատների համար:

Ներքին կանոնակարգի համաձայն՝ հեռախոսակապից թույլատրվում է օգտվել աշխատանքային օրերին: Ոչ աշխատանքային օրերին չի թույլատրվում օգտվել հեռախոսակապից: Նշված սահմանափակումը, սակայն, կարող է հանգեցնել ընտանիքի անդամների հետ կապի թուլացմանը, և ըստ այդմ՝ անընդունելի է հատկապես անչափահասների և կանանց դեպքում: Ազատագրված կանանցից շատերը անչափահաս երեխաներ ունեն, որոնց հետ անհրաժեշտ է ամենօրյա հաղորդակցում: Ազատագրված անչափահասների համար ևս կարևոր է ծնողների հետ ամենօրյա հաղորդակցման հնարավորություն ընձեռելը¹¹²:

Տեսագանգ


Ներպետական օրենսդրությունը կալանավորված անձանց և դատապարտյալների կապը ընտանիքի և արտաքին աշխարհի հետ պահպանելու

¹¹² «ՀՀ ԱՆ «Արմավյան» ՔԿՀ-ում առկա խնդիրների արդյունավետ կարգավորումը Դիտորդների խմբի ուշադրության կենտրոնում է», <http://bit.do/fpPms>:

համար նախատեսում է մի շարք այդ թվում՝ տեսակցությունների և հեռախոսագանգի հնարավորություն: Սակայն որոշ ազատազրկված անձինք, հատկապես օտարերկրյա քաղաքացիները, չէին կարողանում օգտվել ընձեռված հնարավորությունից իրենց մտերիմների՝ արտերկրում գտնվելու կամ արտերկրի հետ հեռախոսակապի սակագների ոչ մատչելի լինելու պատճառով:

Նշված խոչընդոտը վերացնելու նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել¹¹³, ինչի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 1-ից քրեակատարողական հիմնարկներում մեկնարկել է տեսագանգեր տրամադրելու հնարավորությունը¹¹⁴: Նոր սահմանված ընթացակարգի համաձայն՝ այն ազատազրկված անձինք, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն կարողանում տեսակցություն ունենալ իրենց ազգականների հետ, կարող են ամսվա ընթացքում 2 անգամ մինչև 20 րոպե տևողությամբ օգտվել տեսագանգից:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների՝ 2018 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին օտարերկրացի ազատազրկված անձանց տրամադրվել է 61 տեսագանգ, որից 41-ը՝ կալանավորված անձանց, 20-ը՝ դատապարտյալներին (Տե՛ս Աղյուսակ 21)¹¹⁵:




2019 թվականի 1-ին կիսամյակում տեսագանգի հնարավորությունից օգտվել է 273 օտարերկրացի ազատազրկված անձ, որից 146-ը՝ «Վարդաշեն», 78-ը՝

¹¹³ «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1599-Ն որոշում, <http://bit.do/fpPmS>:

¹¹⁴ «Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց տեսագանգի միջոցով հաղորդակցվելու հնարավորություն է ստեղծվում», <http://www.moj.am/article/2002>:

¹¹⁵ 2019 թվականի հուլիսի 16-ի թիվ 19-37 և 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ 19-47 հարցումների պատասխաններ:

«Աբովյան», 29-ը՝ «Նուբարաշեն», 18-ը՝ «Արմավիր», իսկ 2-ը՝ «Վանաձոր» ՔԿՀ-ներից (Տե՛ս Աղյուսակ 22)¹¹⁶:



Նշված փոփոխությունը, ըստ էության, կարևոր նշանակություն ունի հատկապես օտարերկյա քաղաքացիների՝ ընտանիքի հետ կապը պահպանելու տեսանկյունից: Սակայն պետք է փաստել, որ միայն տեսազանգ տրամադրելը բավարար չէ նրանց վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը նպաստելու համար: Անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար օտարերկրացի ազատազրկված անձանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացումը, ինչպես նաև անհրաժեշտ է մշակել և կիրառել այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն լեզվական խոչընդոտների հաղթահարմանը և կհեշտացնեն նրանց՝ գրադարաններից, մարզասրահներից օգտվելու և ընթերցանությամբ զբաղվելու գործընթացը:

¹¹⁶ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 19-71 հարցման պատասխան:

Գլուխ 6

Խոցելի խմբերի ազատագրկված անձանց վերասոցիալականացման առանձնահատկությունները

Ազատագրկումը, առավել ևս՝ երկարաժամկետ, բացասաբար է անդրադառնում մարդու կյանքի և առողջության վրա քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության, ոչ պատշաճ կենսապայմանների, հասարակությունից մեկուսացվածության, զբաղվածությունը ապահովող ոչ բավարար միջոցառումների և ծրագրերի, խնամքի բացակայության և մի շարք այլ պատճառներով: Որոշ խմբեր առավել խոցելի են, քանի որ բոլոր ազատագրկված անձանց համար ընդհանուր խնդիրներից բացի, նրանք բախվում են նաև իրենց որոշակի կարգավիճակով պայմանավորված խնդիրների, որոնք պետք է հատուկ ուշադրության արժանանան վերասոցիալականացման ընթացքում:

Ազատագրկված կանայք

Ազատագրկման վայրերը պատմականորեն կառուցված և նախատեսված են եղել տղամարդկանց համար, ուստի դրանց ճարտարապետական կառուցվածքը և անվտանգության համակարգը հարմարեցված չեն կանանց գենդերային առանձնահատկություններին¹¹⁷: Այնուհետև կանայք ազատագրկված անձանց մեջ փոքրամասնություն են կազմում, ինչը ևս նրանց ներհատուկ կարիքներն անուշադրության մատնելու պատճառ է դառնում¹¹⁸: Նշված գործոններից բացի ազատագրկված կանանց խոցելի են դարձնում նաև այն ռիսկերը, որոնք առաջանում են ազատագրկման հետևանքով՝ զոհայնացում, սեռական բռնության ենթարկվելու վտանգ, հատուկ առողջապահական ծառայությունների և խնամքի միջոցների, արտաքին աշխարհի հետ հաղորդակցության և ընտանիքի անդամների հետ կապի բացակայություն և այլն:

Ուստի ազատագրկված կանանց արդյունավետ վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը նպաստելու տեսանկյունից կարևոր է ուշադրության կենտրոնում պահել կանանց ներհատուկ կարիքները և ապահովել բոլոր անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը:

Ճիշտ է, ներպետական օրենսդրությունը երաշխիքներ սահմանում է ազատագրկված անձանց աշխատանքի, կրթության և արտաքին աշխարհի հետ

¹¹⁷«Կանանց իրավունքները «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հկ, Երևան, 2015 թ., <http://bit.do/fnesm>, էջ 11:


¹¹⁸«Կանայք ազատագրկման վայրերում. ձեռնարկ գենդերային զգայուն մշտադիտարկման համար», Միջազգային բանտային բարեփոխումներ, 2015 թ., <http://bit.do/fpPng>, էջ 8:

հաղորդակցվելու իրավունքի իրացման համար, սակայն գործող ընթացակարգերը դեռևս բավարար չեն ազատագրված կանանց արդյունավետ վերասոցիալականացմանը նպաստելու տեսանկյունից:

Այսպես, աշխատանքային զբաղվածությունն ապահովող ծրագրերը, որոնք իրականացվում են «Աբովյան» ՔԿՀ-ում, հասանելի են կին դատապարտյալներին: Մինչդեռ երկարատև ազատագրվումը և հասարակությունից մեկուսացվածությունը բացասաբար են անդրադառնում կանանց հոգեկան առողջության, ընտանեկան կապերի պահպանման և սոցիալական վերականգնման վրա: Ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ աշխատանքային զբաղվածության միջոցները կալանավորված կանանց նույնպես հասանելի դարձնելու համար:

Հասարակության խտրական վերաբերմունքի և պիտակավորման պատճառով կանայք ազատվելուց հետո դժվարությամբ են վերաինտեգրվում, ինչպես նաև վերականգնում նախկին աշխատանքը կամ նոր աշխատանք գտնում: Այս առումով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ազատվելուց հետո կանանց աջակցություն տրամադրելու, աշխատանքով ապահովելու, այդպիսով նրանց արդյունավետ վերաինտեգրմանը նպաստելու համար:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ազատագրված կանանցից ոմանք չունեն կրթություն կամ ունեն 6-9-ամյա կրթություն: Բավականին քիչ է բարձրագույն կրթություն ունեցող ազատագրված կանանց թիվը: Փոխարենը շատ են միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցող կանայք (Տե՛ս Աղյուսակ 23):



Մինչդեռ քրեակատարողական հիմնարկներում առկա հանրակրթական ծրագրերը հասանելի են կամ մինչև 19 տարեկան ազատագրված անձանց, կամ 18 տարեկանից բարձր արական սեռի դատապարտյալներին: Ազատագրված

կանանց շրջանում բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստանալու դեպքեր ևս վերջին մի քանի տարիների ընթացքում չեն արձանագրվել: Այսինքն՝ դեռևս բավարար ուշադրություն չի դարձվում ազատագրկված կանանց համար հանրակրթական ծրագրերը հասանելի դարձնելուն կամ կանանց շրջանում բարձրագույն կրթություն ստանալը խրախուսելուն:

Ճիշտ է, մասնագիական ուսուցման դասընթացներն իրականացվում են «Աբովյան» ՔԿՀ-ում, սակայն մինչ օրս չի ուսումնասիրվել, թե այդ դասընթացները ինչպես են նպաստում կանանց ուղղմանը, ազատագրկման բացասական հետևանքները նվազեցնելուն կամ ազատ արձակվելուց հետո աշխատանք գտնելուն: Ավելին, որոշ դասընթացներ՝ վարսահարդարման և խոհարարական հմտություններ, հելլոնագործություն, գորգագործություն, խորացնում են կանանց վերաբերյալ հասարակության մեջ առկա գենդերային կարծրատիպերը:

Կանանց գենդերային առանձնահատկությունները պատշաճ կերպով հասցեագրված չեն ոլորտը կարգավորող իրավական ակտերում, ինչի պատճառով զբոսանքը, երկարատև կամ կարճատև տեսակցությունները, կարճաժամկետ մեկնումները, հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելու հնարավորություններն ազատագրկված կանանց և տղամարդկանց տրամադրվում են նույն ընթացակարգով:

Մինչդեռ պետք է նկատել, որ ազատագրկումը կանանց վրա առավել ծանր հետևանքներ է թողնում՝ շատ հաճախ նվազագույնի հասցնելով կապն արտաքին աշխարհի և ընտանիքի անդամների հետ: Ազատագրկումը կանանց խոցելի է դարձնում հարազատների կողմից մերժված լինելու և ազատագրկվածի խարանք կրելու տեսանկյունից: Ամուսինները մեծամասամբ լքում են նրանց, զրկում երեխաների հետ կապից: Մյուս կողմից էլ կանայք խուսափում են հարազատների, հատկապես երեխաների հետ տեսակցություն ունենալուց, քանի որ չեն ցանկանում նրանց հաղորդակից դարձնել բանտային կյանքին: Ընտանիքի անդամների, հատկապես երեխաների հետ կապը կորցնելն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում կանանց հոգեկան առողջության վրա: Սակայն գործնականում անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվում՝ կանանց՝ ընտանիքի հետ կապը պահպանելու և ընտանեկան այցելությունները խթանելու համար¹¹⁹:

Այսպիսով, ինչպես ազատագրկման ընթացքում, այնպես էլ ազատ արձակվելուց հետո անհրաժեշտ է մշակել և կիրառել այնպիսի վերասոցիալականացման ծրագրեր, որոնք հնարավորինս ուշադրության կենտրոնում են պահում կանանց ներհատուկ կարիքները և գենդերային առանձնահատկությունները:

¹¹⁹«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2019թ., <http://bit.do/fpPnw>, էջեր 48-51:

Ազատագրկված անչափահասներ

Ըստ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների՝ 2018 թվականին Հայաստանում դատապարտվածների թիվը կազմել է 1963 (137-ը՝ կին), որից 70-ը՝ անչափահաս (2-ը՝ աղջիկ): Ընդ որում, անչափահաս դատապարտվածներից 10-ը 14-15 տարիքային խմբի ներկայացուցիչներ են, 60-ը՝ 16-17: Անչափահաս դատապարտվածների մեծ մասը՝ 30 անձ, Երևանից է: Անչափահասները հիմնականում դատապարտվել են սեփականության, հասարակական անվտանգության և կյանքի ու առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար: Նրանց շրջանում տարածված հանցագործություններն են գույքի հափշտակումը, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը և թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները: Կայուն թիվ են կազմում այն անչափահասները, որոնք չեն աշխատել և չեն սովորել, ինչպես նաև այն անչափահասները, որոնք հանցագործությունը կատարել են մի խումբ մարդկանց կազմում, այդ թվում՝ մեծահասակների մասնակցությամբ¹²⁰:

Ըստ քրեական օրենսգրքի՝ անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներն են տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը և որոշակի ժամկետով ազատագրկումը: Անչափահասների նկատմամբ պատիժը նշանակելիս դատարանը հաշվի է առնում նրանց կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց վրա այլ անձանց ազդեցությունը:

Ըստ վիճակագրական տվյալների՝ անչափահասների նկատմամբ առավել հաճախ կիրառվող պատժատեսակն ազատագրկումն է: Այսպես, 2018 թվականին 70 անչափահաս դատապարտվածներից 39-ի նկատմամբ կիրառվել է ազատագրկում, 11-ի նկատմամբ՝ այլ պատժատեսակ¹²¹:

Խնդիրը, սակայն, այն է, որ դատարաններն ազատագրկում կիրառում են պատժատեսակների այլընտրանքների բացակայության պատճառով¹²²:

Այսպես, տուգանք պատժատեսակը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Սակայն դատարանները անչափահասների նկատմամբ նշված պատժատեսակը մեծամասամբ չեն կիրառում, քանի որ անչափահասները չունեն ինքնուրույն վաստակ կամ այնպիսի գույք, որի վրա հնարավոր կլինի տարածել բռնագանձում: Հանրային աշխատանքները կարող են կիրառվել միայն անձին ազատագրկման դատապարտելուց հետո: Կալանքը

¹²⁰ «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թվականին» ՀՀ վիճակագրական կոմիտե, <http://bit.do/fpPnQ>:

¹²¹ «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թվականին» ՀՀ վիճակագրական կոմիտե, <http://bit.do/fpPnQ>:

¹²² «Անչափահասների պատժի առանձնահատկությունները ՀՀ-ում», Աննա Մարգարյան, <http://bit.do/fpPn3>, էջ 49:

նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին 16 տարին լրացած անչափահասի նկատմամբ 15 օրից 2 ամիս ժամկետով: Կալանքը բովանդակային առումով ազատազրկման դրսևորում է, որի ներպետական կարգավորումները, սակայն, հակասում են միջազգային իրավական ակտերի պահանջներին: ՀՀ քեակատարողական օրենսգիրքը կալանքի դատապարտված անչափահասների համար չի նախատեսում կրթության ապահովում, մինչդեռ անչափահասների համար կրթությունը պարտադիր է:

Ի դեպ, 1-ին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

1. *նախազգուշացում,*
2. *ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով,*
3. *պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում,*
4. *ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով:*

2018 թվականին դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառվել է 20 անչափահասի նկատմամբ¹²³:

Սակայն ազատազրկման դատապարտելուց հետո դատարանները մեծամասամբ որոշում են պատիժը պայմանականորեն չկիրառել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահասներին ընտանիքից և հասարակությունից մեկուսացնելը և ազատազրկելը բացասաբար են անդրադառնում նրանց զարգացման և հետագա վերասոցիալականացման գործընթացի վրա: 2018 թվականին, օրինակ, ազատազրկման դատապարտված 39 անչափահասից 32-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ անչափահասների վերասոցիալականացումը պետք է սկսել մինչև քրեակատարողական հիմնարկներում հայտնվելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահասները քրեական ենթամշակույթին հարելու հակում ունեն, և նրանց

¹²³ «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թվականին» ՀՀ վիճակագրական կոմիտե, <http://bit.do/fpPnQ>:

արարքները պայմանավորված են հենց այդ ենթամշակույթին անչվելու ցանկությամբ¹²⁴:

Անչափահասների դեպքում կարևոր նշանակություն ունի միջավայրի և շրջապատը գործոնը: Նրանք հիմնականում չեն կարողանում դիմադրել հասակակիցների բացասական ազդեցությանը, քանի որ հակադիր դիրքորոշումը ընկալվում է որպես թուլության նշան: Արդյունքում անչափահասները միանում են հանցավոր վարք և գործողություններ կատարող հասակակիցներին: Անչափահասների հանցավոր վարքագիծը ուսումնասիրելիս պետք է ուշադրության կենտրոնում պահել նաև ընտանիքի գործոնը, մասնավորապես՝ ընտանիքի կենսամակարդակը, ծնողների զբաղվածությունը, նրանց վարքագիծը, ընտանիքի սոցիալական պայմանները, քանի որ ծնողների կողմից ուշադրության պակասը կարող է հանգեցնել երեխայի կողմից հանցագործություն, նաև՝ կրկնահանցագործություն կատարելու ռիսկի ավելացմանը¹²⁵:

Ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ անչափահաս դատապարտյալները պահվում են չափահասներից առանձին: Հայաստանում անչափահասների համար նախատեսված է միայն «Աբովյան» ՔԿՀ-ն, որտեղ պահվում են նաև ազատազրկված կանայք: Անչափահասները «Աբովյան» ՔԿՀ-ում կարող են իրենց պատիժը կրել մինչև 21 տարեկանը:

Անչափահաս ազատազրկված անձանց համար պետությունը պարտավոր է ստեղծել բարելավված կենցաղային պայմաններ: Սակայն անչափահաս ազատազրկված անձինք ապահովված չեն բավարար կենսապայմաններով¹²⁶:

Հիմնարկի վարչակազմը պետք է միջոցներ ձեռնարկի անչափահաս ազատազրկված անձանց ժամանակը նպատակաուղղված կազմակերպելու ուղղությամբ: Այդ նպատակով անչափահաս կալանավորված անձանց համար կազմակերպվում են անգլերենի և համակարգչի դասընթացներ: 2019 թվականի սեպտեմբերից մեկնարկել է հանրակրթությունը, որում ներգրավված են նաև «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող անչափահաս կալանավորված անձինք: Սակայն անհրաժեշտ է ավելացնել զբաղվածության ծավալը և բազմազանությունը՝ ազատազրկված անձանց համար ընտրության ապահովելու հնարավորություն համար:

Մյուս կողմից պետք է նկատել, որ գրադարանից, մարզասրահից, զբոսանքից, տեսակցություններից, կարճաժակետ մեկնումներից և

¹²⁴ «ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ում առկա խնդիրների արդյունավետ կարգավորումը Դիտորդների խմբի ուշադրության կենտրոնում է», <http://bit.do/fpPob>:

¹²⁵ «Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները. վիճակագրական տվյալներ», Գրիշա Բալասանյան, <http://bit.do/fpPoE>, էջ 1:

¹²⁶ «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018թ., <http://bit.do/fqxcn>, էջեր 28-29:

հեռախոսակապից օգտվելու հետ կապված խնդիրները հավասարապես առնչվում են նաև անչափահաս ազատագրկված անձանց, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ գործող ընթացակարգերը դեռևս բավարար չեն անչափահաս ազատագրկված անձանց՝ արտաքին աշխարհի և ընտանիքի հետ կապը պահպանելու և հետագայում նրանց արդյունավետ սոցիալական վերականգնմանը և վերաինտեգրմանը նպաստելու տեսանկյունից:

ԼԳՏՏ ազատագրկված անձինք

Հայաստանը չունի խտրականությունն արգելող օրենք: 2018 թվականին մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը¹²⁷, որը, սակայն, դեռևս չի ընդունվել և ըստ էության չի համապատասխանում հակախտրական օրենսդրության համար սահմանված միջազգային և եվրոպական նվազագույն չափանիշներին: Ի թիվս այլ խնդրահարույց կետերի՝ նախագծում խտրականության արգելքով պաշտպանված հիմքերը սահմանափակ են և չեն պաշտպանում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկվող անձանց¹²⁸:

Ճիշտ է, ՀՀ Սահմանադրությունը և քրեակատարողական ոլորտը կարգավորող օրենսդրությունը պարունակում են խտրականության արգելքի կամ հավասարության ապահովման վերաբերյալ դրույթներ, որոնք, սակայն, դրվագային ու ոչ համապարփակ բնույթ են կրում և չեն տրամադրում իրավական պաշտպանության մեխանիզմներ: Մյուս կողմից էլ պետության համար նշված խնդիրները հրատապ ու առաջնային չեն և որևէ կերպ ներկայացված չեն ոլորտին վերաբերող քաղաքականության փաստաթղթերում:

Ավելին, քրեակատարողական հիմնարկներում չեն գործում խտրականությունը, հոմոֆոբիան և ատելության խոսքի դրսևորումները բացառող կամ սեռական շահագործման դեպքերի կանխարգելմանն ուղղված ներքին ընթացակարգեր, ինչի հետևանքով ազատագրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները պատշաճ իրավական որակում չեն ստանում և արդյունավետ քննության չեն ենթարկվում¹²⁹:

ԼԳՏՏ ազատագրկված անձանց, այսպիսով, խոցելի են դարձնում ինչպես ազատագրկվածի կարգավիճակ ունենալը, այնպես էլ սեռական կողմնորոշմամբ

¹²⁷ «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների և հարակից օրենքների նախագծեր, <http://bit.do/fpPoT>:

¹²⁸ «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների և հարակից օրենքների նախագծեր, <http://bit.do/fpPoT>, Առաջարկություն 19:

¹²⁹ «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2016 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2017թ., <http://bit.do/fneHr>, էջ 115:

կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված կարծրատիպերը և ընկալումները:

Քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձինք իրենց «գրավոր» դիմումի համաձայն պահվում են առանձնացված խցերում: Դիմումի մեջ որպես հիմնավորում նշում են սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը կամ պատիժը այլոց հետ նույն խցում կրելու անհնարինությունը¹³⁰: Այսինքն՝ ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և սեռական ինքնության գաղտնիությունը չի պահպանվում: Ավելին, արձանագրվում են դեպքեր, երբ հիմնարկի աշխատակիցները ԼԳԲՏ անձանց տեսակցության եկած ազգականներին հայտնում են վերջիններիս սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին¹³¹:

Սակայն առանձնացված խցերում գտնվողներից ոչ բոլորն են իրենց նույնականացնում որպես նույնասեռական կամ տրանսգենդեր անձ: Քրեական ենթամշակույթի օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած կամ որոշակի, տվյալ դեպքում՝ սեռական բնույթի հանցագործություններ կատարած ազատազրկված անձինք ևս պահվում են այդ առանձնացված խցերում, որոնք պիտակավորված են, հայտնի են որպես «թռածների», «արվամուլների», «գոմիկների» կամ «այլազգիների» խցեր և էականորեն տարբերվում են նույն հիմնարկի այլ խցերից իրենց անշքությամբ և ոչ բարվոք վիճակով¹³²:

Վարչակազմը մեկնաբանում է, որ ԼԳԲՏ անձանց առանձնացնում են՝ նրանց անվտանգությունը երաշխավորելու կամ սեռական և այլ տիպի բռնություններից, շահագործումից պաշտպանելու նպատակով: Սակայն ԼԳԲՏ անձանց պաշտպանության նպատակով առանձնացնելով՝ հիմնարկի վարչակազմը սահմանափակում է նրանց հասանելիությունը զբաղվածությունն ապահովող աշխատանքային, կրթական կամ այլ ծրագրերին: Առանձնացված խցերում պահվող անձինք չեն ընդգրկվում արհեստագործական աշխատանքներում, համակարգչային, կավագործության, հայոց լեզվի և գրականության, օտար լեզվի կամ այլ դասընթացների և խմբակների մեջ: «Արմավիր» ՔԿՀ-ում նույնիսկ արձանագրվել է դեպք, երբ հիմնարկի պատժախուց տեղափոխված նույնասեռական անձը ապահովված չի եղել արտաքին աշխարհի հետ կապի միջոցով: Պատժախցում չի ունեցել ռադիո և չի կարողանցել օգտվել

¹³⁰«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2016 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2017թ., <http://bit.do/fneHr>, էջ 111:

¹³¹ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում երեք ազատազրկված անձանց կողմից ինքնավնասում կատարելու դեպքի առթիվ քրեական գործ չի հարուցվել, <http://bit.do/fpPpv>:

¹³² ԼԳԲՏ ազատազրկված անձանց պահման պայմանները, Լուսանկարներ, <http://bit.do/fpPr6>:

գրադարանից¹³³: Մինչդեռ նմանատիպ միջոցառումների մատչելիությունը ապահովելով՝ հիմնարկի վարչակազմը կարող է ոչ միայն նվազագույնի հասցնել ազատագրկման բացասական հետևանքները, այլև նպաստել նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը:

Ինչպես գիտենք, ազատագրկված անձինք ունեն չվարձատրվող աշխատանքներում ներգրավվելու հնարավորություն: Չվարձատրվող աշխատանքը ենթադրում է հիմնարկի և խցերի աղբահանություն, տարածքի, միջանցքների, զբոսահրապարակների, գուգարանի, լողասենյակի, կոյուղու մաքրում և այլն: Սակայն քրեակատարողական հիմնարկներում նմանատիպ աշխատանքները պիտակավորված են, համարվում են «նվաստացուցիչ» և կատարվում են ԼԳԲՏ անձանց կողմից¹³⁴:

Խնդիրն այլ բնույթ ունի «Աբովյան» ՔԿՀ-ում: Այնտեղ նույնասեռական կանայք պահվում են մնացած ազատագրկված կանանց հետ միասին: Վարչակազմը նույնասեռական կանանց չի առանձնացնում՝ չպիտակավորելու և նրանց նկատմամբ տարբերակված վերաբերմունք չցուցաբերելու նպատակով: Մինչդեռ «Աբովյան» ՔԿՀ-ում ևս նույնասեռական կանայք ենթարկվում են խտրական վերաբերմունքի ազատագրկված կանանց կողմից¹³⁵:

ԼԳԲՏ անձանց անձնական և ընտանեկան կյանք ունենալու իրավունքն օրենքով կարգավորված չէ, ինչի պատճառով ԼԳԲՏ անձինք ազատագրկման ընթացքում չեն կարող երկարատև տեսակցություն ունենալ, օրինակ, իրենց գուգրնկերների հետ¹³⁶: Այսինքն՝ առկա չեն ԼԳԲՏ ազատագրկված անձանց կապը արտաքին աշխարհի հետ պահպանելուն կամ այդ կապերի խզումը նվազագույնի հասցնելուն ուղղված հատուկ ընթացակարգեր:

Ազատմանը նախապատրաստելու ընթացակարգերը ևս ընդհանուր են բոլոր ազատագրկված անձանց համար և նկատի չեն առնում այն հատուկ կարիքները, որոնք ունեն ԼԳԲՏ անձինք: Օրինակ, առկա չէ ազատմանը նախապատրաստելու փուլում աջակցություն տրամադրելու մեխանիզմ այն ԼԳԲՏ անձանց, որոնց կապը ընտանիքի հետ խզված է: Գոյություն չունի պրոբացիայի ծառայության կամ զբաղվածության կենտրոնների հետ համագործակցություն՝ ուղղված ԼԳԲՏ անձանց կացարանով կամ աշխատանքով ապահովելուն:

¹³³«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2019թ., <http://bit.do/fpPta>, էջեր 38-39:

¹³⁴ «Հանցագործ աշխարհում նույնասեռական տերմինը խարան է ամբողջ կյանքի համար. ԼԳԲՏ ազատագրկված անձանց խնդիրները Հայաստանի բանտերում», <http://bit.do/fpPti>:

¹³⁵«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2019թ., <http://bit.do/fpPta>, էջեր 50-51:

¹³⁶ «Կապն արտաքին աշխարհի հետ. իրավունք, ոչ թե արտոնություն», <http://bit.do/fnote>:

Այսպիսով, ԼԳԲՏ անձանց նկատմամբ դրսևորվող անհանդուրժող վերաբերմունքը, խարանը և խտրական վերաբերմունքը համակարգային բնույթ են կրում և հանգեցնում են նրանց համար անբարենպաստ և անբավարար պայմանների ստեղծմանը, ինչը հետագայում խոչընդոտներ է առաջացնում նաև հասարակության մեջ վերաինտեգրվելիս:

Ցմահ դատապարտյալներ

Հայաստանում առավելագույն պատժաչափը ցմահ ազատազրկումն է: Այն դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում, կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար: Ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք, հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք¹³⁷:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացված պաշտոնական տվյալների՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում ցմահ ազատազրկման ձևով պատիժ է կրում 91 անձ, որից 67-ը փակ, 24-ը՝ կիսափակ ուղղիչ հիմնարկում¹³⁸:

ՔԿՀ	Փակ հիմնարկ	Կիսափակ ուղղիչ հիմնարկ	Ընդամենը
«Նուբարաշեն»	35	10	45
«Արմավիր»	26	9	35
«Արթիկ»	2	5	7
«Երևան-Կենտրոն»	2	0	2
«ԴՀ»	2	0	2
Ընդամենը՝	67	24	91

Տարիներ շարունակ օրենսդրական թերի կարգավորումների, ինչպես նաև համակարգային բնույթ կրող ժխտողական վերաբերմունքի պատճառով ցմահ ազատազրկման դատապարտված անձինք ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության, պայմանական վաղաժամկետ ազատման, տեսակցությունների, կարճաժամկետ մեկնումների և մի շարք այլ երաշխիքներից օգտվելու հնարավորություն չեն ունեցել: Սակայն վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունները միտված են նրանց իրավիճակի բարելավմանը:

Այսպես, 2019 թվականի հունիսի 3-ին ուժը կորցրած է ճանաչվել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշակի ժամկետով ազատազրկման

¹³⁷ ՀՀ քրեական օրենսգրք, <http://bit.do/fpPtp>, հոդված 60:

¹³⁸ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-82 հարցման պատասխան:

դատապարտված անձանցից անջատ պահելու օրենսդրական հիմքը¹³⁹, որի նպատակն է բարձրացնել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վերաառցիալականացման գործընթացի արդյունավետությունը: Խնդիրն այն է սակայն, որ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ միայն 3 ցմահ դատապարտյալ է պահվում որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց հետ¹⁴⁰:

2019 թվականի մեկ այլ օրենսդրական բարեփոխում միտված էր ցմահ դատապարտյալների՝ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու ընթացակարգի հեշտացմանը¹⁴¹: Նշված փոփոխությունից հետո 2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ տեղաբաշխման հանձնաժողովի որոշումներով պատիժը կրելու համար առավել ցածր մեկուսացվածության աստիճանի ուղղիչ հիմնարկ է տեղափոխվել միայն 9 ցմահ դատապարտյալ¹⁴²:

«Արմավիր» ՔԿՀ	Փակ ուղղիչ հիմնարկից կիսափակ ուղղիչ հիմնարկ	5 ցմահ դատապարտյալ
«Նուբարաշեն» ՔԿՀ	Փակ ուղղիչ հիմնարկից կիսափակ ուղղիչ հիմնարկ	4 ցմահ դատապարտյալ

Վերջին օրենսդրական փոփոխությունների շրջանակներում ավելացվել է ցմահ դատապարտյալներին տրամադրվող կարճատև և երկարատև տեսակցությունների թիվը¹⁴³: Այսպես, առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց այժմ տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն 6 կարճատև և 2 երկարատև տեսակցություն: Սակայն արդարադատության նախարարության կողմից ստացված տեղեկատվությունը փաստում է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրված կարճատև և երկարատև տեսակցությունների վերաբերյալ քրեակատարողական հիմնարկներում առանձնացված հաշվառում չի իրականացվում: Ուստի հնարավոր չէ գնահատել, թե նշված փոփոխությունը գործնականում ինչպես է նպաստել ցմահ դատապարտյալների՝ տեսակցության իրավունքի իրացմանը¹⁴⁴:

¹³⁹ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPtA>, հոդված 3:

¹⁴⁰ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-82 հարցման պատասխան:

¹⁴¹ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPug>, հոդված 9:

¹⁴² 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-82 հարցման պատասխան:

¹⁴³ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPvn>, հոդված 1:

¹⁴⁴ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-82 հարցման պատասխան:

Վերացվել է նաև առանձնապես ծանր հանցագործության կամ վտանգավոր ռեցիդիվի առկայության դեպքում կարճաժամկետ մեկնում չտրամադրելու օրենսդրական արգելքը¹⁴⁵: Նշված բարեփոխումից հետո 2019 թվականի հոկտեմբերի 23-ի դրությամբ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար ցմահ ազատազրկման դատապարտված միայն 2 անձի («Արմավիր») տրամադրվել է կարճաժամկետ մեկնում¹⁴⁶:

Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց աշխատանքով ապահովելու և կրթական ծրագրերում ներգրավելու քայլեր ձեռնարկվում են, սակայն դրանք դեռևս համակարգային բնույթ չեն կրում: Ցմահ դատապարտյալների զբաղվածության ցուցանիշը բավականին ցածր է: Ավելին, առկա չէ ցմահ դատապարտյալների կրթություն ստանալը խրախուսելուն կամ կրթություն ստացող անձանց աջակցություն տրամադրելուն ուղղված որևէ ընթացակարգ¹⁴⁷:

Հաշվի առնելով ցմահ դատապարտյալների պատժի երկարաժամկետ լինելը և դրան բնորոշ բացասական հետևանքները, անհրաժեշտ է, որպեսզի քայլեր ձեռնարկվեն նրանց պատժի հետագա կրումից ազատելու համար: Նշված իրավունքի երաշխիքները սահմանված են նաև ներպետական օրենսդրությամբ: Սակայն վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդամենը 3 ցմահ դատապարտյալ է պատժի հետագա կրումից ազատվել, որից 1-ը՝ պայմանական վաղաժամկետ, 2-ը՝ ծանր հիվանդության հիմքով¹⁴⁸:

2015 թվական	«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ	Պատժի հետագա կրմանը խոչընդոտող ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվել է 1 ցմահ դատապարտյալ ¹⁴⁹ :
2018 թվական	«Արթիկ» ՔԿՀ	Պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվել է 1 ցմահ դատապարտյալ ¹⁵⁰ :
2018 թվական	«Նուբարաշեն» ՔԿՀ	Պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է 1 ցմահ դատապարտյալ ¹⁵¹ :

¹⁴⁵ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPuq>, հոդված 6, կետ 1:

¹⁴⁶ 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 19-85 հարցման պատասխան:

¹⁴⁷ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-82 հարցման պատասխան:

¹⁴⁸ 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 19-82 հարցման պատասխան:

¹⁴⁹ «Ցմահ դատապարտյալ Սողոմոն Քոչարյանը ազատ արձակվեց», <http://bit.do/fpPvE>:

¹⁵⁰ «Ցմահ դատապարտյալ Վահագն Մարուքյանը ազատ արձակվեց 25 տարի ազատազրկված լինելուց հետո», <http://bit.do/fpPvK>:

¹⁵¹ «Դատարանը ցմահ ազատազրկման դատապարտված Կարեն Օգանեսյանին պայմանական ազատեց պատժից», <http://bit.do/fpPvZ>:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ բարելավումներ արձանագրվում են միայն օրենսդրական կարգավորումների մակարդակում: Գործնականում համապատասխան ընթացակարգերը դեռևս արդյունավետ չեն գործում, ինչն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում ցմահ դատապարտյալների՝ արտաքին աշխարհի հետ կապի պահպանմանը, աշխատանքի, կրթության և այլ իրավունքների իրացմանը, ինչպես նաև հնարավորություն չի ստեղծում վերասոցիալականացման կամ հասարակության մեջ վերաինտեգրման համար:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձինք ապահովված չեն իրենց կարիքներին համապատասխան կենսապայմաններով, ինչի հետևանքով նրանց խնդիրները ազատազրկման ընթացքում բազմապատկվում են՝ բացասաբար անդրադառնալով ոչ միայն առողջության, այլև վերասոցիալականացման և վերաինտեգրման վրա:

Հատուկ մոտեցումների բացակայությանը հաշմանդամություն ունեցող անձինք առնչվում են հիմնարկ մուտք գործելիս, քանի որ հիմնարկի ներքին կանոնակարգի կամ ազատազրկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկությունը մշակված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով, օրինակ՝ բրայլյան գրերով, մեծ տառաչափով կամ ձայնագրված տարբերակով:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրենց կարիքներին համապատասխան խցերում տեղաբաշխելու ընթացակարգ ևս առկա չէ, քանի որ խցային պայմանները ընդհանուր առմամբ հարմարեցված չեն: Բացակայում են բազրիքները, թեքահարթակները, ավելի վառ գույներով ներկված աստիճանները, սանհանգույցները և այլն:

Համապատասխան հարմարեցումները բացակայում են նաև ազատազրկված անձանց ամենօրյա գործողությունների համար կարևոր տարածքներում, օրինակ՝ լոգարաններ, սանհանգույց, ճաշարան, երկարատև կամ կարճատև տեսակցության սենյակներ, զբոսահրապարակներ, գրադարաններ, մարզասրահներ, ուսումնական սենյակներ և այլն:

Հիմնարկների գրադարաններում հասանելի չեն այլընտրանքային ձևաչափերով գրքեր, օրինակ՝ բրայլյան գրքեր, աուդիոգրքեր, ժեստերի լեզվով թարգմանված տեսանյութեր և այլն: Չի գործում նաև գրադարանից գրքերի սպասարկման հատուկ մշակված ընթացակարգ այն անձանց համար, ովքեր հաշմանդամությամբ պայմանավորված՝ ի վիճակի չեն այցելել գրադարան:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի չեն զբաղվածությունը ապահովող միջոցառումները: Նրանք ազատազրկման ընթացքում չեն

ապահովվում աշխատանքով, չեն կարողանում մասնակցել մասնագիտական ուսուցման դասընթացների կամ այլ միջոցառումների:

Ավելին, առկա չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան վերասոցիալականացման ծրագրեր, ինչի հետևանքով նրանք անբարենպաստ պայմաններում են հայտնվում պայմանական վաղաժամկետ ազատվելիս: Ավելին, ըստ պայմանական վաղաժամկետ ազատման գործող ընթացակարգի՝ այն անձինք, ովքեր պատժի կրման ընթացքում չեն աշխատել հաշմանդամություն ունենալու պատճառով, ստանում են 2 միավոր այն դեպքում, երբ տվյալ չափորոշիչի գնահատման համար սահմանված առավելագույն միավորը 3-ն է¹⁵²:

Խնդրահարույց է այն, որ մինչ օրս հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձանց կարիքներին ուսումնասիրություն չի իրականացվել: Ավելին, քրեակատարողական հիմնարկներում հենաշարժողական, տեսողական, լսողական և մտավոր խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց վերաբերյալ հաշվառում չի իրականացվում: Հաշվառվում են միայն հոգեկան առողջություն ունեցող անձանց թվային տվյալները: Այսպես, ըստ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ 2018 թվականին հոգեկան առողջության հետ կապված խնդիր ունեցող անձանց թիվը կազմել է 216, 2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ 183 անձ:

Առկա չեն ազատվելուց հետո հաշմանդամություն ունեցող անձանց վերաինտեգրման կարիքներին համապատասխան զբաղվածության և այլ ծրագրեր: Մինչդեռ անհրաժեշտ է մշակել և կիրառել հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձանց աջակցություն ցուցաբերելուն, աշխատանքով և կացարանով ապահովելուն, կրթության մեջ ներգրավելուն ուղղված հատուկ մոտեցումներ, ինչպես նաև պրոբացիայի ծառայության, զբաղվածության կենտրոնների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության քայլեր նախաձեռնել, ինչը կնպաստի նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը և հասարակության մեջ վերաինտեգրմանը:

¹⁵² «ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 336-Լ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի հունիսի 4-ի թիվ 198-Լ հրաման, Հավելված 3, <http://bit.do/fpPwh>:

Գլուխ 7

Վերասոցիալականացման ծրագրերի ազդեցությունն ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության և կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատման վրա

Ազատազրկված անձի վարքագծի և ուղղման վրա էական ազդեցություն են թողնում ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխությունը և պատժից ազատման հնարավորությունները: Ընդ որում, ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխությունը կարևոր է հատկապես երկարատև կամ ցմահ ազատազրկված անձանց համար ազատությանը փուլային անցում ապահովելու տեսանկյունից, ինչը հեշտացնում է հետագա վերաինտեգրումը:

Ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխություն

Ըստ մեկուսացվածության աստիճանի՝ գործում են ուղղիչ հիմնարկների հետևյալ տեսակները՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ և բուժական¹⁵³: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է, որ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխվում է համապատասխան տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ, որի հիմքում դրվում են որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի դրսևորած վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը և օրենսգրքով սահմանված այլ հանգամանքներ¹⁵⁴:

Սակայն ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության, հատկապես բաց տեսակին անցնելու հարցը մտահոգության տեղիք է տալիս: Պատճառն այն է, տեղաբաշխման հանձնաժողովը համապատասխան որոշում կայացնելու համար բավարար հիմքեր չի ունենում, քանի որ պատժի կրման ընթացքում ազատազրկված անձանց վարքագծի դրական փոփոխության համար իրականացվող միջոցառումները և ծրագրերը արդյունավետ չեն:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած պաշտոնական տվյալների համաձայն՝ 2018 թվականին տեղաբաշխման հանձնաժողովի նիստերի վերաբերյալ կազմվել է 991 որոշում և հատկացվել է 1236 կարգազիր: Ուղղիչ հիմնարկների տեսակը որոշելու, փոխելու, տեխնիկա-տնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկելու և մեկ հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխելու համար քննարկվել են 1265 դատապարտյալի վերաբերյալ դիմումներ և միջնորդագրեր:

¹⁵³ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, <http://bit.do/fpPwx>, հոդված 99:

¹⁵⁴ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, <http://bit.do/fpPwx>, հոդված 100:

Հատկանշական է այն, որ ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության համար դատապարտյալների կողմից ներկայացված դիմումների և դրանց ընթացքի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում:

Այսպիսով, ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխությունը դատապարտյալին հասարակություն վերադարձնելուն և ազատությանը նախապատրաստող փուլային գործընթաց է, որը գործնականում արդյունավետ ձևով չի կիրառվում:

Ծանր հիվանդության հիմքով կալանքից կամ պատժից ազատում

Ծանր հիվանդության հետևանքով կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատումը մարդասիրության դրսևորում է, որի երաշխիքները սահմանված են ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ: Սակայն Հայաստանում ազատազրկված անձանց՝ ծանր հիվանդության հիմքով կալանքից կամ պատժից ազատելու համակարգը գործում է մի շարք խնդիրներով, որոնք առնչվում են բժշկական հետազոտությունների արդյունքում ստրված եզրակացություններին, առավել տարածված հիվանդությունների՝ կառավարության որոշմամբ սահմանված ցանկում ներառված չլինելուն և այլն¹⁵⁵:

Խնդրահարույց է հատկապես այն, որ ազատազրկված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման կարիքները ուսումնասիրված չեն, ուստի առկա չեն առողջական խնդիրներ ունեցող, այդ թվում՝ ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատված անձանց հետ վերասոցիալականացման և վերաինտեգրման աշխատանքներ իրականացնելու հատուկ մեխանիզմներ: Հետևանքը լինում է այն, որ նշված անձանց ներհատուկ կարիքներն անուշադրության են մատնվում ինչպես ազատազրկման ընթացքում, այնպես էլ ազատվելուց հետո, ինչը նվազեցնում է նրանց սոցիալական վերականգնման հնարավորությունները:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը պատժի կրման ընթացքում ազատազրկված անձանց սոցիալական վերականգնմանը նախապատրաստող միջոցառումների տրամաբանական շարունակությունն է, որը Հայաստանում երկար ժամանակ գործել է մի շարք բացթողումներով¹⁵⁶:

Համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2018 թվականի օրենսդրական բարեփոխումների շրջանակում մոդելային և

¹⁵⁵«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2019 թ., <http://bit.do/fpPxp>, էջեր 27-28:

¹⁵⁶«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի առանձնահատկությունները ՀՀ- ում», Երևան, 2016թ., <http://bit.do/fpPxC>, էջ 4:

ընթացակարգային մի շարք փոփոխություններ կատարվեցին, որոնց արդյունքում անկախ հանձնաժողովները վերացան և որոշման կայացման գործընթացում հիմնական դերակատարումը տրվեց քրեակատարողական ծառայությանը և պրոբացիայի ծառայությանը¹⁵⁷:

Ըստ նոր սահմանված ընթացակարգի՝ քրեակատարողական ծառայությունը պատշաճ կերպով գնահատում է դատապարտյալի անձը և վարքագիծը պատժի կրման ընթացքում, իսկ պրոբացիայի ծառայությունը՝ հասարակություն վերաինտեգրվելու հնարավորությունը: Ջեկույցները կազմելիս և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու որոշում կայացնելիս գնահատվում են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են պատժի կրման ընթացքում խրախուսանքի և կարգապահական տույժի առկայությունը, կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, ինչպես նաև աշխատելը:

Վերասոցիալականացման և անձնական զարգացման միջոցառումներին մասնակցությունը հաշվի է առնվում նաև դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս:

Սահմանված չափորոշիչները գնահատվում են 0-5 միավորով, որոնց գումարի առավելագույն միավորը 43 է: Ջեկույցը դրական է գնահատվում, եթե չափորոշիչները գումարելու միջոցով վերջնական միավորը կազմում է 28 և ավելի: 28 միավորից պակաս լինելու դեպքում Ջեկույցը գնահատվում է բացասական¹⁵⁸: Հարկ է, սակայն, ուշադրություն դարձնել գնահատման սկզբունքին: Օրինակ, պատժի կրման ընթացքում 2 և ավելի անգամ խրախուսվելու դեպքում տրվում է 5, չխրախուսվելու դեպքում՝ 0 միավոր: Եթե պատժի կրման ընթացքում դատապարտյալը ցանկացել է մասնակցել կրթական ծրագրերին, մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին, սակայն հիմնարկը նշված միջոցառումների կազմակերպման համար հնարավորություն չի ապահովել, տրվում է 1 միավոր: Կամ, եթե դատապարտյալը աշխատելու ցանկություն է հայտնել, սակայն նման հնարավորություն չի եղել, այդ թվում՝ հիվանդության, հաշմանդամության կամ տարիքի պատճառով, ապա տրվում է 1 միավոր:

Ճիշտ է, կատարված փոփոխությունները հնարավորություն են ընձեռում գնահատելու, թե պատժի կրման ընթացքում անձը ինչքանով է ուղղվել և ինչպիսի աշխատանք է կատարվել նրա հետ: Սակայն խնդիրներ են առաջանում այդ

¹⁵⁷ «ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, <http://bit.do/fpPxR>:

¹⁵⁸ «ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 336-Լ հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի հուլիսի 4-ի թիվ 198-Լ հրաման, <http://moj.am/legal/view/article/1237>, կետեր 6.2-6.4:

չափանիշները կիրառելու և համապատասխան որոշումներ կայացնելու ժամանակ:

Ղատապարտյալները չեն կարողանում բավարար միավորներ հավաքել, քանի որ բացակայում են համապատասխան պայմանները: Այսպես, ըստ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ 2018 թվականին դատապարտյալների նկատմամբ կիրառվել է 56, իսկ 2019 թվականի 1-ին կիսամյակում՝ 31 խրախուսանքի միջոց: Մինչդեռ անհամեմատ ավելի մեծ է կարգապահական տույժերի թիվը: 2018 թվականին կիրառվել է 1561, 2019 թվականի 1-ին կիսամյակում՝ 801 կարգապահական տույժ: Աշխատանքային, կրթական, մշակութային կամ այլ ծրագրերի մասնակցության հիման վրա ևս հնարավոր չէ օբյեկտիվորեն գնահատել դատապարտյալի վարքը և ուղղված լինելու հանգամանքը, քանի որ այդ ծրագրերը բոլոր հիմնարկներում չեն կազմակերպվում, և ոչ բոլոր դատապարտյալներն են կարողանում մասնակցել դրանց:

Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի արդյունավետությանը խոչընդոտում են նաև մի շարք այլ խնդիրներ, որոնք կապված են պրոբացիայի ծառայության և քրեակատարողական ծառայության կողմից ներկայացվող զեկույցների հետ: Օբյեկտիվ և հիմնավոր զեկույց պատրաստելը ենթադրում է ազատագրված անձի հետ պարբերական աշխատանք, ինչը արդյունավետ ձևով չի իրականացվում համապատասխան ռեսուրսների և մասնագիտական պատրաստվածության բացակայության պատճառով: Նշված զեկույցների պատրաստումը ենթադրում է նաև պրոբացիայի աշխատակիցների ծանրաբեռնվածության ավելացում և ի հայտ է բերում լրացուցիչ նյութական ծախսերի խնդիր՝ կապված քրեակատարողական հիմնարկ, դատապարտյալի ընտանիքի անդամներին, հանցագործությունից տուժած անձին այցելելու, այլ տեղեկատվություն հավաքելու հետ: Քրեակատարողական ծառայության ներգրավումը պատժից ազատման գործընթացում ավելորդ զբաղվածություն է ստեղծում նաև քրեակատարողական ծառայության համար, ինչը բացասաբար է անդրադառնում որոշումները ողջամիտ ժամկետներում ընդունելուն¹⁵⁹:

Առավել մտահոգիչ է ցմահ դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցը: ՀՀ քրեական օրենսգիրքը նման հնարավորություն նախատեսում է, սակայն գործնականում այն չի կիրառվում:

¹⁵⁹«Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց», Երևան, 2019 թ., <http://bit.do/fpPx5>, էջեր 329-332:

2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ միայն 1 ցմահ դատապարտյալ է պայմանական վաղաժամկետ ազատվել¹⁶⁰:

Այսպիսով, այն չափանիշները, որոնք դրված են պայմանական վաղաժամկետ ազատման որոշման հիմքում, գործնականում բավարար չափով իրագործելի չեն: Իսկ այն մարմինները, որոնք էական դերակատարում ունեն դատապարտյալի ուղղումը գնահատելու և աջակցություն ցուցաբերելու գործում, դեռևս առնչվում են գործառնական և բովանդակային մի շարք խնդիրների, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգն արդյունավետ գործունեության տեսանկյունից դեռևս բարելավման կարիք ունի:

¹⁶⁰«Դատարանը ցմահ ազատազրկման դատապարտված Կարեն Օգանեսյանին պայմանական ազատեց պատժից», <https://hetq.am/hy/article/97119>:

Գլուխ 8

Պրոբացիայի ծառայություն. անցում վերականգնողական արդարադատությանը և վերասոցիալականացման ամրապնդում

Վերջին տարիներին մի շարք երկրներում հանցագործությունների թվաքանակի աճը, քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունը և հասարակության անվտանգության երաշխիքների նվազումը հանգեցրել են արդարադատության համակարգի նկատմամբ դժգոհության և արդարադատության ավանդական պրակտիկայի նկատմամբ նվազող հետաքրքրության:

Այս համատեքստում վերականգնողական արդարադատությունը՝ որպես այլընտրանք, ապահովում է առավել ճկուն հակազդում հանցագործությանը՝ հավասար պայմաններ ստեղծելով երկու կողմերի արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև կողմերի միջև փոխըմբռնում ձևավորելու համար: Ավելին, վերականգնողական արդարադատության միջոցով մեծանում է հասարակության դերը՝ որպես հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի կարևոր գործոն: Եվ վերջապես, քրեական վերականգնողական արդարադատությունը մատչելի միջոց է, որը հնարավոր է հեշտությամբ հարմարացնել տվյալ երկրի ներքին իրավական համակարգում:

Վերականգնողական ծրագրերն իրականացնում են պրոբացիոն ծառայությունները՝ ապահովելով պատժի նպատակների իրացումը՝ ազատազրկման փոխարեն անձին պահելով ազատության և հասարակության մեջ: Այդ ծառայությունների հիմքում դրված է հասարակությունում (համայնքում) անձի վերասոցիալականացման գաղափարախոսությունը, ինչը կարող է նաև նպաստել քրեակատարողական հիմնարկների բեռնաթափման խնդրի լուծմանը¹⁶¹:

Պրոբացիան վերաբերում է օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը հասարակությունում: Այն ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումը և աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն: Օրենքով սահմանված կարգով նշանակված ցանկացած մարմին, որը իրականացնում է վերը թվարկված գործառույթները, ձևավորում է պրոբացիայի ծառայությունը¹⁶²:

¹⁶¹ «ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ներդրման վերաբերյալ հայեցակարգ», <http://bit.do/fpPyg>:

¹⁶² Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականը անդամ երկրներին՝ Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ, <http://bit.do/fovH6>:

Հայաստանում պրոբացիայի ծառայությանը բնորոշ մի շարք լիազորություններ իրականացրել են քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները: Սակայն 2015 թվականին «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը ընունելով և ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությունը ստեղծելով՝ պետությունը վերականգնողական արդարադատության սկզբունքները և վերասոցիալականացման համակարգը ներդնելու քայլ կատարեց:

Այսպիսով, պետության հոչակած նպատակների իրագործման համատեքստում պրոբացիայի ծառայությունը կարևոր դեր ունի և իր լիազորությունների շրջանակում՝

- *ապահովում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը,*
- *ապահովում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը,*
- *տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ,*
- *վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ,*
- *իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ:*

Պրոբացիայի ծառայությունը վերահսկողություն է իրականացնում հետևյալ պատիժների նկատմամբ՝

- *Պատիժը պայմանականորեն չկիրառելը,*
- *Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը,*
- *Հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը,*
- *Քրեական պատասխանատվությունից՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով ազատելը:*

Վերասոցիալականացումը պրոբացիայի շահառուների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների, միջոցառումների և ծրագրերի, իրավական և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու, հասարակությունում վերաինտեգրելու և օրինապահ վարքագիծ ձևավորելու գործընթացների ամբողջությունն է:

Պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա կազմվում է

վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի անձի առանձնահատկությունները:

Վերասոցիալականացման միջոցառումները իրականացվում են «Վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 404-Ն որոշմամբ, ըստ որի՝ վերասոցիալականացման միջոցառումների նպատակներն են՝

- *պրոբացիայի շահառուների կողմից նոր հանցագործությունների կանխումը,*
- *պրոբացիայի շահառուների համար օգտակար հանրային կապեր և շփումներ ստեղծելը, պահպանելը և զարգացնելը,*
- *պրոբացիայի շահառուների սոցիալական պաշտպանվածությանը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը նպաստելը,*
- *պրոբացիայի շահառուների աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, ստեղծագործական գործունեության զարգացմանը նպաստելը,*
- *պրոբացիայի շահառուների հոգեբանական պահանջմունքների բավարարմանը նպաստելը,*
- *պրոբացիայի շահառուների օրինապահ վարքագծի դրսևորմանը, իրավագիտակցության բարձրացմանը նպաստելը,*
- *պրոբացիայի շահառուների՝ հասարակություն վերահիստեգրվելուն նպաստելը:*

Վերասոցիալականացման միջոցառումները տարբերակվում են՝ ելնելով կատարած հանցագործության բնույթից և հանրային վտանգավորության աստիճանից և հաշվի առնելով պրոբացիայի շահառուի սեռը, տարիքը, սոցիալ-հոգեբանական վիճակը, շահառուի վերաբերմունքն իր կողմից կատարված հանցագործությանը: Պրոբացիայի անչափահաս շահառուների համար նախատեսված վերասոցիալականացման միջոցառումները մշակվում և իրականացվում են՝ հաշվի առնելով նրանց լավագույն շահը:

Ինչպես կարող ենք նկատել, օրենսդրական կարգավորումները բավարար նախադրյալներ են ստեղծում ծառայության առջև դրված նպատակները իրագործելու համար: Թվային վիճակագրությունը ևս փաստում է դրական զարգացումների մասին: Այսպես, 2018 թվականին ծառայությունում հաշվառվել է 6242 շահառու: Նրանց նկատմամբ նշանակվել է 3100 պատիժ, 2979 վերահսկողություն¹⁶³: 2019 թվականի 1-ին կիսամյակում ծառայությունում

¹⁶³ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2018 թվականի ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ հաշվետվություն, <http://bit.do/fqxjl>, էջ 1:

հաշվառվել է 2729 շահառու: Նրանց նկատմամբ նշանակվել է 1244 պատիժ, 1591 վերահսկողություն¹⁶⁴:

Սակայն պետք է արձանագրել, որ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են պետության որդեգրած սկզբունքների իրագործմանը:

Ճիշտ է, պրոբացիայի շահառուները ազատության մեջ են և չունեն այն սահմանափակումները, ինչ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձինք, սակայն աշխատանքի տեղավորվելիս բախվում են գրեթե նույն խնդիրներին: Չկան արդյունավետ միջոցներ՝ վերականգնողական աշխատանքներ իրականացնելու այն անձանց հետ, որոնց նկատմամբ կիրառվել են այլընտրանքային պատժատեսակներ կամ խափանման միջոցներ, որոնց պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ հետաձգվել է:

Առկա խնդիրներն առնչվում են նաև հոգեբանների ու սոցիալական աշխատողների հաստիքների, անչափահասների հարցերով մասնագիտացված աշխատողների և կին աշխատողների համալրվածությանը, ծառայողների ծանրաբեռնվածությանը և մասնագիտական պատրաստվածությանը¹⁶⁵:

Մյուս կողմից էլ պրոբացիայի ծառայության աշխատակիցների գերակշիռ մասը նախկին այլընտրանքային պատիժների կատարման բաժնի կամ ոստիկանության նախկին աշխատակիցներն են, ովքեր դեռևս պատժողական քաղաքականության մտածելակերպի կրողն են և իրենց աշխատանքը ընկալում են որպես քրեակատարողական ծառայություն: Նման պայմաններում վերականգնողական արդարադատության անցումը մնում է որպես տեսական ձևակերպում:

Այս առումով անհրաժեշտ է ոչ միայն ուշադրության կենտրոնում պահել կադրային համալրվածությունը, նյութատեխնիկական պայմանների ապահովումը, այլև քայլեր ձեռնարկել պրոբացիայի աշխատակիցների շարունակական կրթությունը և կարողությունների զարգացումը ապահովելու ուղղությամբ:

¹⁶⁴ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ հաշվետվություն, <http://bit.do/fqxih> էջ 1:

¹⁶⁵ «ՀՀ Պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում», ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018թ., <http://bit.do/fpPyq>, էջեր 44-60:

Եզրահանգումներ

«Ազատագրված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտության շրջանակներում վեր են հանվել վերականգնողական արդարադատության անցման և ազատագրված անձանց սոցիալական վերականգնման հիմնական խոչընդոտները:

Այսպես՝

- Առկա չեն դատապարտյալների պատժի կրման և ուղղման անհատական պլաններ, ազատագրված անձանց կարիքների և ռիսկերի գնահատման գործիքակազմեր:
- Նախկին ազատագրված անձանց զբաղվածության վերաբերյալ հավաստի տվյալներ հասանելի չեն, քանի որ ՀՀ վիճակագրական կոմիտեն աշխատաշուկայի վերաբերյալ տարեկան հետազոտությունների մեջ չի ներառում տեղեկատվություն ազատագրվածների վերաբերյալ: Հայաստանի բնակչության վերաբերյալ տարաբաշխված տվյալներ պատրաստելիս նախկինում դատվածություն ունենալու փաստը նույնպես հաշվի չի առնվում:

Ազատագրված անձանց աշխատանքային զբաղվածությունը

- Ազատագրված անձանց զբաղվածության ցուցանիշը ցածր է, քանի որ աշխատանքային զբաղվածությունն ապահովող ծրագրերը սակավաթիվ են և ոչ բոլոր քրեակատարողական հիմնարկներում են իրականացվում: Այդ պատճառով ազատագրված անձանց բավականին քիչ տոկոսն է ապահովվում աշխատանքով: Ընդ որում, աշխատանքով ապահովվում են դատապարտյալները, թեև համապատասխան օրենսդրական երաշխիքներ սահմանված են նաև կալանավորված անձանց համար:
- «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի ստեղծած աշխատատեղերը ևս քիչ են: Ընդ որում, հիմնադրամն աշխատանքով ապահովում է դատապարտյալներին, իսկ կալանավորված և խոցելի խմբերի ազատագրված անձինք այդ աշխատանքներում ընդգրկվելու հնարավորություն չեն ունենում:
- Առկա չէ մեխանիզմ, որը հնարավորություն կտա հիմնադրամի շրջանակներում աշխատանքով ապահովելու այն անձանց, որոնք ազատվել են պատժի հետագա կրումից, որոնց նկատմամբ կիրառվել են այլընտրանքային պատժամիջոցներ կամ խափանման միջոցներ կամ որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:
- Աշխատանքով ապահովված ազատագրված անձանց վերաբերյալ քրեակատարողական ծառայության և հիմնարկների, ինչպես նաև

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից համեմատական և միասնական հաշվառում չի իրականացվում:

- Առկա չեն «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գործունեության թափանցիկությունը և հանրային հաշվետվողականությունը ապահովող հարթակներ, այդ թվում՝ առցանց:
- Առկա չեն ազատագրված անձանց ձեռքի աշխատանքների վաճառքը խրախուսելու և կազմակերպելու միջոցներ կամ հարթակներ:
- Աշխատանքի և զբաղվածության հնարավորությունների պակասի, ուղղորդման և սոցիալական համալիր աջակցության, ինչպես նաև պատասխանատու գերատեսչությունների և գործատուների միջև համագործակցության մեխանիզմների բացակայության պատճառով ազատագրված վայրերից վերադարձած անձանց զբաղվածության ապահովումն արդյունավետ ձևով չի կազմակերպվում:
- Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում կալանավորված անձինք չեն դիտարկվում որպես շահառու խումբ:
- Զբաղվածության կենտրոնները ևս չեն իրականացնում ազատագրված վայրերից վերադարձած անձանց վերլուծություն և հաշվառում՝ ըստ սեռի, տարիքի, ընտանեկան կարգավիճակի և այլ հիմքերի:

Ազատագրված անձանց կրթությունը

- Ազատագրված անձանց կրթության իրավունքի իրացմանը խոչընդոտում են օրենսդրական մի շարք բացեր և հակասություններ: Օրինակ, կալանավորված անձինք չունեն նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն և մասնագիտական ուսուցում ստանալու իրավունք: Կրթություն ստանալուն օժանդակում են հեռահաղորդակցության սարքերը, սակայն դրանք ներառված են քրեակատարողական հիմնարկներում արգելված իրերի ցանկում:
- «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ը միջնակարգ հանրակրթական ծրագրով կրթական գործունեություն է իրականացնում, սակայն չունի համապատասխան լիցենզավորում:
- Առկա չեն «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեության թափանցիկությունը և հանրային հաշվետվողականությունը ապահովող հարթակներ, այդ թվում՝ առցանց:
- Հանրակրթական ուսուցումը կազմակերպվում է միայն մինչև 19 տարեկան ազատագրված անձանց համար և չի ներառում բոլոր այն կալանավորված անձանց և դատապարտյալներին, ովքեր ունեն հանրակրթություն ստանալու կարիք՝ անկախ տարիքից:

- Առկա չեն բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստացող ազատագրկված անձանց աջակցություն տրամադրելու մեխանիզմներ:
- Ներքին կանոնակարգը նախատեսում է հանրակրթությունը, բարձրագույն և հետբուհական կրթությունը դրսեկության ձևով, իսկ բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների կրթությունը ստացիոնար ձևով կազմակերպելու կարգավորումներ: Մակայն հարցումների պատասխանները ցույց են տալիս, որ վերջին երկու տարիներին ազատագրկված անձինք նշված ձևով կրթություն չեն ստացել:
- Մասնագիտական ուսուցման դասընթացները 12 քրեակատարողական հիմնարկներից միայն 2-ում՝ «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ներում են կազմակերպվում և ոչ բոլոր ազատագրկված անձանց են հասանելի:
- Մասնագիտական ուսուցման դասընթացները պարբերական և շարունակական բնույթ չեն կրում:
- Չի ապահովվում կրթական ծրագրերի շարունակականությունը, ինչի հետևանքով ազատագրկվելուց, մեկ հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխվելուց և ազատ արձակվելուց հետո անձը զրկվում է կրթություն և մասնագիտական ուսուցում ստանալու ստանալու հնարավորությունից:
- Առկա չեն հանրակրթական և կրթական հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության մեխանիզմներ:
- Ազատագրկված անձանց կրթական աստիճանի վերաբերյալ հաշվառում չի իրականացվում:
- Չի իրականացվում ազատագրկված անձանց կրթական կարիքների գնահատում:
- Չի իրականացվում ազատագրկված անձանց համար կազմակերպվող կրթական ծրագրերի արդյունքների գնահատում:
- Կրթական ծրագրերում ընդգրկված ազատագրկված անձանց վերաբերյալ քրեակատարողական ծառայության և հիմնարկների կողմից չի իրականացվում համեմատական և միասնական հաշվառում:

Ազատագրկված անձանց զբաղվածության, ազատ ժամանակն արդյունավետ ձևով տնօրինելու և հանգստի ապահովման միջոցները

- Ազատագրկված անձանց զբաղվածությունը ապահովող միջոցառումների կազմակերպման հարցում չի դրսևորվում հավասար մոտեցում, ինչի հետևանքով այդ միջոցառումները ոչ բոլոր քրեակատարողական հիմնարկներում և ոչ բոլոր ազատագրկված անձանց են հասանելի:
- Առկա չեն զբաղվածությունն ապահովող ծրագրերին ազատագրկված անձանց մասնակցությունը խթանելու, ինչպես նաև դատապարտյալների կողմից ինքնագործ միավորումներ ստեղծելը խրախուսելու միջոցներ:

- Քրեակատարողական հիմնարկների գրադարանները գրականությամբ համալրելու, գրադարանավարի հաստիք նախատեսելու և այն համալրելու, մարզասրահները նոր մարզագույքով համալրելու և անսարք մարզասարքերը վերանորոգելու հարցում հավասար և միասնական մոտեցում չի ցուցաբերվում:
- Առկա չէ գրադարաններից և մարզասրահներից օգտվող ազատազրկված անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու միասնական համակարգ:
- Առկա չեն ընթերացնությունը խրախուսելու միջոցներ և այն կազմակերպելու պայմաններ, օրինակ՝ ընթերցասրահներ:
- Ներքին կանոնակարգը նախատեսում է, որ ազատազրկված անձինք կարող են բաժանորդագրության միջոցով օգտվել գրականությունից և պարբերական մամուլից, սակայն հարցումները ցույց տվեցին, որ վերջին երկու տարիների ընթացքում այդ հնարավորությունից ազատազրկված անձինք չեն օգտվել:
- Չի իրականացվում միջոցառումների և ինքնագործ միավորումների արդյունավետության գնահատում:

Ազատազրկված անձանց կապն արտաքին աշխարհի հետ

- Տեսակցությունների, կարճաժամկետ մեկնումների, հեռախոսազանգերի և տեսազանգերի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտում են ներքին կանոնակարգով նախատեսված որոշ սահմանափակումներ և քրեակատարողական հիմնարկների նյութատեխնիկական պայմանները, օրինակ՝ տեսակցություններ տրամադրելու կամ հեռախոսակապից օգտվելու օրերի կամ ժամերի վերաբերյալ սահմանափակումները, տեսակցությունների սենյակների բացակայությունը կամ սակավությունը, կարճաժամկետ մեկնումների ծախսը սեփական միջոցներով հոգալը, հեռախոսակապից օգտվելու համար նախատեսված քարտերը սեփական միջոցներով կամ հարազատների միջոցով ձեռք բերելը:
- Սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումներ չեն տրամադրվում կալանավորված անձանց:
- Առկա չէ կարճատև և երկարատև տեսակցությունների, ինչպես նաև երկարատև տեսակցությունը կարճատև տեսակցությամբ փոխարինելու, կարճաժամկետ մեկնումների, հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու, զբոսանքից հրաժարվելու պատճառների վերաբերյալ հաշվառում իրականացնելու միասնական համակարգ:
- Ջրոսանքից օգտվելուն խոչընդոտում են քրեակատարողական հիմնարկների նյութատեխնիկական պայմանները:

- Մի շարք հիմնարկների երկարատև կամ կարճատև տեսակցության տեղամասեր չունեն զբոսաբաղիչ, ինչի պատճառով ազատագրված անձանց տեսակցության եկած անձինք, այդ թվում՝ անչափահասները, չեն կարողանում օգտվել զբոսանքի հնարավորությունից:

Խոցելի խմբերի ազատագրված անձանց վերասոցիալականացման խնդիրները

- Ազատագրված անձանց վերասոցիալականացման և վերաինտեգրման կարիքները ուսումնասիրված չեն:
- Առկա չեն խոցելի խմբերի ազատագրված անձանց հետ վերասոցիալականացման և վերաինտեգրման աշխատանքներ իրականացնելու առանձնահատուկ ընթացակարգեր:

Ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխություն և կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատում

- Պատժի կրման ընթացքում դատապարտյալների վարքագծի դրական փոփոխության համար իրականացվող միջոցառումները և ծրագրերը արդյունավետ չեն, ինչը բավարար հիմքեր չի ստեղծում դատապարտյալների՝ ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության կամ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար:
- Ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության համար դատապարտյալների կողմից ներկայացված դիմումների և դրանց ընթացքի վերաբերյալ հաշվառում չի իրականացվում:

Պրոբացիայի ծառայություն

- Առկա չեն մեխանիզմներ՝ վերականգնողական աշխատանքներ իրականացնելու այն անձանց հետ, որոնց նկատմամբ կիրառվել են այլընտրանքային պատժատեսակներ կամ խափանման միջոցներ, որոնց պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ հետաձգվել է:
- Պրոբացիայի արդյունավետ գործունեությանը խոչընդոտում են կադրային համալրվածության հետ կապված խնդիրները, հատկապես անչափահասների հարցերով մասնագիտացված աշխատողների և կին աշխատողների ոչ բավարար թվաքանակը, պրոբացիայի ծառայողների ծանրաբեռնվածությունը և մասնագիտական պատրաստվածությունը:

Առաջարկություններ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Վերականգնողական արդարադատության սկզբունքները և հայեցակարգային մոտեցումները ներառել քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների համար իրականացվող վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների մեջ:
- Մշակել և գործարկել ազատազրկված անձանց կարիքների և ռիսկերի գնահատման գործիքակազմ, վերասոցիալականացման անհատական ծրագրեր, դատապարտյալների պատժի կրման անհատական պլաններ և ուղղման ծրագրեր:

Ազատազրկված անձանց աշխատանքային զբաղվածությունը

ՀՀ կառավարությանը

- Քրեակատարողական հիմնարկների, պատասխանատու գերատեսչությունների և գործատուների միջև ձևավորել համագործակցության և ազատազրկման վայրերից վերադարձած անձանց ուղղորդման ընթացակարգեր:

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Քրեակատարողական հիմնարկներում աշխատանքային զբաղվածության միջոցներ ստեղծելու հարցում ցուցաբերել հավասար մոտեցում:
- Քրեակատարողական հիմնարկներում ստեղծել նոր աշխատատեղեր այնպես, որ անազատության մեջ գտնվող յուրաքանչյուր անձ ցանկության դեպքում կարողանա ապահովվել աշխատանքով:
- Խրախուսել ազատազրկված անձանց կողմից արհեստակցական միություններ ստեղծելը:
- Ապահովել կալանավորված անձանց աշխատանքի իրավունքի իրացումը:
- Մշակել ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքների վաճառքը առցանց կամ այլ եղանակներով իրականացնելու մեխանիզմ: Այդ նպատակով սահմանել հարկային արտոնություններ:
- Ստեղծել «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գործունեությանը ծանոթանալու հարթակներ, այդ թվում՝ առցանց:
- Մշակել աշխատանքով ապահովված ազատազրկված անձանց վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ), աշխատանքի տեսակի (վարձատրվող կամ չվարձատրվող), տարիքի, քրեական հոդվածի, աշխատանքային փորձի առկայության կամ բացակայության և այլ անհրաժեշտ հիմքերի հաշվառում և վիճակագրություն իրականացնելու համակարգ:

- Մշակել քրեակատարողական ծառայության, քրեակատարողական հիմնարկների և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից աշխատանքով ապահովված ազատազրկված անձանց վերաբերյալ միասնական և համեմատական հաշվառում իրականացնելու համակարգ:

*ՀՀ արդարադատության նախարարությանը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը*

- Ներդնել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց ըստ անհրաժեշտության որոշակի ժամանակահատվածով նպաստ տրամադրելու, աշխատանքով և կացարանով ապահովելու մեխանիզմ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

- Մշակել զբաղվածության կենտրոններում ազատազրկման վայրերից վերադարձած անձանց վերաբերյալ ըստ սեռի, տարիքի, ընտանեկան կարգավիճակի և այլ անհրաժեշտ հիմքերի հաշվառում և վերլուծություն իրականացնելու համակարգ:
- Ավելացնել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց աշխատանքային զբաղվածությունը ապահովելուն ուղղված միջոցառումները:
- Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում որպես շահառու խումբ դիտարկել նաև կալանավորված անձանց:

Ազատազրկված անձանց կրթությունը

ՀՀ կառավարությանը

- Ստեղծել քրեակատարողական հիմնարկների, հանրակրթական և կրթական հաստատությունների միջև համագործակցության մեխանիզմներ:

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Ազատազրկված անձանց շրջանում իրականացնել կրթական կարիքների գնահատում:
- Իրականացնել ազատազրկված անձանց համար կազմակերպվող կրթական ծրագրերի արդյունքների գնահատում:
- Մշակել ազատազրկված անձանց կրթական աստիճանի վերաբերյալ հաշվառում իրականացնելու համակարգ:
- Մշակել կրթական ծրագրերում ընդգրկված ազատազրկված անձանց վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ), տարիքի, պատժաչափի, քաղաքացիության կամ այլ հիմքերի հաշվառում և վիճակագրություն իրականացնելու համակարգ:

*ՀՀ արդարադատության նախարարությանը
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը*

- Կալանավորված անձանց համար սահմանել մասնագիտական ուսուցում և նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն ստանալու իրավունք:
- Ապահովել կալանավորված անձանց բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացումը:
- Հանրակրթական ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն ներառի բոլոր ազատագրված անձանց, ովքեր ունեն հանրակրթություն ստանալու կարիք՝ անկախ տարիքից:
- Մշակել ազատագրված անձանց շրջանում բարձրագույն կրթություն ստանալը խրախուսելուն ուղղված մեխանիզմներ, օրինակ՝ ուսման վարձի փոխհատուցում կամ ճկուն զեղչային համակարգի ներդրում:
- Ներդնել ազատագրված անձանց բարձրագույն և հետբուհական կրթությունը պետության հաշվին կազմակերպելու մեխանիզմ:
- Ապահովել ազատագրված անձանց (բացառությամբ անչափահասների) հանրակրթությունը, մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունը դրսեկության ձևով իրականացնելու ընթացակարգի կիրառումը:
- Ապահովել բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների կրթությունը ստացիոնար ձևով կազմակերպելու ընթացակարգի կիրառումը:
- Մասնագիտական ուսուցման դասընթացները կազմակերպել ազատագրված անձանց կարիքներին համահունչ:
- Մասնագիտական ուսուցման դասընթացները իրականացնել բոլոր քրեակատարողական հիմնարկներում և հասանելի դարձնել բոլոր ազատագրված անձանց:
- Ապահովել ազատագրված անձանց կրթության և մասնագիտական ուսուցման դասընթացների շարունակականությունը:
- Ապահովել մասնագիտական ուսուցման դասընթացների պարբերականությունը:

*ՀՀ արդարադատության նախարարությանը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը*

- Ապահովել ազատ արձակվելուց հետո մասնագիտական ուսուցման դասընթացների արդյունավետ կազմակերպումը:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը
ՀՀ Շիրակի մարզպետարանին*

- «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ին միջնակարգ հանրակրթական ծրագրով կրթական գործունեություն իրականացնելու համար տրամադրել լիցենզավորում:
- Ստեղծել «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությանը ծանոթանալու հարթակներ, այդ թվում՝ առցանց:

Մարզական, մշակութային, լուսավորչական և կրոնական միջոցառումներ և ինքնագործ միավորումներ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Մարզական, մշակութային, լուսավորչական և կրոնական միջոցառումներին ազատազրկված անձանց մասնակցությունը խթանելու նպատակով նախատեսել խրախուսանքի միջոցներ:
- Պարբերաբար իրականացնել միջոցառումների և ինքնագործ միավորումների արդյունավետության գնահատում:

ՀՀ արդարադատության նախարարությանը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը

- Մարզական, մշակութային, լուսավորչական և կրոնական միջոցառումները կազմակերպել ազատազրկված անձանց կարիքներին համահունչ:
- Այդ միջոցառումները կազմակերպել բոլոր քրեակատարողական հիմնարկներում և հասանելի դարձնել բոլոր ազատազրկված անձանց:

Գրադարաններ և ընթերցասրահներ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Ազատազրկված անձանց շրջանում ընթերցանությունը խթանելու նպատակով նախատեսել խրախուսանքի միջոցներ:
- Քրեակատարողական հիմնարկներում ստեղծել ընթերցասրահներ՝ ազատազրկված անձանց ցանկության դեպքում ընթերցանությունը խցերից դուրս կազմակերպելու համար:
- Գրադարանները նոր գրականությամբ համալրելու, գրադարանավարի հաստիք նախատեսելու և այն համալրելու հարցում ցուցաբերել հավասար մոտեցում:
- Ապահովել բաժանորդագրության միջոցով գրականությունից և պարբերական մամուլից օգտվելու ընթացակարգի կիրառումը:
- Մշակել գրադարանից օգտվող ազատազրկված անձանց հաշվառման և գրքերի սպասարկման միասնական համամակարգ:

- Գրադարանների համալրումները կատարել ազատազրկված անձանց կրթական կարիքներին համահունչ:

Մարզասրահներ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Բոլոր քրեակատարողական հիմնարկներում ստեղծել մարզասրահներ:
- Խոցելի խմբերի ազատազրկված անձանց համար ստեղծել մարզասրահներից օգտվելու հավասար հնարավորություններ:
- Մարզասրահները մարզագույքով համալրելու հարցում ցուցաբերել հավասար մոտեցում:
- Պարբերաբար ստուգել մարզագույքի սարքինությունը և վերանորոգել անսարք մարզասարքերը:
- Մշակել մարզասրահներից օգտվող ազատազրկված անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու համակարգ:

Զբոսանք

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Ազատազրկված անձանց բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի իրացման նպատակով զբոսանքի վայրերը կահավորել խաղերով, մարմնամարզությամբ զբաղվելու համար անհրաժեշտ պարագաներով և նստարաններով:
- Զբոսանքի վայրերը վերաձևափոխել այնպես, որ հնարավորինս ընդարձակվի տեսադաշտը:
- Զբոսանքի վայրերում ըստ անհրաժեշտության տեղադրել եղանակային տարբեր պայմաններից պատասպարվելու կամ պաշտպանվելու համար համապատասխան ծածկեր:
- Զբոսանքի վայրերում պարբերաբար կատարել վերանորոգման և մաքրման աշխատանքներ:
- Բացօթյա զբոսանքի իրավունքի ապահովման նպատակով երկարատև տեսակցությունների տեղամասերում ստեղծել զբոսաբակեր:
- Երեխա ունեցող ազատազրկված անձանց համար հատկացնել զբոսանքի համար նախատեսված՝ կանաչապատված կամ խաղահրապարակ ունեցող բակ:
- Անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված զբոսանքի վայրերը պարբերաբար համալրել մարզասարքերով և նրանց տարիքին համապատասխան խաղերով:

- Մշակել զբոսանքից հրաժարվելու դեպքերը հաշվառելու համակարգ այնպես, որ տեսանելի լինի, թե յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ քանի անգամ և ինչ պատճառով է հրաժարվել զբոսանքից:

Կարճատև և երկարատև տեսակցություններ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Առանձին դեպքերում սահմանել ոչ աշխատանքային օրերին կամ ոչ աշխատանքային ժամերին ազատազրկված անձանց կարճատև տեսակցություն տրամադրելու հնարավորություն:
- Ավելացնել կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակների քանակը:
- «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում ստեղծել երկարատև տեսակցության սենյակներ:
- Անչափահաս երեխաներ ունեցող ազատազրկված անձանց համար ավելացնել իրենց երեխաների հետ տեսակցությունների թիվը: Այդ նպատակով ստեղծել հատուկ պայմաններ:
- Երկարատև տեսակցությունների սենյակներում երեխաների համար նախատեսել առանձնացված մանկական սենյակներ:
- Կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներում ըստ անհրաժեշտության կատարել կահավորման, վերանորոգման և սանիտարահիգիենիկ աշխատանքներ, տեղադրել օդափոխության և ջեռուցման համակարգեր:
- Մշակել կարճատև տեսակցությունների վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) հաշվառում իրականացնելու համակարգ այնպես, որ տեսանելի լինի յուրաքանչյուր կալանավորված անձի և դատապարտյալի տրամադրված կարճատև տեսակցության քանակը և տևողությունը, տեսակցության եկած անձանց հետ կապը և նրանց թվաքանակը:
- Մշակել երկարատև տեսակցությունների վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) հաշվառում իրականացնելու համակարգ այնպես, որ տեսանելի լինի յուրաքանչյուր կալանավորված անձի և դատապարտյալի տրամադրված երկարատև տեսակցության քանակը և տևողությունը, տեսակցության եկած անձանց հետ կապը և նրանց թվաքանակը:
- Մշակել երկարատև տեսակցությունը կարճատև տեսակցությամբ փոխարինելու վերաբերյալ հաշվառում իրականացնելու համակարգ՝ ըստ ազատազրկված անձանց կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ):

Կարճաժամկետ մեկնումներ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու հնարավորություն ընձեռել նաև կալանավորված անձանց:
- Երկարատև և ցմահ ազատազրկման դատապատված անձանց սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումների տրամադրումը դարձնել պարբերական:
- Անվճարունակ լինելու դեպքում կարճաժամկետ մեկնումների հետ կապված ծախսերը պետության հաշվին կատարելու հնարավորություն նախատեսել նաև կալանավորված անձանց համար:
- Մշակել կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) հաշվառում իրականացնելու համակարգ այնպես, որ տեսանելի լինի յուրաքանչյուր կալանավորված անձի կամ դատապարտյալի տրամադրված կարճաժամկետ մեկնումների քանակը և տևողությունը, այդ նպատակով ներկայացված դիմումների, դրանց հաստատման, մերժման կամ բողոքարկման քանակը և դեպքերը:

Հեռախոսակապ և տեսազանգ

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Մշակել առանձին դեպքերում հեռախոսակապից օգտվելու համար նախատեսված քարտերը անվճար հիմունքներով ազատազրկված անձանց տրամադրելու ընթացակարգ:
- Մշակել առանձին դեպքերում հեռախոսակապից օգտվելը ոչ աշխատանքային օրերին թույլատրելու ընթացակարգ:
- Մշակել հեռախոսակապից օգտվող ազատազրկված անձանց վերաբերյալ ըստ կարգավիճակի (կալանավորված անձ կամ դատապարտյալ) հաշվառում իրականացնելու համակարգ այնպես, որ տեսանելի լինի, թե յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ քանի անգամ է օգտվել հեռախոսակապից և ինչ հաճախականությամբ:

Խոցելի խմբերի ազատազրկված անձինք

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ անչափահաս երեխաներ ունեցող կանանց շաբաթ-կիրակի օրերին տուն վերադառնալու կամ երեխաների հետ երկարաժամկետ հանդիպումներ ունենալու հնարավորություն տալու նպատակով:
- Հեռախոսակապից օգտվելու համար ազատազրկված կանանց և անչափահասներին տրամադրել անվճար քարտեր:

- Ազատագրկված կանանց և անչափահասներին թույլատրել ոչ աշխատանքային ժամերին և օրերին օգտվել հեռախոսակապից:
- Անչափահասների համար նախատեսել նոր այլընտրանքային պատժամիջոցներ և խափանման միջոցներ:
- Ավելացնել անչափահաս ազատագրկված անձանց զբաղվածության միջոցները և ապահովել նրանց զբաղվածության բազմազանությունը:
- Ազատագրկված անչափահասների համար ստեղծել աշխատանքային զբաղվածության միջոցներ:
- ԼԳԲՏ ազատագրկված համար ստեղծել այլ ազատագրկված անձանց հետ հավասար խցային պայմաններ:
- Ապահովել ԼԳԲՏ ազատագրկված անձանց մասնակցությունը զբաղվածությունն ապահովող աշխատանքային ծրագրերին, կրթական դասընթացներին կամ այլ միջոցառումներին:
- Մշակել տեսակցությունների տրամադրման՝ ԼԳԲՏ ազատագրկված անձանց ներհատուկ կարիքներին համապատասխան ընթացակարգ:
- Մաքրման և սանիտարահիգիենիկ աշխատանքների կատարման համար նախատեսել հաստիքներ:
- Ապահովել ցմահ ազատագրկման դատապարտված անձանց որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց հետ պահելու, ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու ընթացակարգերի կիրառումը:
- Իրականացնել ցմահ ազատագրկման դատապարտված անձանց տրամադրված կարճատև և երկարատև տեսակցությունների վերաբերյալ առանձնացված հաշվառում:
- Ապահովել ցմահ ազատագրկման դատապարտված անձանց սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու ընթացակարգի կիրառումը:
- Ամենօրյա գործողությունների համար կարևոր տարածքները ապահովել հաշմանդամություն ունեցող ազատագրկված անձանց կարիքներին ներհատուկ հարմարեցումներով:
- Մշակել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով տեղեկություններ ազատագրկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին:
- Հաշմանդամություն ունեցող ազատագրկված անձանց համար հասանելի դարձնել այլընտրանքային ձևաչափերով գրքեր:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակել գրքերի սպասարկման հատուկ մշակված ընթացակարգ:
- Իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների ուսումնասիրություն:

- Ներդնել քրեակատարողական հիմնարկներում հենաշարժողական, տեսողական, լսողական, մտավոր և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու համակարգ:

Ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխություն և կալանքից կամ պատժի հետագա կրումից ազատում

ՀՀ արդարադատության նախարարությանը

- Իրականացնել ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության համար դատապարտյալների կողմից ներկայացված դիմումների և դրանց ընթացքի վերաբերյալ առանձնացված հաշվառում:
- Ապահովել ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության ընթացակարգի կիրառումը:
- Ապահովել ցմահ դատապարտյալների՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունքի իրացումը:

Պրոբացիայի ծառայություն

ՀՀ արդարադատության նախարարությանը

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությանը

- Պրոբացիայի ծառայությունը համալրել նեղ մասնագիտական հաստիքներով ու աշխատակիցներով, օրինակ՝ անչափահասների հարցերով մասնագիտացված աշխատողներ, սոցիալական աշխատողներ և հոգեբաններ, կին աշխատողներ:
- Ներդնել այլընտրանքային պատիժների համակարգ և խափանման միջոցներ:

Օգտագործված գրականության ցանկ

- Տեղեկատվություն ստանալու գրավոր հարցումների էլեկտրոնային տարբերակներ

https://drive.google.com/open?id=1jANqR7fevmjIoYhfCxpXrP9YBiLjCh_I

Միջազգային իրավական փաստաթղթեր

- «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ»

<http://bit.do/feupx>

- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականը անդամ երկրներին՝ Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ

<http://bit.do/fovH6>

Օրենսգրքեր

- ՀՀ քրեական օրենսգիրք, Երևան, 2003 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=136694>

- ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, Երևան, 2004 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=136431>

Օրենքներ

- «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, Երևան, 2013 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118159>

- «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2013 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126291>

- «Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=129432>

- «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք, Երևան, 2002 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137796>

- «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2018 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=122718>

- «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2018 թվական

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123919>

- «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2019 թվական
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=131508>
- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2002 թվական
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134777>
- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2019 թվական
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=131510>
- «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 2005 թվական
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68301>
- «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, Երևան, 2019 թվական
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136375>

Օրենքների նախագծեր

- «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների և հարակից օրենքների նախագծեր
<https://www.e-draft.am/projects/1801/about>
- «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ
<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10440&Reading=0>

Կարգադրություն

- «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգադրություն
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76932>

Որոշումներ

- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի թիվ 124-Ն որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56573>

- «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90571>
- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134441>
- «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ 2019 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1092-Ն որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=133654>
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1599-Ն որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118094>
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի թիվ 275-Ն որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120649>
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>
- «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու

մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137161>

Հրամաններ

- «2019-2020 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մարտի 29-ի թիվ 283-Ա/2 հրաման
<http://edu.am/index.php/am/documents/view/2200>
- «Էքստենն (դրսեկության) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը» հաստատելու և 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 39-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=63231>
- «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները» (2019-2020 ուսումնական տարվա համար) հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ 490-Ա/2 հրաման
<http://bit.do/fqwcv>
- «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները» (2018-2019 ուսումնական տարվա համար) հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1398-Ա/2 հրաման
<http://bit.do/fqwbP>
- «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին հիմնական հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121184>
- «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին միջնակարգ հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 251-Ա/2 հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121185>

- «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին և ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107555>
- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 336-Լ հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի հուլիսի 4-ի թիվ 198-Լ հրաման
<http://moj.am/legal/view/article/1237>
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1348-Ա/Ք հրամանի հավելված, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույց»
https://vle.sci.am/moodle/pluginfile.php/3601/block_html/content/Metodakan_ux_ecuyc.pdf

Կանոնադրություններ

- «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կանոնադրություն
http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_6324342820_Ajakcutyun_datapart_yalin.pdf
- «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրություն
<http://bit.do/fqv7R>
- «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրություն
<http://lawinstitute.am/2018/wp-content/uploads/2019/04/KANONADRUTYUN.pdf>

Վերլուծություններ, զեկույցներ, հետազոտություններ

- «Կանայք ազատագրվման վայրերում. ձեռնարկ գենդերային զգայուն մշտադիտարկման համար», Միջազգային բանտային բարեփոխումներ, 2015 թ.
http://www.csi.am/sites/default/files/library/women_final.pdf

- «Կանանց իրավունքները «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հկ, Երևան, 2015 թ.
<http://bit.do/fnesm>
- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2016 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2017թ.
<http://bit.do/fneHr>
- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն», Երևան, 2019 թ.,
http://pmg.am/images/Ditordakan_Zekuyc_Book_2019_for_Web.pdf
- «Հայաստանի Հանրապետության դատարանների 2017-2018թթ. գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծություն»
<http://bit.do/fndMR>
- «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց», Երևան, 2019 թ.
<https://ombuds.am/images/files/159e14f47f7029294110998e75a5433f.pdf>
- «Հայաստանի Հանրապետության Պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում», ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018թ.
<https://www.ombuds.am/images/files/1592b28948bf827457fc37b3cf0a0357.pdf>
- «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի առանձնահատկությունները ՀՀ-ում», Երևան, 2016թ.
http://pmg.am/images/paymanakan_vaxajamket_azatum.pdf
- «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018թ.
<https://ombuds.am/images/files/463afd4660f9e9d2f82014e6147e0bc5.pdf>

Էլեկտրոնային հրապարակումներ (այդ թվում՝ էլեկտրոնային մամուլի)

- «Ազատագրված անձանց զբաղվածությունը՝ վերասոցիալականացման և հանցագործությունների կանխարգելման միջոց», «labour.am» կայք
<http://bit.do/fqwo8>

- «Ազատագրկվածների կրթության (այդ թվում՝ մասնագիտական) ապահովման խնդիրները ՀՀ քրեակատարողական համակարգում», Քաղաքականության համառոտագիր, «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի» հայաստանյան գրասենյակ
<http://bit.do/foCzF>
- «ԱԺ-ն ամբողջությամբ ընդունեց «օրենքով գողերի» վերաբերյալ օրենքի նախագիծը», «Արմենպրես»
<https://armenpress.am/arm/news/1002175.html>
- «Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները. վիճակագրական տվյալներ», Գրիշա Բալասանյան
http://advocates.am/images/journal_erit_khorh/3_2014/2-3_2014_anchapahas.pdf
- «Անչափահասների պատժի առանձնահատկությունները ՀՀ-ում», Աննա Մարգարյան
http://www.yasu.am/files/05A_Margaryan.pdf
- «Արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն»
<http://moj.am/legal/view/article/1263>
- «Արդարադատության նախարարության կոչը՝ զբաղվածության խնդիր ունեցող համաներմամբ ազատված անձանց»
<http://moj.am/article/2196>
- «Արտակ Ջեյնայան. Մեծ համաներում է լինելու», Ազատություն ռադիոկայան
<https://www.azatutyun.am/a/29553128.html>
- «Դատապարտյալների զբաղվածությունը և կրթությունը խթանելուն ուղղված առաջարկություններ», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ
<http://csi.am/hy/point-of-view/2017/01/22/probation>
- «Դատարանը ցմահ ազատագրկման դատապարտված Կարեն Օգանեսյանին պայմանական ազատեց պատժից»
<https://hetq.am/hy/article/97119>
- «Դիտորդների խումբը ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկել է քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ի կրթական կենտրոնի վերաբացման ուղղությամբ»
<http://pmg.am/hy/news/successful-cases/2018-10-01-07-46-39>
- «ԼԳԲՏ ազատագրկված անձանց պահման պայմանները. Լուսանկարներ»
<http://pmg.am/hy/news/successful-cases/2019-03-05-10-06-01>
- «Կալանավորված անձանց երկարատև տեսակցության իրավունքը պատշաճ չի ապահովվում. Պաշտպանն ամփոփում է ՔԿՀ-ներ չհայտարարված այցերի արդյունքները»

<https://www.ombuds.am/am/site/ViewNews/928>

- «Կապն արտաքին աշխարհի հետ. իրավունք, ոչ թե արտոնություն»
<http://bit.do/fnote>
- «Համաներման մասին օրենքի անհրաժեշտության և սկզբունքների մասին»,
«Հելսինկյան ասոցիացիա» հկ
<http://bit.do/fnwfU>
- «Հանցագործ աշխարհում նույնասեռական տերմինը խարան է ամբողջ
կյանքի համար. ԼԳԲՏ ազատագրկված անձանց խնդիրները Հայաստանի
բանտերում»
<https://hetq.am/hy/article/102685>
- «ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ում առկա խնդիրների արդյունավետ
կարգավորումը Դիտորդների խմբի ուշադրության կենտրոնում է»
<http://pmg.am/hy/news/successful-cases/2019-08-05-09-17-13>
- «ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն չունի երկարատև տեսակցության
սենյակներ»
<http://pmg.am/hy/news/successful-cases/2019-09-04-08-35-26>
- ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2018 թվականի ընթացքում
իրականացրած գործունեության վերաբերյալ հաշվետվություն
<http://bit.do/fqxj>
- ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2019 թվականի 1-ին կիսամյակի
ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ հաշվետվություն
<http://bit.do/fqxih>
- «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե
https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_33.pdf
- «ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ներդրման վերաբերյալ հայեցակարգ»
<http://www.justice.am/legal/view/article/598>
- «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ
օրենքի նախագծի (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ ՀՀ
կառավարության առաջարկություն
http://www.parliament.am/draft_history.php?id=10440&Suggestion=1021&do=showSuggestion&lang=arm
- Միջազգային իրավական փաստաթղթեր, «Խոշտանգումների
կանխարգելման ասոցիացիա»
<https://www.apt.ch/detention-focus/>
- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում երեք ազատագրկված անձանց կողմից
ինքնավնասում կատարելու դեպքի առթիվ քրեական գործ չի հարուցվել
<http://pmg.am/hy/news/successful-cases/2018-04-27-11-01-25>
- «Ցմահ դատապարտյալ Սողոմոն Քոչարյանը ազատ արձակվեց»
<https://www.civilnet.am/news/2015/10/22/soghomon-kocharyan-released/280101>

- «Ցմահ դատապարտյալ Վահագն Մարուքյանը ազատ արձակվեց 25 տարի ազատազրկված լինելուց հետո»
<https://iravaban.net/209414.html>
- «Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց տեսազանգի միջոցով հաղորդակցվելու հնարավորություն է ստեղծվում»
<http://www.moj.am/article/2002>
- **Անգլերեն գրականություն**
- “Animal Programs in Prison: A Comprehensive Assessment”, G. A. Furst, Boulder, Colorado, First Forum Press, 2011
- “Classification for effective rehabilitation: rediscovering psychology”, D. A. Andrews, J. Bonta and R. D. Hoge, Criminal Justice and Behavior, vol. 17, No. 1, 1990
- “Evaluating the Effectiveness of Correctional Education - A Meta-Analysis of Programs that Provide Education to Incarcerated Adults”, RAND Corporation, 2013
https://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR200/RR266/RAND_RR266.sum.pdf
- “Factors linked to reoffending: a one-year follow-up of prisoners who took part in the Resettlement Surveys 2001, 2003 and 2004”, Research Summary 5, Chris May, Nalini Sharma and Duncan Stewart , United Kingdom, Ministry of Justice, 2008
http://www.antonioacasella.eu/nume/May_Sharma_Stewart_2008.pdf
- “Introductory Handbook on the Prevention of Recidivism and the Social Reintegration of Offenders”, United Nations Office on Drugs and Crime, Vienna, 2018
https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/18-02303_ebook.pdf
- Norwegian Ministry of Justice and Public Security, Correctional Services Department, February 2012
- Prison Arts Foundation, <http://www.prisonartsfoundation.com/>



«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Հեռախոս՝ +374 55 155 300

Էլ.-փոստ՝ legalinitiatives.ngo@gmail.com

Ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/legalinitiativesngo/>